# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

3 (105). 2020



«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Հայաստանի Հանրապետության Վարչապետ *Նիկոլ Փաշինյանի* և Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահ *Միխայիլ Միշուստինի* հանդիպումը Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակներում

Երևան, 2020 թ. հոկտեմբերի 9



Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Ֆրանսիայի Հանրապետության խորհրդարանի պատգամավորական պատվիրակության հետ

Երևան, 2020 թ. հոկտեմբերի 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

**3** (105). **2020**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Տավարածյան Գ. Վ.** (նախագահ)
**Չիլինգարյան Դ. Ս.** (գլխավոր խմբագիր)
**Աբրահամյան Կ. Ա.**
**Ալթունյան Գ. Ռ.**
**Այդինյան Ռ. Ա.**
**Այվազյան Լ. Գ.**
**Ապերյան Վ. Վ.**
**Ասատրյան Ձ. Դ.** (գլխ. խմբագրի տեղակալ)
**Բալայան Գ. Կ.**
**Գասպարյան Օ. Վ.**
**Խաչատրյան Տ. Վ.**
**Ղամբարյան Մ. Ա.**
**Մակարյան Ա. Ա.**
**Մարգարյան Ռ. Պ.**
**Մարտիկյան Ա. Մ.**
**Մարտիրոսով Լ. Ա.**
**Շահնազարյան Թ. Ն.**
**Պողոսյան Ա. Ա.**
**Սիմոնյան Ս. Վ.**
**Սմբատյան Ն. Վ.**
**Վարդանյան Ա. Գ.**
**Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
**Քոչարյան Տ. Տ.**
**Օհանյան Ս. Ռ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Վարչապետ *Նիկոլ Փաշինյանի* ուղերձը . . . . . . . . . . . . . . . . 7

ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ *Օնիկ Գասպարյանի* ուղերձը . . . . . . . . . . . . . . . . . . 10

### ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 75-ԱՄՅԱԿԸ

*Է. Գ. Մինասյան,* Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին. 1939–1945 թթ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 13

*Ա. Ա. Կորաբելնիկով,* Խորհրդային ռազմարվեստը Հայրենական մեծ պատերազմի տարիներին. զարգացմամբ նրա վերաճումը հաղթանակի արվեստի . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 27

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Ն. Ա. Համբարձումյան,* Ղարաբաղյան հակամարտության լուսաբանման որոշ պրոբլեմներ էթնոքաղաքականության լույսով . . . . . . . . . . . . . . . . 47

### ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Վ. Ա. Պետրոսյան,* Ադրբեջանի Հանրապետության ու Քրդստանի շրջանային կառավարության շփումները և Քրդստանի անկախության հարցը՝ Ադրբեջանի հասարակական-քաղաքական քննարկումներում . . . . . . . . . . . . . . . . . 59

### ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Դ. Մ. Մանասյան,* Համաշխարհային քաղաքականության «ծանրության կենտրոնի» տեղաշարժը արևմուտքից դեպի արևելք. աշխարհաքաղաքական գնահատումներ ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից . . . . . . . . . . . . . . . . 75

*Մ. Մ. Մարգարյան, Ռ. Գ. Ավետիսյան,* Խաղերի տեսությունը՝ որպես ինքնորոշումային հակամարտությունների վերլուծության մեթոդ. Կատալոնիայի օրինակով . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 90

## ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

*Ս. Գ. Գալստյան, Ա. Ս. Քոչարյան, Հ. Ա. Հակոբյան, Ա. Ա. Տերտերյան, Մ. Լ. Զոլյան,* Որոշ խորհրդածություններ նոր կորոնավիրուսային վարակի վերաբերյալ . . . 105

## ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Ն. Բ. Ենիկոլոպով,* Պելոպոնեսյան պատերազմում կողմերի ռազմավարությունների համեմատական վերլուծություն . . . 115

## ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Դ. Մ. Չիլինգարյան և ուրիշներ,* Համարի բառարան . . . 126



## ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*Ն. Հ. Առաքելյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան,* կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, *Բ. Ն. Հարությունյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Մ. Հարությունյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Ա. Հ. Մանթաշյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Մ. Միրիջանյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Գ. Սահակյան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,* *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Սիսակյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Տ. Տ. Քոչարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

## ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*Գ. Վ. Տավարածյան,* գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ, *Տ. Տ. Քոչարյան,* գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ–ԱՌՀԻ-ի պետ, *Ս. Ա. Սուջյան,* աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ, *Հ. Հ. Հովհաննիսյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**№ 3** (105)**. 2020**
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Таварацян Г. В.* (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Абрамян К. А., Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алтунян Г. Р., Аперян В. В., Асатрян З. Д.* (зам. гл. редактора), *Балаян Г. К., Варданян А. Г., Гамбарян М. А., Гаспарян О. В., Кочарян Т. Т., Макарян А. А., Маргарян Р. П., Мартикян А. М., Мартиросов Л. А., Оганян С. Р., Погосян А. А., Симонян С. В., Смбатян Н. В., Тер-Григорьянц Н. Г., Хачатрян Т. В., Шахназарян Т. Н.*

# СОДЕРЖАНИЕ

Обращение Премьер-министра Республики Армения *Никола Пашиняна* . . . . . . . . . . 7

Обращение Начальника ГШ ВС РА генерал-лейтенанта *Оника Гаспаряна* . . . . . . . . . . 10

**75-ЛЕТИЕ ВЕЛИКОЙ ПОБЕДЫ**

*Э. Г. Минасян.* Участие армянского народа во второй мировой войне 1939–1945 гг. . . . . . . . . . . 13 (24)*

*А. А. Корабельников.* Советское военное искусство в годы Великой Отечественной войны: эволюция его в искусство победы 27 (36)

**ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ**

*Н. А. Амбарцумян.* Некоторые проблемы освещения Карабахского конфликта в свете этнополитики . . . . . . . . . . 47 (57)

**РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ**

*В. А. Петросян.* Сношения между Азербайджанской Республикой и Региональным правительством Курдистана и вопрос независимости Курдистана в общественно-политическом дискурсе Азербайджана . . . . . . . . . . 59 (73)

**ПОЛИТОЛОГИЯ**

*Д. М. Манасян.* Смещение «центра тяжести» мировой политики с запада на восток: геополитические оценки в ракурсе безопасностных интересов РА . . . . . . . . . . 75 (102)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

*М. М. Маргарян, Р. Г. Аветисян.* Теория игр как метод анализа самоопределительных конфликтов (на примере Каталонии) . . 90 (103)

**ВОЕННАЯ МЕДИЦИНА**

*С. Г. Галстян, А. С. Кочарян, А. А. Акопян, А. А. Тертерян, С. Л. Золян.* Некоторые суждения о новой коронавирусной инфекции . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 105 (113)

**ВОЕННАЯ ИСТОРИЯ**

*Н. Б. Ениколопова.* Сопоставительный анализ стратегий сторон в Пелопоннесской войне . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 115 (124)

**ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*Д. С. Чилингарян и др.* Словарь номера . . . . . . . . . . . . . . . . . 126 (128)

**НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*А. Г. Авагян*, доктор исторических наук, профессор; *Н. У. Аракелян*, академик НАН РА; *Л. С. Арзуманян*, доктор филологических наук; *Б. Н. Арутюнян*, доктор медицинских наук, профессор; *В. М. Арутюнян*, академик НАН РА; *Г. Е. Багдасарян*, академик НАН РА; *С. А. Галстян*, доктор филологических наук, профессор; *С. Г. Галстян*, доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян*, академик НАН РА; *К. С. Даниелян*, кандидат биологических наук, доктор географических наук; *Г. С. Котанджян*, доктор политических наук, профессор; *Т. Т. Кочарян*, доктор политических наук, профессор; *А. А. Манташян*, академик НАН РА; *М. М. Маргарян*, доктор политических наук, профессор; *М. В. Маркосян*, доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян*, член-корреспондент НАН РА; *Э. Г. Минасян*, доктор исторических наук, профессор; *М. М. Мириджанян*, доктор медицинских наук, профессор; *В. Г. Саакян*, кандидат физико-математических наук; *Р. А. Сафрастян*, академик НАН РА; *О. Я. Саядян*, доктор географических наук, профессор; *А. Г. Симонян*, член-корреспондент НАН РА; *А. С. Сисакян*, доктор медицинских наук, профессор; *Ю. М. Суварян*, академик-секретарь Отделения арменоведения и общественных наук НАН РА, член Президиума НАН РА

**ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:**

*Г. В. Тавацян*, генерал-майор, начальник НИУО МО РА; *Т. Т. Кочарян*, полковник, доктор политических наук, профессор, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке–начальник ИНСИ; *С. А. Суджян*, кандидат географических наук, доцент, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА; *Д. М. Манасян*, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований НИУО МО РА; *Г. О. Оганисян*, полковник, кандидат военных наук, старший преподаватель Центра исследований стратегического лидерства и управления НИУО МО РА

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**

DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

**№ 3** (105)**. 2020**

Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Tavaratsyan G. V.* (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Abrahamyan K. A., Altunyan G. R., Aperyan V. V., Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G., Balayan G. K., Gasparyan O. V., Ghambaryan M. A., Idinyan R. A., Khachatryan T. V., Kocharyan T. T., Makaryan A. A., Margaryan R. P., Martikyan A. M., Martirossov L. A., Ohanyan S. R., Poghosyan A. A., Shahnazaryan T. N., Simonyan S. V., Smbatyan N. V., Ter-Grigoryants N. G., Vardanyan A. G.*

# CONTENTS

Address to the Nation by Prime Minister *Nikol Pashinyan* . . . . . . . 7

Message of Chief of the General Staff of the RA Armed Forces, Lieutenant General *Onik Gasparyan* . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 10

**THE 75TH ANNIVERSARY OF THE GREAT VICTORY**

*E. G. Minasyan.* The participation of the Armenian people in World War 2: 1939–1945 . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 13 (25)*

*A. A. Korabelnikov.* The Soviet art of war in the years of the Great Patriotic War: its evolution into the art of victory . . . . . . . . . . . . . . . . . 27 (44)

**INFORMATION SECURITY**

*N. A. Hambardzumyan.* Some problems of covering the Nagorno Karabakh conflict in the light of ethnopolitics . . . . . . . . . . . . . . . . . . . 47 (58)

**REGIONAL SECURITY**

*V. A. Petrosyan.* Relations between the Republic of Azerbaijan and the Kurdistan Regional Government along with the issue of independence of Kurdistan in the Azerbaijani sociopolitical discourse . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 59 (73)

**POLITICAL SCIENCE**

*D. M. Manasyan.* The shift in the gravity center of world politics from West to East: geopolitical assessments in the perspective of the RA security interests . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 75 (103)

*M. M. Margaryan, R. G. Avetisyan.* The game theory as a method of analysis of self-determination conflicts (the case of Catalonia) . . 90 (104)

---

* Numbers in brackets mean the page of the text in English.

**MILITARY MEDICINE**

*S. G. Galstyan, A. S. Kocharyan, H. A. Hakobyan, A. A. Terteryan, S. L. Zolyan.* Some judgments on the Novel Coronavirus Infection . 105 (114)

**MILITARY HISTORY**

*N. B. Yenikolopova.* Comparative analysis of strategies of the parties to the Peloponnesian War . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 115 (124)

**MILITARY TERMINOLOGY**

*D. S. Chilingaryan and others.* Volume Dictionary . . . . . . . . . 126 (129)

**ACADEMIC-ADVISORY COUNCIL:**

*A. G. Avagyan*, Doctor of History, Professor; *N. H. Arakelian*, Full Member, NAS, RA; *L. S. Arzumanyan*, Doctor of Philology; *G. Y. Baghdassarian*, Full Member, NAS, RA; *K. S. Danielyan*, PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan*, Doctor of Philology, Professor; *S. G. Galstyan*, Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian*, Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan*, Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Harutyunyan*, Full Member, NAS, RA; *T. T. Kocharyan*, Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian*, Doctor of Political Sciences, Professor; *A. H. Mantashian*, Full Member, NAS, RA; *M. M. Margaryan*, Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan*, Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan*, Corresponding Member, NAS, RA; *E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Mirijanian*, Doctor of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan*, Full Member, NAS, RA; *V. G. Sahakyan, PhD in Physical and Mathematical Sciences; Hov. Y. Sayadyan*, Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan*, Corresponding Member, NAS, RA; *H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan*, Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences, NAS, RA, Member of the Presidium, NAS, RA

**DEFENSE-ACADEMIC COUNCIL:**

*G. V. Tavaratsyan*, MG, Head, NDRU, MOD, RA; *T. T. Kocharyan*, Col, Doctor of Political Sciences, Professor, Deputy Head in Education and Research – Head of INSS, NDRU, MOD, RA; *S. A. Sujyan*, PhD in Geography, Associate Professor, Col (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA; *D. M. Manasyan*, PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA; *H. H. Hovhannisyan*, Col, PhD in Military Sciences, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ** ՈՒՂԵՐՁԸ



*Սիրելի՛ ժողովուրդ,*

*Հայաստանի Հանրապետության հպա՛րտ քաղաքացիներ,*

*Արցախի Հանրապետության հպա՛րտ քաղաքացիներ,*

*Սփյուռքի հպա՛րտ հայություն:*

*Արդեն գործնականում մեկ շաբաթ հայ ժողովուրդը Արցախում և Հայաստանում դիմակայում է ադրբեջանա-թուրքական ահաբեկչական հարձակմանը: Հարձակման մասշտաբները աննախադեպ են, թշնամին գրոհում է այնպիսի ծավալներով, որ, ըստ ռազմական փորձագետների, 21-րդ դարում հաճախ չի պատահել աշխարհի որևէ հատվածում, հակամարտության գոտիներից որևէ մեկում:*

*Հարյուրավոր տանկեր և հետևակի մարտական մեքենաներ, հազարավոր արկեր և հրթիռներ, տասնյակ ինքնաթիռներ, հարյուրավոր անօդաչու թռչող սարքեր և տասնյակ հազարավոր հետևակ արդեն մեկ շաբաթ գրոհում են Արցախի Պաշտպանության բանակի դիրքերը շփման գծի ամբողջ երկայնքով:*

*Նախորդ օրվա մեր վերլուծությունները ցույց տվեցին, որ Արցախի Պաշտպանության բանակի մեկ մարտական դիրքի վրա գրոհի է նետվում մոտավորապես 150-ից 200 թշնամական զինվոր: Ընդ որում, այսպիսի գրոհները կրկնվում են օրվա մեջ մի քանի անգամ, ուղեկցվում են հրթիռային և ավանդական հրետանու, զրահատեխնիկայի, օդանավերի, անօդաչու թռչող սարքերի աջակցությամբ: Մեր զինվորականների վկայությամբ, բացի ադրբեջանական բանակի ստորաբաժանումներից, գրոհներին ներգրավված են սիրիացի վարձկաններ ու ահաբեկիչներ, թուրքական բանակի հատուկ ջոկատայիններ:*

*Մեր տեղեկություններով՝ թուրքական բանակի շուրջ 150 բարձրաստիճան զինվորականներ գտնվում են Ադրբեջանի Զինված ուժերի տարբեր օղակների հրամանատարական կետերում և ղեկավարում են ռազմական գործողությունները:*

*Այս նկարագրությունն ինքնին պիտի վկայի, թե ինչպիսի ծանր մարտեր են տեղի ունենում առաջագծում: Արդեն մեկ շաբաթ Արցախի Պաշտպա-*

*նության բանակը, մեր կամավորական ջոկատները կենաց և մահու կռիվ են տալիս Արցախի սրբազան հողի վրա: Այս պահի դրությամբ արդեն ունենք բազմաթիվ մարդկային կորուստներ՝ զինվորական և քաղաքացիական, շարքից դուրս է եկել մեծ թվով զինտեխնիկա, բայց հակառակորդը այդպես էլ ի վիճակի չի եղել լուծել որևէ ռազմավարական խնդիր:*

*Աներևակայելի է այն տոկունությունը, որով մեր զինվորները, սպաները, գեներալներն ու ազատամարտիկները կանգնած են հրոսակային այս հարձակմանը հանդիման: Մեր զինվորներն ու կամավորները չեն խնայում ոչինչ և հերոսության աներևակայելի օրինակներ են ցույց տալիս: Այսօր մարտի դաշտում հակառակորդի հարյուրավոր ոչնչացված զրահատեխնիկա կա, տասնյակ օդանավեր և ուղղաթիռներ, հարյուրավոր անօդաչու թռչող սարքեր, հակառակորդի մարդուժի կորուստները անցնում են մի քանի հազարը:*

*Այս պահի դրությամբ էլ թեժ մարտերը շարունակվում են առաջագծի տարբեր հատվածներում, որոշ տեղերում Պաշտպանության բանակի զորքերը գտնվում են բավական ծանր դրության մեջ, որոշ տեղերում վստահորեն տիրապետում են իրավիճակին:*

*Սիրելի՛ հայրենակիցներ, եղբայրներ և քույրեր:*

*Մենք ապրում ենք մեր հազարամյա պատմության թերևս ամենավճռորոշ փուլում: Ադրբեջանաթուրքական հրոսակախմբերը միայն ռազմական կամ ռազմաքաղաքական հարց լուծելու նպատակ չէ, որ հետապնդում են: Նրանք միայն Ղարաբաղի կամ Ղարաբաղի հարցի ետևից չէ, որ եկել են: Նրանք չեն եկել միայն տարածքներ, գյուղեր կամ քաղաքներ գրավելու նպատակով: Նրանց նպատակը հայությունն է, նրանց նպատակը Հայոց ցեղասպանության իրենց քաղաքականության շարունակությունն է, և նրանք խնդիր են դրել Հայոց ցեղասպանությունը շարունակելու այսօր:*

*Բայց այսօր, այստեղ ուզում եմ ասել, որ հիմա այլևս հայը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Արցախի Հանրապետության քաղաքացին, Դեր Զորի ճամփորդը չէ: Այսօր, քան երբևէ, մենք համակված ենք մեր ինքնությունը, մեր հայրենիքը, մեր իրավունքը պաշտպանելու անխորտակելի վճռականությամբ:*

*Դրանում համոզվել եմ նաև երեկ երեկոյան հեռախոսազրույցներ ունենալով Արցախի Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանների հրամանատարների, դիվիզիաների հրամանատարների, անգամ առաջագծում գտնվող մի շարք շարքայինների, սպաների և ենթասպաների հետ:*

*Նրանց ասել եմ, որ սիրում եմ բոլորին, հպարտանում եմ իրենցով, խոնարհվում եմ իրենց առաջ: Նրանց ասել եմ, որ հայ ազգը, որ նահապետ և կենդանի հերոսների շնորհիվ ճաշակել է հաղթանակի անզուգական համը, այլևս համաձայն չէ որևէ ուրիշ ճակատագրի:*

*Հաղթանակը, միայն ու միայն հաղթանակը, բացառապես հաղթանակն է այն ավարտը, որ մենք պատկերացնում ենք այս պայքարի վերջում: Այսօր արդեն՝ ժամեր առաջ, Արցախի Պաշտպանության բանակը իրականացրել է ակտիվ հակահարձակողական գործողություններ և հասել էական հաջողությունների՝ ջախջախելով թշնամական մի քանի հատուկ նշանակության ստորաբաժանումներ:*

*Մեր թշնամին, որքան էլ վարձկան հրոսակների առատ հոսք ունենա, չի կարող մրցակցել ապրելու և հաղթելու հայկական կամքի հետ, ու մենք համատեղ ջանքերով պիտի կոտրենք հարձակվող ոսոխի ողնաշարը, որ նա այլևս երբե՛ք, այլևս երբե՛ք իր ոճրագործ ձեռքերը չպարզի մեր ուղղությամբ, իր արյունոտ հայացքը չուղղի մեր հայրենիքին:*

*Սիրելի՛ ժողովուրդ,*

*Հայաստանի Հանրապետության հպա՛րտ քաղաքացիներ,*

*Արցախի Հանրապետության հպա՛րտ քաղաքացիներ,*

*Սփյուռքի հպա՛րտ հայություն.*

*Սա մի նոր Սարդարապատ է, և մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է ինքը իրեն նվիրել մեկ նպատակի, և այդ նպատակի անունն է՝ հաղթանակ: Այդ նպատակի անունն է հաղթանա՛կ:*

*Եվ մեզնից յուրաքանչյուրը ամեն վայրկյան պիտի պատրաստ լինի գտնվել այդ հաղթանակի առաջագծում: ՈՒ մենք կհաղթենք: ՈՒ մենք անպայմանորեն կհաղթենք: ՈՒ չկասկածեք՝ մենք անպայմանորեն կհաղթենք:*

*Եվ ուրեմն՝*

*Կեցցե՛ Ազատությունը,*

*Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը,*

*Կեցցե՛ Արցախի Հանրապետությունը,*

*Եվ կեցցե՛ն մեր երեխաները, որ ապրելու են Ազատ և Երջանիկ Հայաստանում:*

*Փա՛ռք ընկած հերոսներին:*

*Փա՛ռք հայոց հաղթական բանակին:*

*Փա՛ռք հաղթական հայ ժողովրդին:*

# ՀՀ ԶՈՒ-Ի ԳՇ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ **ՕՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ*** ՈՒՂԵՐՁԸ



*Հայոց փառապանծ բանակի գեներալներ, սպաներ, սերժանտներ, զինվորներ, իմ զինակից ընկերներ: Ժամն է ևս մեկ անգամ հաստատելու հայոց զինական ուժի փառքը: Լավագույն հայորդիների հազարավոր կյանքերի և արյան գնով վաստակած մեր ազատությունն ու անկախությունը նորից վտանգված է:*

*Ադրբեջանը, ոգեկոչվելով մեր ազգի դարավոր թշնամու՝ Թուրքիայի բազմակողմանի աջակցությունից, չի հաշտվել 2016 թ. ապրիլին Արցախում և 2020 թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելքում իր կողմից սադրած մարտական գործողություններում ջախջախիչ պարտություն կրելու հետ ու կրկին պատերազմ է սանձազերծել: Պաշտպանության բանակի առաջնագծի ողջ երկայնքով ներկայումս իրականացնում է հրթիռահրետանային և ավիացիոն հարվածներ՝ զուգահեռ հրետակոծության ենթարկելով քաղաքացիական բնակավայրերը:*

*Պաշտպանության բանակի ստորաբաժանումները, հակառակորդին զգալի կորուստներ պատճառելով, հաջողությամբ խափանում են նրա ծրագրերը:*

*Իմ զինակից ընկերներ:*

*Կոչ եմ անում շարունակել պատվով կատարել Հայրենիքի պաշտպանի սուրբ առաքելությունը՝ ապավինելով մեր կուռ բազկի զորությանը, արհամարհելով վտանգն ու թշնամուն, մարտնչելով անմնացորդ նվիրումով ու անձնազոհությամբ:*

*Հայոց բանակի քաջարի՛ մարտիկներ, եկել է ժամանակը ցույց տալու Ձեր ոգու արիությունը, բազկի ուժը և անսահման ապելությունը քոչվոր ու անհայրենիք քարանձավային ցեղի մնացորդների նկատմամբ:*

*Դուք փառապանծ ու փառահեղ հաղթանակներ կերտած բանակի զինվորներ եք:*

*Լինենք արժանի հայոց զենքի և անվան փառքին:*

*Մեր գործն արդար է, մենք պաշտպանում ենք մեր պապերի սուրբ հողը, հայկական տունը, մեր պատիվն ու մեր ժողովրդի՝ ազատ երկրում խաղաղ ապրելու իրավունքը:*

*ՄԵՆՔ ՀԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ:*

---

* ՀՀ Նախագահի 2020 թ. հոկտեմբերի 15-ի հրամանագրով ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ Օնիկ Գասպարյանին շնորհվել է գեներալ-գնդապետի զինվորական կոչում:

# ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ

# 75-ԱՄՅԱԿԸ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ. 1939–1945 ԹԹ.

*Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, «Հայկական բանակ» ՌԳՀ գիտախորհրդատվական խորհրդի անդամ*



Երկրորդ համաշխարհային պատերազմը, որն իրավամբ մարդկության պատմության մեծագույն աղետներից է, խլեց 60 միլիոնից ավելի մարդկային կյանքեր, փլատակների վերածեց անթիվ-անհամար բնակավայրեր: Պատերազմին մասնակցեցին 57 պետություն, որոնց բնակչության թիվը կազմում էր ամբողջ մարդկության մոտ 80 %-ը[1]: Մարտական գործողությունները մղվել են ցամաքում, ծովում և օդային տարածությունում՝ ընդգրկելով ամբողջ մայրցամաքային Եվրոպան, Ասիայի Արևելյան և Հարավարևելյան տարածաշրջանները, Աֆրիկայի հյուսիսը, բոլոր օվկիանոսների ջրատարածքները՝ 40 պետությունների տարածքում[2], իսկ բանակներ զորակոչվել են շուրջ 110 մլն աշխատունակ մարդ[3]: Այս պատերազմը միակն է, որում կիրառվել է ատոմային ռումբ:

Ընդունված է երկրորդ համաշխարհային պատերազմը բաժանել հետևյալ շրջանների.

*Առաջին շրջանը* (1939 թ. սեպտեմբեր–1941 թ. հունիս) ներառում է պատերազմի սկիզբը, որն ազդարարվեց Լեհաստանի տարածք գերմանական զորքերի ներխուժմամբ, ապա Արևմտյան Եվրոպայում ռազմական գործողությունների ծավալումը, ինչպես նաև Հյուսիսաֆրիկյան ռազմարշավի սկիզբը: Սա այն շրջանն է, երբ «Ատլանտյան օվկիանոսի ամբողջ ափամերձ տարածքը՝ Նարվիկից մինչև ֆրանս-իսպանական սահմանը գտնվում էր գերմանացիների ձեռքում: Հիտլերի կայսրությունը սփռվում էր արևմուտքում Բրեստից մինչև Բրեստն արևելքում: Դա նրա փառավորության գագաթնակետն էր: Հիտլերի բոլոր նախկին հակառակորդները, Անգլիայից բացի, ջախջախված էին»[4]:

---

[1] Տես «Ненужная война: Вторая мировая война в цифрах и фактах». «Специальный проект ТАСС» (https://tass.ru/spec/wwii); «Вторая мировая война 1939-1945». «Большой Энцикопедический Словарь» (https://www.vedu.ru/bigencdic/12434/):

[2] Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3: Ե., 1977, էջ 633:

[3] Տես *Ю. Алексеев.* Вторая мировая война: история и итоги (к 75-летию начала Второй мировой войны). «Ход войны» (http://mil.ru/winner_may/history/more.htm?id=11982000@cmsArticle): Պետք է նշել, որ այս թիվը տատանվում է 57-ից 74-ը: Մենք ընտրել ենք այս աղբյուրը, որովհետև այստեղ և «Կոմերսանտում» թվերը համընկնում են, ընդմին նշված է յուրաքանչյուր մասնակից պետության անվանումը:

[4] *З. Вестфаль.* Роковой год (1939–1940). «Роковые решения Вермахта. Воспоминания немецких полководцев». М., 2001, с. 32.

*Երկրորդ շրջանը* (1941 թ. հունիս–1942 թ. նոյեմբեր) բնութագրվում է ԽՍՀՄ տարածք գերմանա-ֆաշիստական զորքերի ներխուժմամբ, Ասիա-խաղաղօվկիանոսյան ՌԳԹ-ում մարտական գործողությունների սկիզբ առնելով, «կայծակնային» պատերազմի ծրագրերի ձախողմամբ, երբ ցաքուցրիվ արվեց գերմանական բանակի անպարտելիության առասպելը:

*Երրորդ շրջանում* (1942 թ. նոյեմբեր–1943 թ. դեկտեմբեր) պատերազմի ընթացքում կատարվեց արմատական բեկում, սպառեց իր հարձակողական ներուժը, ֆաշիստա-միլիտարիստական բլոկը զիջեց նախաձեռնությունը:

*Չորրորդ շրջանում* (1944 թ. հունվար–1945 թ. մայիս) տեղի ունեցան՝ ֆաշիստական բլոկի ջախջախում, նրա զորքերի համատարած վտարում ԽՍՀՄ սահմաններից, երկրորդ ճակատի ստեղծում (դաշնակիցների ափհանում Նորմանդիայում), Եվրոպայի ստրկացած ժողովուրդների ազատում ֆաշիստական լծից, հիտլերյան Գերմանիայի լիակատար կործանում և նրա անվերապահ կապիտուլացում:

*Հինգերորդ շրջանը* (1945 թ. մայիս–1945 թ. սեպտեմբեր) նշանավորեց միլիտարիստական Ճապոնիայի ջախջախումը, Ասիայի ժողովուրդների ազատագրումը ճապոնական բռնազավթումից, երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը[5]:

Սույն պարբերացումը կատարվում է պատճառական կապի և երևույթների փոխպայմանավորվածության հիման վրա: Ընդսմին յուրաքանչյուր շրջանում որպես բաղադրյալ մասեր առանձնացվում են փուլեր, որոնք բնութագրվում են պատերազմի ընթացքում և ռազմաքաղաքական իրադրությունում տեղի ունեցած էական փոփոխություններով[6]:

Այս աշխարհակործան պատերազմում Հայաստանը, բարեբախտաբար, ռազմական գործողությունների թատերաբեմ չդարձավ: Պատերազմի մահաբեր ալիքը, բախվելով Կովկասյան լեռներում ամրացած Կարմիր բանակի միավորումներին և դրանց կազմում հայկական դիվիզիաներին, ընկրկեց՝ մեր երկիրը զերծ պահելով անխուսափելի թվացող ավերածություններից ու կոտորածից: Սակայն ազգությամբ հայ բազում մարտիկներ ռազմական գործողությունների բոլոր թատերաբեմերում տարբեր պետությունների զինված ուժերի կազմում, բռնազավթված եվրոպական պետությունների տարածքներում բռնկած դիմադրական շարժումների ու կազմավորված պարտիզանական ջոկատների շարքերում մասնակցեցին այս մեծ պայքարին և իրենց ու հայ ազգի անունը դրոշմեցին պատմության էջերին:

Մենք, իհարկե, լավ ենք հասկանում մեր առջև դրված խնդրի հույժ բարդությունը: Չէ՞ որ ֆաշիզմի դեմ պայքարում կանոնավոր բանակների կազմում, Դիմադրության շարժումների շարքերում, պարտիզանական ջոկատներում իրենց սխրագործություններով աչքի ընկած հայերի միայն անունների թվարկումը կզբաղեցներ տասնյակ, եթե ոչ հարյուրավոր էջեր: Ուրեմն մենք այս ոչ ծավալուն հոդվածով չենք հավակնում սպառիչ կերպով

[5] Տես «История второй мировой войны». В 12-и томах, т. 1. М., 1973, с. XXVI:

[6] Տես նույն տեղում, էջ XXV:

ներկայացնելու հայության պայքարը, այլ միայն՝ ուրվագծելու, որպեսզի ընթերցողը կարողանա ընդհանուր պատկերացում կազմել հայորդիների զերակտիվության մասին: Դրա պատճառը, մեր կարծիքով, այն է, որ հայ ազգը իր հազարամյակների պատմության ընթացքում հաճախ է բախվել չարի հետ, լավ է տարբերում մարդկայինն ու գազանաբարոն և ճակատագրի բերումով հաճախ է ելել չարի դեմ անհաշտ պայքարի:

Ֆաշիզմի դեմ հայության մեծ մասը կռվում էր Խորհրդային Միության ռազմական համակարգի կազմում՝ աչքի ընկնելով դեռ խորհրդա-ֆիննական պատերազմում, որտեղ չորս հայ արժանացան Հերոսի կոչման[7]: Եվ նրա պոռթկումն առանձնակի զանգվածային բնույթ ստացավ, երբ գերմանա-ֆաշիստական զորքերը 1940 թ. դեկտեմբերի 18-ին Հիտլերի հաստատած «Բարբարոսա» պլանով[8] 1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան, առանց պատերազմ հայտարարելու, ուխտադրժորեն ներխուժեցին ԽՍՀՄ տարածք[9]:

Ոչ պակաս նվիրումով իրենց նոր «հայրենիքների»՝ ապաստան տված պետությունների ու ժողովուրդների պաշտպանության գործին միացան սփյուռքահայերը, որոնք ոչ միայն հերոսաբար կռվում էին, այլև հանգանակություններով օգնում իրենց խորհրդային եղբայրներին համալրելու ԽՍՀՄ ԶՈՒ-ի ռազմատեխնիկական զինանոցը[10]: Այստեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումը: Գերմանացիների հաջողությունները Եվրոպայում ու ԽՍՀՄ-ում առաջ էին բերել որոշակի հոռետեսություն եվրոպական պետություններում ծավալված դիմադրական շարժումների շարքերում: Ընդհատակյա կազմակերպությունների ու պարտիզանական ջոկատների անդամները պայքարում էին ինչ-որ հուսահատ արիությամբ: Սակայն Մոսկվայի ճակատամարտի պաշտպանողական փուլից հետո (1941 թ. սեպտեմբերի 30–դեկտեմբերի 4), երբ հաջողվեց կանգնեցնել զավթիչներին, ապա մեծ կորուստներ պատճառելով՝ հետ շպրտել թշնամուն, գերմանացիները կրեցին իրենց առաջին մեծ պարտությունը: Մոսկվան գրավելու գերմանական պլանների խորտակումը Գերմանիայի համար դարձավ նույնքան կործանարար ռազմավարական պարտություն, որքան Բրիտանիայի համար ճակատամարտը:... Հաղորդագրությունն այնքանով էր թափանցիկ, որ (գերմանացիների շրջանում–*Է. Մ.*) զարթեցրեց հիշողություններ 1812 թ. մասին: Բռնազավթված տարածքներում տեղի էր ունենում հակառակը. տխրությունը փոխարինվեց ուրախությամբ... Ավելի լայն թափ ստացավ Բալկաններում մղվող պարտիզանական պատերազմը, գերմանա-

---

[7] Տես *Կ. Հարությունյան,* Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941–1945): Ե., 2001, էջ 7–8:

[8] Տես «Великая Отечественная война 1941–1945. Краткая история». М., 1970, с. 27:

[9] Տես նույն տեղում, էջ 57:

[10] Տես *Կ. Գ. Մխիթարյան,* Հայաստանի ղեկավար մարմինների մոբիլիզացիոն գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: «ՀՔ», 2005, հմ. 2–4:

ցիներն ու իտալացիներն ավելի ու ավելի մեծ ուժեր էին ուղարկում բռնազավթված երկրներ՝ իրենց իշխանությունը պահպանելու համար[11]:

Այսպես. ամերիկահայությունն ամենաակտիվ կերպով մասնակցեց «առանցքի» պետությունների դեմ ԱՄՆ-ի մղած պայքարին: Նրանք պատերազմի ամբողջ ընթացքում, տարբեր ռազմական գործողությունների մասնակցել, զոհվել ու հաղթել են ոչ պակաս արիությամբ, քան ծնունդով ամերիկացիները, թեև նրանց մեծ մասը ԱՄՆ գաղթածներ էին[12]: Իրենց երկրորդ հայրենիք դարձած երկրին ամերիկահայերի սերն ու նվիրվածությունը այնքան մեծ է եղել, որ բազմաթիվ ընտանիքներից ռազմաճակատ են մեկնել մի քանիսը՝ հայր ու որդի, երկվորյակներ ու եռյակներ, քույրեր ու եղբայրներ: «Մեր տղաները. երկրորդ համաշխարհային պատերազմի ամերիկահայ վետերանները» արժեքավոր ժողովածուում նշվում է, որ «այնտեղ, որտեղ կռվել ու զոհվել են ամերիկացիները, այնտեղ են եղել նաև «Մեր Տղաները»», այսինքն՝ ամերիկահայերը[13]:

Պատերազմի տարիներին ԱՄՆ-ի ԶՈւ-ի բոլոր տեսակներում ծառայել են մոտ 20000 ամերիկահայեր՝ մասնակցելով բոլոր ՌԳԹ-ներում ձեռնարկված ռազմական օպերացիաներին (Ասիա–խաղաղօվկիանոսյան, եվրոպական, հյուսիսաֆրիկյան): Նրանցից մոտ 500-ը զոհվել է, 500-ից ավելի՝ վիրավորվել, և մոտ 50 հոգի՝ անհայտ կորել[14]:

Ամերիկահայերն իրենց անմնացորդ նվիրումի և ռազմական հմտության շնորհիվ արժանացել են բարձր պարգևների, հասել բարձր կոչումների: Երկրորդ աշխարհամարտի տարիներին ամերիկահայերից ամենաբարձր կոչումն է ստացել բրիգադի գեներալ Հայկ Շեքերջյանը, որը միշտ էլ հպարտացել է իր հայկական ծագումով:

Բարձրաստիճան ամերիկահայ զինվորականներից իրենց խիզախությամբ ու երդմանը հավատարմությամբ աչքի են ընկել կոմանդոր Ջեկ (Սիրակ) Հանիկյանը, գնդապետներ Քերկ Բուչախը և Սարգիս Զարդարյանը[15], գնդապետի կոչումով պատերազմի ավարտից հետո է զորացրվել ԱՄՆ-ի ամենաբարձր պարգևի՝ Կոնգրեսի Պատվո շքանշանի ասպետ (1944 թ.) ավագ լեյտենանտ Դերվիշյանը[16] (պարգևի արժանացել են ընդամենը 87 հոգի): Ամերիկյան բանակի լեռնահրաձգային ջոկատներին հակաօդային պաշտպանության մարտավարություն առաջին ուսուցանողներից էր

[11] Տես *Дж. Ф. С. Фуллер.* Вторая мировая война 1939–1945. Стратегический и тактический обзор. М.–СПб., 2006, сс. 227–228:

[12] Տես *Ք. Ավագյան,* Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.): Ե., 2000, էջ 111–119:

[13] Տես «Our Boys. Armenian-American Veterans of World War II». New York, 1951, P. 94:

[14] Տես նույն տեղում:

[15] Տես նույն տեղում:

[16] Տես *N. Barsumian.* Stowaway to Heaven. Ohio, 1961, P. 135:

Հարրի Սաչկայանը, որը հետագայում ծառայել է ռազմաօդային վարչությունում[17]:

Ցուցաբերած անձնական արիության համար երկրորդ բարձրագույն պարգևով՝ «Առանձնահատուկ ծառայության համար խաչ» շքանշանով են պարգևատրվել շտաբային սերժանտ Հենրի Կալփակչյանը (հետմահու), ծովային կապիտան-լեյտենանտ Կեդրիկ Ջանյանը, ծովային հետևակի կապրալ Հարրի Կիզիրյանը և 1-ին լեյտենանտ Վիկտոր Մաղաքյանը: Խիզախության համար «Արծաթե աստղ» բարձր շքանշանով պարգևատրվել են 52 ամերիկահայեր, որոնցից հինգը՝ հետմահու[18]:

1941 թ. դեկտեմբերի 7-ին Փիռլ-Հարբոր ռազմածովային զորակայանում 86 ամերիկյան ռազմանավեր ենթարկվեցին Ճապոնիայի հանկարծակի օդային հարվածի, ինչի հետևանքով ԱՄՆ-ը մտավ ֆաշիստա-միլիտարիստական բլոկի դեմ մղվող պատերազմի մեջ: Այնտեղ կային նաև մեծ թվով ամերիկահայեր: Հարրի Փիլաֆյանը ծովում առաջիններից է ընդունել Փիռլ-Հարբորից ստացվող SOS՝ փրկության աղերսման ազդանշանը: Նրանցից ռազմական օդանավակայանում ծառայող կապրալ Ջորջ Վարդապետյանը ռմբակոծության ժամանակ և հետագայում բազմիցս ցուցաբերած բազմաթիվ սխրագործությունների համար չորս անգամ պարգևատրվել է «Մարտական աստղ» շքանշանով և ընդգրկվել է առանձնակի աչքի ընկած զինծառայողների Նախագահական ցուցակում[19]:

Ամերիկյան ռազմաօդային ուժերի խիզախ օդաչուներից էին ՀՀ Ազգային հերոս Քըրք Քըրքորյանը, Ջերարդ Գևորգյանը, ժիրայր, Հայկ և Արծվիկ Կատարյան եղբայրները, Էնդրյու Կոշտոյանը (զոհվել է Անգլիայում), Սեմ Պարսամյանը, Չառլզ Տերտերյանը և շատ ուրիշներ[20]:

**Ֆրանսիայում** թե՛ կանոնավոր բանակի շարքերում, թե՛ ընդհատակյա կազմակերպությունների, թե՛ պարտիզանական ջոկատների կազմում կռվում էին հազարավոր հայեր: Նրանց պայքարը ղեկավարում էր ֆրանսահայ կոմունիստների նախաձեռնությամբ ստեղծված Հայ ազգային ճակատը (ՀԱՃ):

Ֆրանսիական բանակի շարքերում ակտիվորեն կռվում էր ֆրանսահայությունը, որը ներկայացնում էր Եվրոպայում առավել մեծաթիվ գաղութներից մեկը՝ զբաղեցնելով տարամակարդակ պաշտոններ: Նրանցից առավել աչքի ընկած զինվորականներից էր գնդապետ, հետագայում՝ հրետանու գեներալ-լեյտենանտ Արամ Գարամանուկյանը: Ավելի ուշ Շառլ դը Գոլը նրան պարգևատրել է «Պատվավոր Լեգեոնի» շքանշանով: Սորբոնի համալսարանում Գարամանուկյանը պաշտպանել է իրավագիտության գծով դոկտորական ատենախոսություն՝ նվիրված Հայկական լեգիոնի իրավական

[17] Տես *J. H. Tashjian.* The Armenian American in World War II. Boston, 1952, PP. 57–58:

[18] Տես նույն տեղում, էջ 155–156:

[19] Տես «Our Boys. Armenian-American Veterans of World War II», PP. 94–95:

[20] Տես «Հայոց պատմություն», հ. 4, գիրք 1. «Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.)»: Ե., 2010, էջ 571:

կարգավիճակի հարցերին, դարձել Սիրիայի Զինված ուժերի ստեղծման ղեկավարներից մեկը, գլխավորել է սիրիական բանակի հրետանին: Հետագայում Սիրիական բանակի բարձրագույն հրամանատարությունում ընդգրկված նրա բազմաթիվ աշակերտներն ակնածանքով էին հիշում իրենց դաստիարակին[21]:

1941 թվականից Դիմադրության շարժման մեջ էր կոմունիստ-պարտիզան Միսաք Մանուշյանը, որը միացյալ ինտերնացիոնալ ջոկատի հրամանատարն էր: Նրա ջոկատը կատարել է մոտ 60 հակաֆաշիստական ահաբեկչական և դիվերսիոն գործողություն: 1943 թ. ամռանը մահապատժի է ենթարկել ֆաշիստ դահիճների՝ Փարիզի պարետ գեներալ ֆոն Շաումբուրգին ու Ռիտերին: Միսաք Մանուշյանի նախաձեռնությամբ Փարիզի շրջանում կազմակերպվել են ընդհատակյա «Ստալինգրադ», «Վիկտոր Հյուգո», «Ազատություն», «Չապաև» ջոկատները, որոնց անդամների մեծ մասը հայեր ու հրեաներ էին[22]:

1943 թ. նոյեմբերի 16-ին ֆաշիստները մատնությամբ ձերբակալել են և մահապատժի ենթարկել Մ. Մանուշյանին ու նրա 20 ընկերներին: Զնդանում բազմաթիվ խոշտանգումներից հետո մահապատժից ժամեր առաջ իր կնոջը՝ Մելինեին, ուղղված վերջին նամակում Մանուշյանը գրում է. «Շատ սիրելի՛ որբո՜ւկս... Ֆրանսայի ազատագրության բանակին մեջ մտած էի, որպէս կամաւոր զինվոր և կը մեռնիմ գաղափարիս համար, յաղթանակին քանի մը մատ մնացած երջանկութիւն անոնց, որ պիտի ապրեն մեզմէ յետո և պիտի վայելեն վաղուայ խաղաղութեան և ազատութեան անուշութիւնը»[23]: 1944 թ. փետրվարի 21-ին իր 21 զինակիցների հետ նա գնդակահարվել է:

Մանուշյանը հետմահու արժանացել է «Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոսի» և «Պատվո լեգեոնի շքանշանի», իսկ նրա կյանքի և պայքարի ընկերուհի Մելինե Մանուշյանը՝ «Ֆրանսիայի ազգային հերոսի» կոչման: Հազարավոր ֆրանսահայ հայրենասերներ ծառայել են դիմադրության մեծ գործին՝ չխնայելով իրենց կյանքը: Այդ շարքերում էին աշխարհահռչակ երգիչ, կինոդերասան, կոմպոզիտոր Շառլ Ազնավուրի ծնողները՝ Մամիկոն և Քնար Ազնավուրյանները, քույրը՝ Աիդան, և ինքը՝ Շառլը, որ տակավին 20 տարեկան էր:

Ֆրանսիայի Դիմադրության շարժման փառապանծ հերոսուհիներից էր բանաստեղծուհի Լուիզա Ասլանյանը (Լաս): Այդ գեղեցկադեմ, նրբակազմ երիտասարդ կինը առանձնանում էր իր կրքոտությամբ ու անկոտրում կամքով: Անգամ գեստապոյի զնդաններում դահիճների կիրառած գազանային

[21] Գեներալ Արամ Գարամանուկյանի մասին և նրա ատենախոսության մի հատվածը տես *Ա. Հ. Գարամանուկյան,* Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ: «ՀԲ», 1996, հմ. 2, 3–4:

[22] Տես «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում»: Ե, 2005, էջ 24:

[23] Տես *Ա. Մարտիկյան,* Պայքարի և մեծության ուղիով: «Հայ կին» (ամսաթերթ հայ կանանց միության): Փարիզ, 1947 թ. Ապրիլ (բերվում է ըստ՝ *Ս. Գալստյան,* Երկրորդ աշխարհամարտին Եվրոպահայության մասնակցության դրվագներ: «ՀԲ», 2005, հմ. 2–4):

խոշտանգումները չընկճեցին այդ փոքրամարմին հերոսուհու դյուցազնական տոկունությունը: Լուիզան սերտ կապեր ուներ դիմադրական շարժման ակտիվ մասնակիցներ Միսաք Մանուշյանի, Արփեն Դավթյանի, Հայկ Դպիրյանի, Սեմայի, Շահե Տատուրյանի և մի շարք այլ գրական-քաղաքական գործիչների հետ[24]: Այդ օրերի իրականությունը նա ներկայացնում էր իր գրական ստեղծագործություններում:

Լուի Արագոնը գրել է. «Հայ ժողովրդի տառապանքները նկարագրելիս ֆրանսիացի գրողները շատ թանաք վատնեցին, բայց հայ ժողովուրդը թանաքի փոխարեն արյուն հեղեց հանուն Ֆրանսիայի ազատության»[25]:

**Մեծ Բրիտանիայի** Զինված ուժերի կազմում էին կռվում ռազմական օդաչուներ Նոյել, Ջեկ և Լևոն Աղազարյան եղբայրները: Նոյելը զոհվել է Անգլիայի, Ջեկը՝ Ֆրանսիայի համար մղված օդային մարտերում: Նրանց քույրը՝ Մոնիկ Աղազարյանը, պատասխանատու պաշտոն էր զբաղեցնում ռազմական օդանավակայանում[26]:

**Հոլանդիայում** կայազորային ծառայություն էր կատարում Հայկական լեգեոնի 4-րդ գումարտակը: Ինչպես և մյուս գումարտակները, որոնք պատեհ առիթ էին փնտրում ֆաշիզմի դեմ պայքարող ուժերի կողմն անցնելու համար, այս գումարտակը ևս իր ընդհատակյա ղեկավարներ Տելեմակ Մարտիրոսյանի, Նապոլեոն Դարբինյանի, Աբրահամ Աբրահամյանի գլխավորությամբ կապ է հաստատում տեղաբնակ հայ Ալեքսանդր Հակոբյանի հետ, որպեսզի միանալով դիմադրականներին՝ օգնեն մոտեցող բրիտանացիներին: Սակայն ֆաշիստները, հասկանալով այդ, նրանց մի մասին գնդակահարել են, մյուսներին նետել համակենտրոնացման ճամբար կամ էլ տեղափոխել այլ վայրեր[27]:

**Իտալիայում** ծավալված հակաֆաշիստական մարտերում աչքի են ընկել գերությունից փախած ու պարտիզաններին միացած Մկրտիչ Դաշտոյանը և Գևորգ Քոլոզյանը, որն իր կրծքով փակել է գնդացրային ակնատը՝ կրկնելով Հունան Ավետիսյանի, Ալեքսանդր Մատրոսովի սխրագործությունը: Նրանք երկուսն էլ արժանացել են Իտալիայի Ազգային հերոսի կոչմանը, ինչպես նաև քաջագործություններից և մահից հետո արժանացել մի շարք բարձր պարգևների («Մարտական քաջության համար»,«Զինվորական խիզախության համար» բրոնզե մեդալներ): Նրանց հետ հակաֆաշիստական այդ ճակատում պայքարում էին ուրիշ շատ հայորդիներ ևս:

**Հարավսլավիայում** պարտիզանների մեջ հռչակված հերոսներից էր Վարդուշ Սուքիասյանը (Սուքիասիչ) և ուրիշներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ բուռն պայքար էր մղվում նաև գերմանա-ֆաշիստական զորքերի թիկունքում՝ ընդգրկելով թե՛ Խորհրդային Միության, թե՛ եվրոպական երկրների

[24] Տես *Ս. Գալստյան,* Նշ. աշխ.:

[25] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. VIII: Ե., 1970, էջ 165:

[26] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Ս. Գալստյան,* Նշ. աշխ.:

[27] Տես նույն տեղում:

տարածքները: Հայերը, լինեին տվյալ երկրի բնակիչ, թե համակենտրոնացման ճամբարից փախուստի դիմած ռազմագերի, ակտիվորեն մասնակցել են այս պայքարին:

Մեծ թվով կարմիրբանակայիններ գերեվարվեցին Հայրենական մեծ պատերազմի առաջին փուլում: Ըստ որոշ տվյալների՝ ամբողջ պատերազմի ընթացքում խորհրդային բանակից գերի է ընկել 5750 հազար մարդ, որոնց մեծ մասը՝ 3800 հազարը, 1941 թվականին: Պատերազմի սկզբում հայ ռազմագերիների թիվը 10 հազար էր, իսկ 1942–1943 թթ.՝ 20–30 հազար[28]:

Քանի որ ֆաշիստական Գերմանիան իր ճամբարներում հայտնված գերիների նկատմամբ խախտում էր միջազգային մարդասիրական իրավունքի գրեթե բոլոր նորմերը, շատերի համար ողջ մնալու միակ տարբերակը գերմանական բանակի կազմում ստեղծվող ազգային լեգեոններին միանալն էր: Սակայն հայկական լեգեոնը չծառայեց իր նպատակին. շատերը փախուստի դիմեցին՝ վերադառնալով Կարմիր բանակի շարքերը, ոմանք էլ միացան Եվրոպայում գործող Դիմադրության շարժմանը:

Հայկական լեգեոնն ուներ 10 գումարտակ, նույնքան գումարտակ ստեղծվեց ադրբեջանցի ռազմագերիներից, վրացիներից կազմավորվեց 11, իսկ Կովկասի լեռնականներից՝ 5 գումարտակ, յուրաքանչյուրում՝ մոտ 800 մարդ: Միջին Ասիայի հանրապետությունների ներկայացուցիչներից ստեղծվեց թուրքեստանյան լեգեոնը, որը բաղկացած էր 20 հետևակային, 8 սակրային, 2 վարժական և 2 ոստիկանական գումարտակներից[29]: Գերմանական բանակի կազմում ստեղծվեցին նաև գեներալ Վլասովի Ռուսական ազատագրական բանակը, որն իր շարքերում ուներ ավելի քան 300 հազար ռուս զինվոր ու սպա, Ստեփան Բանդերայի Ուկրաինական ազատագրական բանակը, որն իր շարքերում ուներ շուրջ 50 հազար հոգի:

1942 թ. դեկտեմբերին արծարծելով ազգային լեգեոնների կազմավորման հարցը՝ Ադոլֆ Հիտլերը տվել է դրանց գնահատականը՝ Երրորդ ռայխին ծառայելու տեսակետից. «Ես միայն մուսուլմաններին եմ վստահելի համարում: Այդ զուտ կովկասյան գումարտակների կազմակերպումը համարում եմ չափազանց վտանգավոր գործ, բայց միայն մուսուլմանական զորամասեր ստեղծելու մեջ վտանգ չեմ տեսնում… Չնայած Ռոզենբերգի և զինվորականների հավաստիացումներին՝ հայերին նույնպես չեմ հավատում»[30]:

Եվ Հայկական լեգեոնը գործնականում արդարացրեց համար 1 ֆաշիստի գնահատականը: Հայկական գումարտակների անձնակազմի մեծ մասը կա՛մ միացավ պարտիզաններին (այդպես Ուկրաինայում կազմակերպվեց Անաստաս Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը), կամ էլ անցավ ռազմաճակատի գիծը և շարունակեց մարտնչել Կարմիր բանակի

---

[28] Տես *Զաւեն Մսրլեան,* Համաշխարհային Բ պատերազմի հայկական լեգեոնը: «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ժ: Պէյրութ, 1984, էջ 168, 170:

[29] Տես նույն տեղում:

[30] Տես *Ա. Վերտ,* Ռուսաստանը 1941-1945 թվականների պատերազմում: Ե., 1969, էջ 536:

շարքերում: Իսկ լեգեոնականների այն գումարտակները, որոնք շտապ կերպով տեղափոխվեցին Ֆրանսիա, որպեսզի չհամալրեն Կարմիր բանակը, դարձան խորհրդային պարտիզանական 1-ին գնդի հիմքը: Այդպիսին էր նաև Հոլանդիա, Հունաստան, Իտալիա տեղափոխված մյուս հայկական գումարտակների ճակատագիրը: Այսպիսով՝ հիտլերականների ստեղծած հայկական լեգեոնի ստորաբաժանումները ոչ միայն չծառայեցին վերմախտին, այլև վերածվեցին խորհրդային պարտիզանների, ֆրանսիական, հոլանդական, հունական դիմադրական շարժումների համալրման աղբյուրների: Ուկրաինայի և Բելոռուսիայի պարտիզանական երկրամասերի ազատագրումից հետո և մինչև պատերազմի հաղթական ավարտը հարյուրավոր լեգեոնականներ կրկին մտան Կարմիր բանակի շարքեր, մարտնչեցին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ և իրենց ավանդը ներդրեցին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում[31]:

1941 թ. վերջում ԽՍՀՄ բռնազավթված տարածքներում կազմավորվել էր շուրջ 3,5 հազար պարտիզանական ջոկատ: Պարտիզանները հանդես էին գալիս որպես ժողովրդական վրիժառուներ՝ մահապատժի ենթարկելով տեղի բնակչության դահիճներին, խաթարում էին թշնամու զորքերի ու բեռների տեղափոխումը երկաթգծերով, բնակչության շրջանում: Նրանց շարքերում զգալի մաս էին կազմում հայերը, որոնց թվում էին ինչպես տեղաբնակներն ու նախանցի ժամանակ իրենց զորամասերից հետ մնացածները, այնպես էլ գերությունից փախուստի դիմածները[32]:

**Ֆրանսիայում** գործել է 2000 խորհրդային ռազմագերիներից կազմված պարտիզանական գունդը՝ Ալեքսանդր Ղազարյանի հրամանատարությամբ: Դրա կազմում կային ավելի քան 1200 հայեր, **Հունաստանում** ավելի քան 1000 հայերից կազմավորված «Ազատություն» պարտիզանական ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի հրամանատարությամբ: **Հոլանդիայում** շուրջ 800 հայ ռազմագերի լեգեոնականների խմբերն աջակցել են հոլանդական դիմադրական շարժմանը[33]:

Հարկ է առանձնակի նշել, որ պարտիզանական շարժման գլխավոր կազմակերպիչներից ու ղեկավարներից գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանն էր: Բազմաթիվ խիզախ հայորդիներ պարտիզանական ջոկատների կազմում աչքի են ընկել իրենց սխրագործություններով: Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասում, Կուրսկի, Բրյանսկի, Օրյոլի, Լենինգրադի մարզերում, Բելոռուսիայում, Ուկրաինայում, Ղրիմում: Ամբողջ երկրով մեկ թնդաց Կրասնոդարի «Երիտասարդ գվարդիայի» սխրանքը: Դրա կազմում ակտիվ գործունեությամբ աչքի են ընկել Մայա Պելիվանովան (Փահլևանյան) ու ժորա Հարությունյանը, որոնց կերպարներն անմահացել են «Մոլոդայա գվարդիա» վեպում և համանուն կինոնկարում[34]:

---

[31] Տես *Կ. Հարությունյան,* Հայկական լեգեոնը: «Գարուն», 1994, հմ. 7:

[32] Տես *Վ. Ն. Ղազախեցյան,* Խորհրդային հայ պարտիզանները: «ՀԲ», 2005, հմ. 2–4:

[33] Տես «Հայոց Պատմություն», հ. 4, գիրք 1, էջ 570:

[34] Տես *А. Фадеев.* Молодая гвардия. М., 1951:

Եվրոպայի ազատագրման գործում իրենց խիզախությամբ աչքի են ընկել հայ պարտիզաններից Արտյոմ Պետրոսյանը, Հակոբ Իլիկչյանը, Արթուր Բաբայանը (Չեխոսլովակիա), Հենրիկ Թումանյանը, Սերգեյ Կուսիկյանը, Արարատ Նավոյանը (Լեհաստան), Մխիթար Գրիգորյանը (Իտալիա), Մկրտիչ Դաշտոյանը, Սերջիո Դավթյանը, Գևորգ Քոլոզյանը, Տիգրան Ալիխանյանը, Հմայակ Բաղալյանը, Գրիգոր Միրզախանյանը, Անդրանիկ Միրզոյանը (Հոլանդիա), Ստեփան Յաղջյանը, Բարթուղ Պետրոսյանը, Լևոն Տիտանյանը (Ֆրանսիա) և շատ ուրիշներ[35]: Հազարավոր սփյուռքահայեր ընդգրկված են եղել ֆաշիստական Գերմանիայի զավթած երկրների դիմադրական շարժման շարքերում:

Պատերազմի տարիներին դեպի Մայր Հայրենիք կողմնորոշված սփյուռքահայությունն ակտիվորեն մասնակցեց թշնամու դեմ մղվող պարտիզանական պայքարին, համախմբվեց ազգային ճակատների բազմաթիվ կազմակերպությունների մեջ, ստեղծեց մի շարք առաջադիմական կազմակերպություններ և ընկերություններ[36]: Ազգային ճակատներ ու միություններ հիմնադրվեցին գրեթե բոլոր հայաշատ երկրներում՝ ԱՄՆ-ում (Ամերիկահայերի ազգային խորհուրդ ու Հայկական առաջադիմական լիգա), Ֆրանսիայում (Ֆրանսահայերի ազգային ճակատ), Սիրիայում և Լիբանանում (Հայ ազգային խորհուրդ), Բուլղարիայում (Հայրենական ճակատ), Հունաստանում (Ժողովրդաազատագրական ճակատ) և այլն: Դրանց նպատակն էր այդ օրհասական պահին զորավիգ լինել Մայր հայրենիքին և բարոյական ու նյութական օժանդակություն ցուցաբերել ֆաշիզմի դեմ մարտնչող խորհրդահայ ժողովրդին[37]:

Սփյուռքահայերը ոչ միայն բարոյապես սատարեցին Մայր Հայրենիքին, այլև նյութական օգնություն ցույց տվեցին Կարմիր բանակին: Տարբեր գաղթօջախներում պարբերաբար կատարվեցին հանգանակություններ՝ Հայաստան դեղորայք, հագուստ, մթերք, ինչպես նաև սպառազինություն ուղարկելու համար: 1943 թվականին Հայ առաքելական եկեղեցու, մասնավորապես՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանի նախաձեռնությամբ աշխարհասփյուռ հայությունը հանգանակություն կատարեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծելու համար: Այս հանգանակությունը, որի առաջին մուծումը կատարեց Սուրբ Էջմիածինը, առաջ բերեց բոլոր երկրների հայերի մեծ խանդավառությունը:

Տանկային շարասյունը շահագործման հանձնվեց 1944 թվականի սկզբին և անմիջապես ուղարկվեց ճակատային գիծ՝ համալրելով Հովհաննես Բաղրամյանի գլխավորությամբ գործող Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի սպառազինությունը: Իրանահայությունը հանգանակություն կատարեց տան-

---

[35] Տես նույն տեղում, նաև՝ *К. Арутюнян, Г. Погосян.* Вклад армянского народа в Победу в Великой Отечественной войне (1941–1945). Е., 2010, сс. 483–484:

[36] Տես «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում», էջ 55:

[37] Տես նույն տեղում:

կային երկրորդ՝ «Գեներալ Բաղրամյան», շարասյան համար, ինչը, սակայն, ընդհատվեց պատերազմի հաղթական ավարտի պատճառով:

Սակայն ֆաշիստական Գերմանիայի ու նրա եվրոպական արբանյակների ջախջախմամբ երկրորդ համաշխարհային պատերազմը չավարտվեց. Արևելքում՝ Ասիա-խաղաղօվկիանոսյան ՌԳԹ-ում շարունակվում էին թեժ մարտերը, թեև հաջողության նժարն արդեն թեքվել էր դաշնակից ուժերի կողմը: Այդուհանդերձ, Ճապոնիան դեռ պահպանում էր զգալի ներուժ, և պայքարը կարող էր ձգձգվել:

Այս նկատառումներով ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ առաջնորդների հերթական հանդիպման ժամանակ, որը կայացավ 1945 թ. փետրվարի սկզբին Յալթայում, ԽՍՀՄ-ը պարտավորություն վերցրեց մինչև վերջ կատարելու իր դաշնակցային պարտքը և Գերմանիայի դեմ պատերազմի ավարտից ոչ ուշ, քան 2-3 ամիս հետո միանալ Ճապոնիայի դեմ վարվող ռազմական գործողություններին[38]:

Եվ ԽՍՀՄ-ը, հավատարիմ լինելով իր խոստմանը, օգոստոսի 9-ին պատերազմ հայտարարեց Ճապոնիային և հենց նույն օրը Անդրբայկալյան, 1-ին և 2-րդ Հարավարևելյան ռազմաճակատների ուժերով անցավ վճռական հարձակման: Ցամաքային զորքերին աջակցում էին Խաղաղօվկիանոսյան նավատորմի և Ամուրյան գետային նավատորմիղի ուժերը, ինչպես նաև օդում՝ երեք օդային բանակներ (դրանցից մեկի՝ 12-րդ բանակի հրամանատարն էր ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը (Ս. Խուդյակով), որը, ի դեպ, հմուտ կառավարման համար արժանացել է Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանի): Խորհրդային զորքերի հետ Ճապոնիայի և նրա խամաճիկային Մանջոու-Գո պետության դեմ կռվում է նաև Մոնղոլիայի ժողովրդական Հանրապետության բանակը:

Ճապոնիայի դեմ պատերազմին մասնակցել են մեծ թվով հայ զորապետներ: Այսպես. 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատի հրետանու պետն էր հրետանու գեներալ-լեյտենանտ (հետագայում՝ գեներալ-գնդապետ), Խորհրդային Միության հերոս Միքայել Պարսեգովը, 6-րդ գվարդիական տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ էր գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանը, դիվիզիաների հրամանատարներ՝ գնդապետ Կոնստանտին Լազարևը (հետագայում՝ գեներալ-մայոր), Խորհրդային Միության հերոս գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, գվարդիայի գեներալ-մայոր Տիմոֆեյ Ղեդեօղլուն, ՀՕՊ-ի բանակի շտաբի պետ գեներալ-մայոր Գևորգ Չալլախյանը, ծանր ականանետային բրիգադի հրամանատար, գվարդիայի գնդապետ Ռաֆայել Հայրապետյանը, դիվիզիայի հրետանու պետ փոխգնդապետ Գավրիիլ Կամոևը (հետագայում՝ գեներալ-մայոր)[39]:

---

[38] Տես «Тегеран, Ялта, Постдам. Сборник документов». М., 1967, с. 154:

[39] Տես *Վ. Մ. Նավասարդյան,* Հայ ռազմիկների մասնակցությունը Ճապոնական Կվանտունյան բանակի ջախջախմանը Հեռավոր Արևելքում: (1945 թ. օգոստոս–սեպտեմբեր): «ՀՔ», 2005, հմ. 2–4, նաև՝ *К. Арутюнян.* Участие армянского народа в Великой Отечественной войне (1941–1945). Е., 2010, сс. 128–130:

Հեռավոր Արևելքում խորհրդային զորքերի (ընդհանուր հրամանատար՝ Խորհրդային Միության մարշալ Ա. Վասիլևսկի) վճռական ու մի քանի ուղղություններով ծեռնարկված հարձակումն ավարտվեց 1 միլիոնից ավելի թվաքանակով Կվանտունյան բանակի արագ ջախջախմամբ:

Եվ 1945 թ. սեպտեմբերի 2-ին ամերիկյան «Միսսուրի» գծանավում Ճապոնիայի արտաքին գործերի նախարար Սիգամիցու Մամոռուն և Գերագույն շտաբի պետ գեներալ Յոսիձիրո Ումեձուն Ճապոնիայի կայսրության անունից ստորագրեցին անվերապահ կապիտուլացման ակտը:

Այդպես ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը՝ մարդկության պատմության մեջ ամենամեծ չարիքներից մեկը, որը տարավ 60 միլիոնից ավելի կյանքեր, պատճառեց հսկայական ավերածություններ, տնտեսությունների քայքայում, սով, համաճարակներ:

Այդ պատերազմին մասնակցեցին և հայ ժողովրդի զավակները, որոնք կռվեցին հակաֆաշիստական բլոկի գրեթե բոլոր բանակներում, մասնակցեցին դիմադրության շարժմանը, իրենց կյանքի գնով Երկրի վրա հաստատեցին մարդասիրության ու գթասրտության իշխանությունը:

Եվ այսօր այդ պատերազմի մասնակիցների թոռներն ու ծոռները արիաբար կռվում են՝ իրենց ազգը, իրենց Հայրենիքը պաշտպանելով երիտթուրքական ու ֆաշիստական մոլուցքով տոգորված արյունռուշտ թշնամուց:

## УЧАСТИЕ АРМЯНСКОГО НАРОДА ВО ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЕ: 1939–1945 ГГ.

*Э. Г. МИНАСЯН, доктор исторических наук, профессор, декан исторического факультета ЕГУ, член научно-консультационного совета ВНЖ «Айкакан банак»*

РЕЗЮМЕ

Вторая мировая война является одним из самых чудовищных событий в истории человечества. Она унесла жизни более 60 млн человек. В ней, по разным данным, участвовало от 57 до 74 государств, население которых составляло около 80 % всего человечества на тот момент. В государствах – участниках войны было мобилизовано более 110 млн человек из трудоспособного населения. Она принесла всеобщую разруху, упадок экономики практически всей Евразии.

В этой войне самое активное участие принял армянский народ, в результате Геноцида в Османской империи развеянный по всему свету. Армяне сражались как в составе вооруженных сил давших им убежище государств, так и в рядах партизан и Движений Сопротивления. Но главным образом армяне (около 500 тыс. человек и 100 тыс. зарубежных армян) сражались на советско-германском фронте, вместе с представителями других советских народов неся основное бремя второй мировой войны.

Многие армяне выдвинулись в высший командный состав своих государств (в СССР, США), стали Героями, с честью сражались и гибли за свою историческую Родину в составе СССР или «вторую Родину», которая приютила их. Они сражались на суше, на море, в небе на всех ТВД–Европейском, Атлантическом, Азиатско-Тихоокеанском.

Такая активность армян объясняется тем, что за свою многотысячелетнюю историю они не раз сталкивались со злом, привыкли различать добро и зло, сражаться за первое против второго. Совсем недавно они пережили страшный геноцид, учиненный турецкими палачами, в результате которого погибло более 1,5 миллиона мирных армян. Они хорошо представляли звериный характер фашизма и последствия его возможного господства.

Это стремление к торжеству добра над злом и сегодня вдохновляет внуков и правнуков героев второй мировой войны в их борьбе с фашистскими азербайджано-турецкими кругами, пытающимися довершить то, что не удалось полностью осуществить в начале века младотуркам.

## THE PARTICIPATION OF THE ARMENIAN PEOPLE IN WORLD WAR 2: 1939–1945

*E. G. MINASYAN, Doctor of Historical Sciences, Professor, Dean, Department of History, YSU, Member, Academic-Advisory Council, «Haikakan Banak» Defense-Academic Journal*

SUMMARY

WW2 is one of the atrocious events in the history of mankind. It claimed lives of over 60 million people. According to different data, from 57 to 74 states, the population of which counted about 80 % of all humanity at that time, was involved in it. Over 110 million people of able-bodied population were mobilized in the warring states. This war brought global collapse, as well as economic depression almost all over Eurasia.

A very active part in this war was taken by the Armenian people who were spread across the world after the Armenian Genocide in the Ottoman Empire. Armenians fought both in the armed forces of the states which had given them refuge, and in the ranks with partisans and the Resistance movements. But above all the Armenians (about 500 thousand people from Armenia and 100 thousand people from abroad) fought in the Soviet-Fascist front, bearing the main brunt of the WW2 with the other representatives of the Soviet states.

Many of the Armenians were put forward to the higher command staff in their states (USSR, USA), became Heroes, fought with honour and died

for their historical homeland within the USSR or for their “second homeland”, which had hosted them. They fought inland, asea, in the air in all the theatres of war – European, Atlantic, Asia-Pacific.

Such activeness by the Armenians can be explained by the fact that during their millenia-old history they had over and over again encountered the evil, were accustomed to distinguish the good and the evil, to fight for the first against the latter. Not long ago they survived a formidable genocide, perpetrated by the Turkish butchers, the outcome of which was the deaths of over one and a half million of peaceful Armenians. They had a vivid view of the beastly nature of fascism and the outcomes of its possible dominance.

This striving for the triumph of the good over the evil inspires the grandchildren and great-grandchildren of the heroes of WW2 in their struggle against fascist Turkish-Azerbaijani circles, which try to accomplish what the Young Turks failed to fulfill in the beginning of the last century.

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ՆՐԱ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՐՎԵՍՏԻ

*Ա. Ա. ԿՈՐԱԲԵԼՆԻԿՈՎ, գնդապետ, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, Գիտահետազոտական Ցամաքային զորքերի համակարգային օպերատիվ-մարտավարական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող*



Հիտլերյան Գերմանիայի ու նրա արբանյակ պետությունների՝ Իտալիայի, Ավստրիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Սլովակիայի, Ֆինլանդիայի, իսկ հետագայում նաև միլիտարիստական Ճապոնիայի ջախջախումը հույժ կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ համաշխարհային ընկերակցության համար: Թվում էր, թե մարդկությունը երբեք մոռացության չի մատնի այն տարիները, երբ Եվրոպան գտնվում էր խավարամիտների լծի տակ, պատված էր համակենտրոնացման ճամբարների ցանցով: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին շատ երկրներում գործում էին «մահվան ֆաբրիկաներ», որտեղ բնաջնջում էին տարբեր ազգությունների մարդկանց: 20-րդ դարի «դարչնագույն ժանտախտի» վերացումը, խաղաղության հաստատումը ձեռք բերվեցին ֆաշիզմի դեմ պայքարող երկրների ու ժողովուրդների, և առաջին հերթին՝ Խորհրդային Միության, հսկայական ճիգերի ու մեծ զոհողության շնորհիվ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեր երկիրը կորցրեց 27 մլն իր լավագույն զավակների, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի զոհ դարձավ ավելի քան 50 մլն մարդ (այլ տվյալներով՝ մոտ 70 մլն): Ամենածանր և առավել արյունահեղ պայքարը մղվում էր խորհրդա-գերմանական ճակատում: Գերմանա-ֆաշիստական դաշնադրության ջախջախման գործում ամենամեծ ներդրումն ունեցավ խորհրդային, առաջին հերթին՝ ռուս ժողովուրդը: Այս պատերազմում տոնած հաղթանակը խորհրդային քաղաքացիների մեծ սխրագործության ու զանգվածային հերոսության օրինակ է: Գերմանական ֆաշիստները, ինչպես, ի դեպ, նաև նրանց դաշնակիցները՝ իտալացիներ, հունգարացիներ, ավստրիացիներ, ռումինացիներ, ֆիններ և ուրիշներ, քողարկվելով ժողովրդավարության ու կոմունիզմի դեմ պայքարի ամբոխավարական հռետորաբանությամբ, ատելով ատում էին այն ամենը, ինչը կրում էր ազատության կնիք: Անցան շատ տարիներ, հասունացան ու ծերացան պատերազմի զավակները, նրանց թոռներն ու ծոռները, նրանք, ովքեր ֆաշիզմից ու ճապոնական միլիտարիզմից ազատագրեցին Եվրո-

պայի ու աշխարհի ժողովուրդներին, իսկ արյունը շարունակում է հեղել աշխարհի շատ ու շատ երկրներում:

ԽՍՀՄ տարածքում բռնազավթվել էին 16-ից 8 հանրապետությունների 672 քաղաք: Ֆաշիստներն ավերել էին 1710 քաղաք ու քաղաքատիպ ավան, 70000 գյուղ, 12000 արդյունաբերական ձեռնարկություն, 65000 կմ ուղիներ: Ոչնչացվել էր ազգային հարստության 30 տոկոսը: Այս ձևով էին դահիճները հաստատում կեղեքումների իրենց իրավունքը, տիրապետության ու նոր աշխարհակարգի ստեղծման նկատմամբ իրենց մենաշնորհը: Դա չի կարելի մոռանալ:

Անցած դարի հերոսական իրադարձությունները, որոնք փորձության ենթարկեցին մեր ժողովուրդների սերտ բարեկամությունն ու հավատարմությունը երդմանը, ավելի ու ավելի են հեռանում մեզնից: Կանցնի ևս ոչ շատ ժամանակ, և այլևս չեն լինի նրանք, ովքեր մարտնչեցին ֆաշիզմի դեմ, պահպանեցին մեր երկիրը: Սակայն դա ոչ ոքի չի տալիս իրավունք պատերազմի իրադարձությունները մեկնելու ի շահ քաղաքական բախտախնդիրների, կատարելու ֆաշիզմի դեմ հաղթանակ տարած ժողովրդի նվաճումների վերանայում: Երկրորդ համաշխարհային և Հայրենական պատերազմների ընթացքն ու արդյունքները միայն առանձին ճակատամարտերի տեսքով ներկայացնելու փորձերը սնանկ են: Չի կարելի անտեսել պատերազմի քաղաքական կողմը, երկու՝ սոցիալիստական և կապիտալիստական համակարգերի ընդդիմամարտությունը, որում հաղթեց սոցիալիստականը: Ընդսմին հարկ է ուշադիր կերպով զննել այն քաղաքական միջոցները, որոնց շնորհիվ մեր պետությանը հաջողվեց հաղթել: Այդ միջոցների շարքը պետք է դասել պատերազմի ռազմավարությունը և մարտավարությունը, որոնք մեծ պատերազմի արդյունքների գնահատման ժամանակ գործնականում աչքաթող են արվում:

Այժմ գաղտնիք չէ, որ պատերազմի առաջին ու երկրորդ փուլերում մեր ռազմական գործողությունների հիմնական տեսակը պաշտպանությունն էր, իսկ ռազմական գործողությունների ձևը՝ ռազմաճակատային ու բանակային պաշտպանողական օպերացիաները: Մինչդեռ նախապատերազմյան շրջանում պաշտպանությունը Կարմիր բանակում դիտվում էր միայն որպես հնարավոր տեսակի ռազմական գործողություն: Ընդ որում, Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից պարզ դարձավ, որ օպերատիվ պաշտպանության պրոբլեմը կարող է լիարժեք լուծում ստանալ ոչ թե բանակային, այլ ռազմաճակատային պաշտպանական օպերացիայի դեպքում:

Դեռ ավելին. պատերազմը խորագույն ստուգման ենթարկեց Ցամաքային զորքերի օպերատիվ արվեստի ու մարտավարության նախապատերազմյան տեսությունը:

Օպերատիվ արվեստի տեսությունը թեև ընդհանուր առմամբ ճիշտ էր արտացոլում օպերացիայի ու մարտի նախապատրաստման ու վարման հարցերը, սակայն զգալի թվով տեսական մշակումներ կարիք ունեին վերանայման: Ուստի և ինչպես հրամանատարական, այնպես էլ գիտական կադրերին հարկ եղավ ամեն օր և քննադատաբար յուրացնել մարտական փոր-

ծը՝ մեծագույն ճիգերով հաղթահարելով զորքերի տեսական ու գործնական պատրաստման գործում տեղ գտած բավական լուրջ թերությունները, մշակելով հակառակորդի դեմ պայքարի միանգամայն նոր ձևեր ու եղանակներ՝ ռեալ մարտական իրադրության նկատմամբ դրանց կիրարկմամբ:

Թշնամու զինված ուժի ջախջախման ու նրա նկատմամբ հաղթանակի ձեռքբերման միակ միջոցը մարտն էր[1]: Այսպիսով՝ մարտավարությունը հանգեցվել էր մարտի, առաջին հերթին՝ հարձակողական: Դրա հետևանքը եղավ այն, որ ռազմական գործողությունների սկզբում ինչպես զորապետերին, այնպես էլ հրամանատարներին հաճախ պետք էր լինում «բախվել այնպիսի երևույթների հետ, որոնք» նախատեսված չէին որևէ տեսական դրույթով կամ հակասում էին դրանց: Ուստի ծագեց գործողությունների միանգամայն նոր եղանակների որոնման անհրաժեշտություն: Որպես կանոն, պատերազմում ավելի հաջող էին գործում այն հրամանատարները, որոնք ունեին ավելի բարձր կարգի տեսական պատրաստականություն:

Անհրաժեշտ է դառնում պարզել ռուսական ռազմարվեստի հետևողական զարգացման ընթացքը, որի շնորհիվ այն հասավ մի այնպիսի բարձունքի, որ իրավամբ կարող է համարվել «Հաղթանակի արվեստ»:

Եթե խոսենք օպերատիվ-ռազմավարական կողմի մասին, ապա մեր տեսությունն ու պրակտիկան ունեին շատ աղոտ պատկերացումներ, թե ինչպես կարող է ընթանալ պատերազմի սկզբնական փուլը, ինչ պետք է անեն զորքերը հակառակորդի հանկարծակի ներխուժման դեպքում:

Ենթադրվում էր, որ ամեն բան կլինի այնպես, ինչպես եղավ առաջին համաշխարհային պատերազմում, երբ սահմանամերձ մարտերի պայմաններում առաջապահ զորամիավորումների ծածկապաշտպանությամբ իրագործվեցին վճռորոշ ճակատամարտերի համար հիմնական ուժերի վերջնամոբիլիզացումն ու ծավալումը: Սակայն 1941 թ. մեր սահմանամերձ օկրուգներին դիմակայում էին գերմանական զորքերի վաղօրոք վերջնամոբիլիզացված ու ծավալված խմբավորումները, որոնք պատրաստ էին հարվածելու ցանկացած պահի: Իրենց օպերատիվ դիրքավորմամբ մեր զորքերը լիովին պատրաստ չէին ո՛չ պաշտպանությանը, ո՛չ հարձակմանը: Ընդսմին փորձը ցույց է տալիս, որ տարբեր մակարդակների հրամանատարները պետք է դեռ խաղաղ ժամանակ ոչ միայն տեսականորեն ուրվագծեն գալիք գործողությունների սխեման, այլև ռեալ կերպով՝ կենդանի ձևով, իմաստավորեն, թե ինչպես կգործի հակառակորդը, և ինչպես կազմակերպել յուրային զորքի գործողությունները:

Ցանկանում եմ առանձնակի խոսել հարձակման ու պաշտպանության մասին: Հայրենական մեծ պատերազմի փորձը աներկբայորեն վկայում է, որ օբյեկտիվորեն հիմնական տեսակի մարտական գործողություն կարող է լինել միայն հարձակումը: Առանց հարձակվելու հնարավոր չէ հասնել հաղթանակի: Սակայն պատերազմի հաջող վարման համար անհրաժեշտ է վարպետորեն զուգակցել ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանո-

[1] Տես *В. Бланк.* Развитие тактики в мировую войну. Петроград, 1923:

ղական գործողությունները: Սակայն պաշտպանությանը ևս պետք է վերաբերվել ամենայն լրջությամբ: Պատերազմի սկզբում պաշտպանությունը թերագնահատելու համար մենք թանկ վճարեցինք:

Օպերատիվ պլանները ցույց են տալիս, որ մենք պատրաստվում էինք պաշտպանվելու: Բայց սխալ էինք պատկերացնում պաշտպանողական օպերացիայի բնույթը: Պաշտպանությունը դիտվում էր որպես մի կարճատև գործողություն՝ ուղղված հակառակորդի ներխուժման հետմղմանը, որին պետք է արագորեն հաջորդեր հարձակումը: Ռազմավարական մասշտաբով պաշտպանությունը, որի ժամանակ օգտագործվեն հիմնական ուժերը, ընդհանրապես չի նախատեսվել: Նման գործողությունների պետք եղավ դիմել արդեն պատերազմի ժամանակ՝ անբարենպաստ հանգամանքների ճնշման պայմաններում: Հաշվի չէր առնվում, որ կարճ ժամանակում հակառակորդի գերազանցող ուժերի հետմղումը ուժերի միայն մի մասի գործարկմամբ պարզապես անիրագործելի է: Դրա համար պահանջվում է մի շարք լարված ու տևական պաշտպանողական օպերացիաների ու ճակատամարտերի ձեռնարկում:

Բայց գլխավորն այն է, որ ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ համաշխարհային պատերազմների փորձը նման պնդումները չի հաստատում: Պատերազմի ժամանակ չի եղել որևէ հաջողությամբ պսակված պաշտպանողական օպերացիա, որն անցկացված լիներ հարձակվող կողմի ուժերից նվազ ուժերով: Իհարկե, երբ ուժերն ու միջոցները բավարար չեն, միակ ելքը պաշտպանությանը դիմելն ու զբաղեցված բնագիծը որոշ ժամանակ պահելն է: Բայց եթե հակառակորդը հարձակման է անցնում վճռական նպատակներով, ապա միշտ չէ, որ հնարավոր է լինում նրան պակաս ուժերով կանգնեցնել, առավել ևս՝ խափանել հարձակումն ու պարտության մատնել: 1941–1942 թթ. հաջողվում էր հակառակորդի հարձակումը կասեցնել միայն հարյուրավոր կիլոմետրերով երկարատև նահանջից և մարտի մեջ թարմ պահուստի զորամուտից հետո: Ստալինգրադի ուղղությամբ ձեռնարկված պաշտպանողական օպերացիայի ժամանակ ռազմակայանից տեղափոխվել են 87 նոր զորամիավորումներ, ինչը 2 անգամ ավելի էր, քան այդ օպերացիայի սկզբում գործարկված զորամիավորումների թիվը: Հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը հնարավոր է հետ մղել մարտավարական օղակում: Սակայն օպերատիվ-ռազմավարական մասշտաբներում հարձակվողը, ունենալով կրակային խոցման հզոր միջոցներ ու տարաշարժուն զորք ու ավիացիա, եթե տիրում է նախաձեռնությանը, հնարավորություն է ստանում ընտրված ուղղություններում ստեղծելու բազմակի, ճնշող գերազանցություն, և նրա խորագնա ճեղքումները հետ մղելու համար անհրաժեշտ են բավական մեծ ուժեր: Այդ է պատճառը, որ, ինչպես ցույց է տալիս պատերազմի փորձը, հակառակորդի մեծ հարձակումը հաջողությամբ հետ մղելու և խափանելու նպատակով ձեռնարկվող պաշտպանողական օպերացիայի համար պահանջվում են ոչ շատ պակաս ուժեր ու միջոցներ, քան հարձակվելու համար: Դա հաստատվում է նաև պատերազմի վերջում Բալատոն լճի մոտ ձեռնարկված պաշտպանողական օպերացիայով: Այս կարևոր

փորձը նպատակահարմար է հաշվի առնել նաև արդի պայմաններում պաշտպանություն կազմակերպելու ժամանակ:

Այսպիսով՝ խորհրդային պատերազմական ռազմավարությունը հաղթանակի ռելսերի վրա փոխադրվեց Ստալինգրադի ճակատամարտի շրջանում: Նրա կայացման գագաթնակետ կարելի է համարել Կուրսկի ճակատամարտի շրջանը: Հաղթանակի ռազմավարության ձևավորման համար պահանջվեց շուրջ երկու տարի: Կայացման տևականության պատճառը կադրերն էին: Պատերազմից առաջ եղած 24 մարշալներից ու գեներալներից, որոնք 1941 թ. առաջադրվեցին որպես ռազմաճակատների հրամանատարներ, փորձությունն անցան միայն 5 հոգի, որոնք ռազմաճակատների զորքերի հրամանատարներ էին նաև Հայրենական մեծ պատերազմի ավարտական փուլում: 1944 թ. հոկտեմբերից մինչև պատերազմի ավարտը ռազմաճակատների հրամանատարներ էին մարշալներ Լ. Ա. Գովորովը, Գ. Կ. Ժուկովը, Ի. Ս. Կոնևը, Ռ. Յա. Մալինովսկին, Հ. Ք. Բաղրամյանը, Ֆ. Ի. Տոլբուխինը, Կ. Կ. Ռոկոսովսկին, Ա. Ի. Երյոմենկոն: Դրան էապես նպաստեց այն վիթխարի աշխատանքը, որը ռազմական կառավարման մարմինների ձևավորման ուղղությամբ վարում էր Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին զարգանում էր նաև օպերատիվ արվեստը: Նրա առաջին օրերին արդեն պարզ դարձավ, որ օպերացիաների վարման վերաբերյալ տեսակետներում կան լուրջ թերություններ: Հարկ եղավ այդ օպերացիաները վարելու բացառիկ բարդ պայմաններում և շատ ավելի մեծ մասշտաբներով, քան ենթադրվում էր: Նախապատերազմյան տարիներին թույլ տված սխալները վերացվում էին շատ ծանր արյունալի ճակատամարտերի ընթացքում: Հանկարծակի ագրեսիայի հետևանքը մեր զորքերի անբավարար պատրաստությունը հանգեցրեց այն բանին, որ բանակներն ու ռազմաճակատները պաշտպանության էին անցնում լայն ճակատով (բանակները՝ 100–200, ռազմաճակատները՝ 300–500 կմ և ավելի), ստիպված էին դիմել օջախային պաշտպանության գծային մարտակարգով, օպերատիվ դասավորությունում մեծ բացվածքների ու չպաշտպանված զորաթևերի առկայությամբ: Հակատանկային ու հակաօդային պաշտպանությունները սակավարդյուն էին, անբավարար էր տեղանքի ճարտարագիտական սարքավորումը[2]:

1944 թ. ավարտին հասցվեց օպերատիվ արվեստի կայացումը: Օպերատիվ արվեստի՝ կատարելության մակարդակին հասնելու վկայությունն է Բելոռուսական ռազմավարական հարձակողական օպերացիան: Դրան նպաստել էր Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանի ու Գերագույն շտաբի ղեկավարությունների և ռազմաճակատների հրամանատարությունների ստեղծագործական աշխատանքը՝ նպատակաուղղված

---

[2] Տես *А. А. Корабельников.* Подвиг на Дальнем Востоке. Сборник статей. «Победа на Дальнем Востоке». К 70-летию Победы над империалистической Японией. М., 2016. сс. 62–74:

մարտական փորձի պատեհաժամ ընդհանրացմանն ու զորքերին փոխանցմանը:

Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանը, Գերագույն շտաբն ու ռազմաճակատների հրամանատարություններն սկսել էին սևեռուն ուշադրության արժանացնել կադրերի ընտրությունն ու տեղաբաշխումը: 1944 թ. աշնան սկզբին բանակների հրամանատարների ու նրանց շտաբների կազմում ընդգրկված էին մարտական փորձ ունեցող, զորավարական տաղանդ դրսևորած առավել լավ պատրաստված գեներալներ ու սպաներ: Նման զորավարներ էին գեներալ-գնդապետ Պ. Ի. Բատովը, Ա. Պ. Բելոբորոդովը, Պ. Ա. Բելովը, Ա. Ա. Գրեչկոն, Վ. Ի. Չույկովը, Պ. Լ. Ռոմանենկոն, Ի. Ի. Ֆեդյունինսկին, ինչպես նաև տանկային բանակների հրամանատարներ Ս. Ի. Բոգդանովը, Դ. Դ. Լելյուշենկոն, Ա. Գ. Կրավչենկոն, Մ. Ե. Կուտակովը, Պ. Ս. Ռիբալկոն և ուրիշներ:

1942 թ. նոյեմբերի 9-ին ԽՍՀՄ Պաշտպանության ժողկոմի հմ. 347 հրամանով գործողության մեջ դրվեց Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի հետևակի նոր Մարտական կանոնադրությունը: Դրա նախաբանում ասվում էր, որ նախկին Մարտական կանոնադրության որոշ դրույթներ, որոնք գոյություն ունեին 1927 ու 1938 թթ., հնացել են և կարող են առաջ բերել մեծ վնասներ: Այդ հանգամանքը գիտակցելու համար պահանջվեց 1941 թ. կորցնել 4473,82 հազար և 1942 թ.՝ 3258,2 հազար մարդ (անդառնալի կորուստներ) ու 4111,1 հազար մարդ (սանիտարական կորուստներ)[3]:

Կանոնադրության ընդհանուր դրույթներում նաև ձևակերպված էին հետևակի խնդիրները.

«– հարձակողական մարտում հմտորեն զուգակցելով կրակն ու շարժումը՝ մերձենալ հակառակորդին, հարձակվել նրա վրա, գերեվարել կամ ձեռնամարտում ոչնչացնել և ամրապնդվել զավթած տեղանքում,

– պաշտպանողական մարտում հզոր ու դիպուկ կրակով և վճռական հակահարձակումներով հետ մղել հակառակորդի հետևակի ու տանկերի գրոհը, նրան հասցնել ծանր կորուստներ և իր ձեռքում պահպանել պաշտպանվող տեղանքը:

Անհողդողդ պաշտպանությունը հետևակի պատվի խնդիր է: Նա կարող է հետ քաշվել միայն ավագ պետի հրամանով»:

Բայց դեռ որքան ժամանակ և արյուն պահանջվեց, որպեսզի Մարտական կանոնադրության տեքստին հնարավորինս մոտ պահպանվեն 1941–1942 թթ. դարձյալ արյունով գրված տառերը, որպեսզի վերջապես 1945 թ. տոնվի թշնամու դեմ տարած հաղթանակը:

Կրկին այդ են վկայում կորուստները, որոնք, օրինակ, կրել է սպայակազմը: 1943 թ. դրանք կազմել են 217 հազար մարդ ու ևս 400 հազարը դուրս են մնացել գործող բանակից վիրավորումների և հիվանդությունների

---

[3] Տես «История военного искусства. Военное искусство в третьем периоде Великой Отечественной войны, при разгроме империалистической Японии и в послевоенный период (1944–1953 гг.)». Учебник. Книга 3. М., 1961:

պատճառով: 1944 թ. սպայակազմի ընդհանուր կորուստները կազմեցին ավելի քան 500 հազար մարդ, իսկ 1945 թ. բանակն ու նավատորմը կորցրին ավելի քան 80 հազար սպայի[4]:

Սակայն մինչ այս կանոնադրական փաստաթղթի ընդունումը միայն անդադրում ու լարված մարտական գործողություններն էին զինվորական կադրերին հարստացնում ու կոփում մարտական փորձով, նրանց դարձնում էին ավելի տոկուն, իմաստուն և իրենց ուժերի նկատմամբ վստահ, հարկադրում էին տիրապետելու ռազմարվեստի՝ 1941 թ. դեռ անմեկնելի գաղտնիքներին: Պատերազմի սկզբում չկար որևէ հրամանատար, որը տեսականորեն չիմանար վճռական ուղղություններում հիմնական ջանքերի կենտրոնացման, անընդհատ հետախուզություն վարելու հնարավորության, հակառակորդի հուսալի կրակային խոցման մասին:

Սակայն պահանջվեցին մեծաթիվ զոհեր, ջանքեր ու ժամանակ, մինչև որ հրամանատարների մեծ մասը յուրացրեց այդ կանոնները: Պատերազմն ամենայն անողոքությամբ ցույց տվեց, որ ռազմական արվեստի տեսության իմացության և գործնական տիրապետության միջև կա մի հսկայական տարածություն: Հարկ է մեկ անգամ էլ հիշեցնել, որ ռազմավարական պաշտպանության խորքային էությունն ամենաբարձր շտաբային մակարդակում ըմբռնված չէր ոչ միայն 1941, այլև 1942 թվականին: Եվ միայն 1943 թ.՝ Կուրսկի ճակատամարտին պատրաստվելու ժամանակ, հնարավոր եղավ այն յուրացնել: Ահա թե ինչ դժվարությամբ են գործնականում բացորոշվում ռազմական արվեստի խորհուրդները:

Զորամիավորումների ու զորամասերի պատրաստականությանն ու մարտական ներդաշնակությանը շատ բան տվեց մարտական պայմաններում նրանց չորս տարվա ուսուցումը: Հրամանատարները, շտաբներն ու զորքերը ոչ միայն գործնականում հմտացան: Յուրաքանչյուր օպերացիայից առաջ շատ անգամներ էին վարժվում՝ հակառակորդի համապատասխան պաշտպանությունը վերարտադրելով մի այնպիսի տեղանքում, որը շատ նման լիներ ապագա գործողությունների վայրին: Միայն Բելոռուսական հարձակողական օպերացիայի նախապատրաստման ժամանակ ռազմաճակատների ու բանակների հրամանատարներն սկսեցին սևեռուն ուշադրություն դարձնել ոչ միայն զորամիավորումների ու զորամասերի, այլև ստորաբաժանումների հրամանատարների պատրաստման վրա: Լիարժեք կերպով ձեռնամուխ եղան Սուվորովի հիմնական սկզբունքի իրացմանը՝ «սովորեցնել այն, ինչն անհրաժեշտ է մարտում»:

Պատերազմի ավարտական փուլում կառավարման մարմինների գործունեության մեջ այս սկզբունքը հասցված էր կատարելության: Ապացույց կարող է լինել հետևյալ օրինակը: Դիվիզիայի հրամանատարը օպերատիվ բաժանմունքի պետին ցույց էր տալիս այն տեղը, որտեղ պետք է ծավալվեր կառավարման կետը: Եվ արդեն առանց հատուկ ցուցումների դրա համար

[4] Տես նույն տեղում:

նախապես նշանակված օպերատորը, հետախույզը, կապավորը, սակրավորը գիտեին, թե որ մեքենայով և ուր գնալ, ինչ վերցնել իրենց հետ և ինչպես ամենը նախապատրաստել: Նման ներդաշնակություն էր տիրում բոլոր օղակներում՝ Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանից մինչև ստորաբաժանում: Բոլոր գործողությունները, յուրաքանչյուր զինվորի գործառութային պարտականությունները վերջնամշակվում ու հղկվում էին՝ հասցվելով կատարելության: Դրանով ապահովվում էին կառավարման բարձր մակարդակի կազմակերպվածությունը, փոխըմբռնումը և ներդաշնակությունը:

Կառավարման մարմիններում նման վիճակի հասնելու համար անհրաժեշտ էր ստեղծագործական մակարդակով աշխատանք կատարել համազորային դիվիզիաների հրամանատարների ընտրազատման ուղղությամբ: Նրանց կազմն ընտրվել ու տեղաբաշխվել էր՝ գալիք խնդիրներին համապատասխան: Նրանց թվում կարելի է հիշատակել հրաձգային դիվիզիաների հրամանատարներ գեներալ-մայորներ Բ. Բ. Գորոդովիկովին, Գ. Ի. Խետագուրովին, Ն. Ս. Սամոխվալովին, Վ. Ե. Վլասովին, Վ. Գ. Չեռնովին, Ա. Պ. Կվաշնինին, Պ. Պ. Բիբիկովին, գնդապետներ Գ. Ի. Դրուժինինին, Վ. Ա. Գուսևին, Վ. Ի. Կոժանովին, Ա. Գ. Կուդրյավցևին, Ա. Յա. Օռլանովսուն և ուրիշների:

Եվրոպայում ռազմական գործողությունների վարման ավարտական փուլում ռազմական արվեստի նորարարների գործունեության արդյունքները հույժ տպավորիչ են: Մոտ 9 մլն խորհրդային զինվոր հաշվվող նրանց գլխավորած զորքերը մասնակցեցին 11 եվրոպական պետությունների ազատագրմանը: Եվրոպայի ազատագրման ժամանակ Կարմիր բանակի անդառնալի կորուստները կազմեցին մոտ 1 մլն մարդ, ինչը պատերազմի ամեն նախորդ տարվա կորուստների մոտ երրորդ մասն է:

Խորհրդա-ճապոնական պատերազմի գլխավոր արդյունքը ճապոնական զորքերի լիակատար ջախջախումն էր Մանջուրիայում, Հյուսիսային Կորեայում, Սախալինում և Կուրիլյան կղզիներում: Եվ դա ընդամենը 25 օրվա ընթացքում[5]:

Ինչպե՞ս դրան հասանք: Ռազմաճակատային փորձ ունեցող հրամանատարներն առանձնակի պարզությամբ էին հասկանում, որ առաջադրված խնդրի հաջող կատարման առավել գլխավոր, վճռական պայմանները երկուսն են: Առաջինն այն է, որ պետք է ապահովվի հակառակորդի պաշտպանության համակարգի ու կրակային միջոցների մանրակրկիտ հետախուզում, իսկ երկրորդն այն էր, որ պետք է ապահովվի հրետանու կրակի ու ավիացիայի հարվածների ճշգրիտ վրադրումը բացահայտված կոնկրետ նշանակետերի վրա՝ դրանց հուսալի ոչնչացման համար: Այդ հարցին վերաբերմունքն էլ պայմանավորում էր գալիք օպերացիային մարտական

[5] Տես *А. А. Корабельников.* Взаимосвязь военной стратегии, оперативного искусства и тактики в современных условиях. «Вестник Сибирского отделения Академии военных наук». 2019, № 52:

պատրաստման ուղղվածությունը: Պատերազմի ավարտական փուլում ցանկացած փորձառու հրամանատար գիտեր՝ իր մասին դատելու են ոչ թե այն բանի հիման վրա, թե ինչպես է նա զեկուցում որոշումը, արտաքուստ «ճիշտ» կազմակերպում մարտը, այլ միայն ու միայն ըստ մարտական խնդրի կատարման որակի: Նման մոտեցումը հնարավորություն էր տալիս ձևավորելու սպաների կոնկրետությունն ու գործունեությունը:

Մենք պետք է ելնենք այն բանից, որ ռազմական արվեստն սկսվում է այնտեղ, որտեղ մի կողմից, խոր տեսական գիտելիքներն ու դրանց ստեղծագործական կիրառումը հրամանատարին օգնում են ավելի լավ տեսնելու տեղի ունեցող երևույթների ընդհանուր կապը և վստահորեն կողմնորոշվելու իրադրությունում, մյուս կողմից՝ հրամանատարը, իրեն չկաշկանդելով ընդհանուր տեսական սխեմայով, ձգտում է ավելի խոր ներթափանցելու իրականում ստեղծված իրադրության էության մեջ, ըմբռնելու դրա բարենպաստ ու անբարենպաստ առանձնահատկությունները և ըստ դրանց վերլուծության գտնելու ուրույն լուծումներ և գործողությունների եղանակներ, որոնք առավելագույնս համապատասխանեն տվյալ իրադրության կոնկրետ պայմաններին և առաջադրված խնդրին: Հենց այդ պատճառով իրադրության կոնկրետ պայմաններին հրամանատարների ու զորքերի որոշումների և գործողությունների համապատասխանության առավելագույն աստիճանն այդքան կայուն օրինաչափությամբ զգացնել է տալիս ամբողջ պատմության ընթացքում, քանի որ հենց դրա միջոցով է դրսևորվում ռազմարվեստի գլխավոր էությունը, որը պայմանավորում է պատերազմում առավել էական ու կայուն առնչությունները, օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների հարաբերակցությունը, ուժի ներքին շարժումը և հաղթանակների ու պարտությունների հիմնական պատճառները: Դա է ռազմական արվեստի հիմնական օրենքը:

Վերը շարադրվածի հիման վրա կարելի է հանգել այն եզրակացության, որ պատերազմի ընթացքում դրսևորվեց խորհրդային ռազմական արվեստի բարեշրջության միտումը: Պատերազմի ընթացքում բացահայտվեցին նախապատերազմյան շրջանի օպերատիվ արվեստում ու մարտավարությունում առկա սխալներն ու թերությունները, որոնք հարկ եղավ հաղթահարել հսկայական ջանքերի գործադրմամբ: Ընդսմին դրա ամեն մի բաղադրիչ ուներ ըստ ժամանակի իր համապատասխան շրջանը: Այսպես. պատերազմական ռազմավարության վերակառուցման համար պահանջվեց երկու տարի, օպերատիվ արվեստի համար՝ երեք տարի: Մարտավարությունը ռազմավարության և օպերատիվ արվեստի հետ իր փոխկապվածությունը հաստատեց և իրեն ներկայացվող պահանջներին համապատասխանեց միայն պատերազմի ավարտական շրջանում: Պատերազմի փորձը ցույց տվեց, որ ռազմարվեստի բաղադրիչների տեսության ու պրակտիկայի զարգացման համար վճռորոշ է հրամանատարների ու զորքերի պատրաստման մակարդակը: Որքան էլ կատարյալ լինեն սպառազինությունը, ռազմական տեխնիկան, այդուհանդերձ, դրանք չեն կարող դառնալ ռազմարվեստի

զարգացման համար վճռորոշ գործոն, եթե հրամանատարներն ու զորքերը չունեն խոր տեսական գիտելիքներ և մարտական իրադրությունում դրանք կիրառելու ստեղծագործ վարպետություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *М. А. Гареев.* Сражения на военно-историческом фронте. Сборник статей. Изд. 2. М., 2018.
2. *О. С. Смыслов.* Окопная правда войны. М., 2008.

# СОВЕТСКОЕ ВОЕННОЕ ИСКУССТВО В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ: ЭВОЛЮЦИЯ ЕГО В ИСКУССТВО ПОБЕДЫ

*А. А. КОРАБЕЛЬНИКОВ, полковник, доктор военных наук, профессор, заслуженный деятель науки РФ, старший научный сотрудник Научно-исследовательского центра (системных оперативно-тактических исследований Сухопутных войск)*

Разгром гитлеровской Германии и ее европейских сателлитов – Италии, Австрии, Румынии, Венгрии, Словакии, Финляндии, а в последующем и милитаристской Японии имеет глобальное значение для всего мирового сообщества. Казалось бы, человечество никогда не забудет годы, когда Европа находилась под пятой мракобесов, покрытая сетью концентрационных лагерей. В годы второй мировой войны во многих странах работали «фабрики смерти», истребляя людей разных национальностей. Разгром коричневой чумы XX века, установление мира было достигнуто большими усилиями и жертвами стран и народов, боровшихся с фашизмом, и прежде всего Советского Союза.

За годы Великой Отечественной войны наша страна потеряла около 27 млн лучших сынов и дочерей, а вторая мировая унесла более 50 млн человеческих жизней (по другим данным около 70 млн чел.). Самая тяжелая и кровопролитная борьба шла на советско-германском фронте. Решающий вклад в разгром немецко-фашисткой коалиции внес советский, прежде всего, русский народ. Победа в войне – пример великого подвига и массового героизма граждан Союза. Прикрываясь демагогией о демократии и борьбе с коммунизмом, немецкие фашисты, как впрочем, и их союзники – итальянцы, венгры, австрийцы, румыны, финны и прочие – люто ненавидели все, что носило печать свободы. Прошло много лет, выросли и состарились дети войны, внуки и правнуки тех, кто освободил народы Европы и мир от фашизма и японского милитаризма, а кровь продолжает литься во многих странах мира.

На территории СССР были оккупированы 672 города в 8 из 16 республик Советского Союза. Фашистами разрушено: 1710 городов и поселков городского типа; 70000 сел и деревень; 32000 промышленных предприятий; 65000 км путей. Уничтожено 30 % национального богатства. Таким образом, палачи утверждали свое право на разбой, монополию на владычество и новый порядок. Этого забывать никак нельзя.

События героического прошлого века, испытавшие наши народы на крепкую дружбу и верность присяге, уходят все дальше и дальше. Пройдет не так много времени, и не останется тех, кто воевал с фашизмом, отстоял нашу землю. Но это никому не дает права трактовать события войны в угоду политическим авантюристам, проводить ревизию завоеваний народа, победившего фашизм. Попытки представить ход и результаты второй мировой и Отечественной войн только отдельными сражениями не состоятельны. Следует видеть политическую сторону войны, противоборство двух систем – социалистической и капиталистической,– в которой социалистическая взяла верх. При этом необходимо обратить пристальное внимание на средства политики, с помощью которых была одержана победа нашим государством. К этим средствам следует отнести военную стратегию и тактику, которым практически не уделяется внимания в оценке итогов Великой войны.

Сегодня не является секретом, что в течение первого и второго периодов войны основным видом наших военных действий являлась оборона, а основной формой военных действий были фронтовые и армейские оборонительные операции. А ведь в предвоенный период в Красной Армии оборону рассматривали лишь как возможный вид боевых действий. При этом в первые же дни Великой Отечественной войны стало очевидным, что проблема оперативной обороны наиболее полно может быть решена не в армейской, а во фронтовой оборонительной операции.

Более того, война подвергла суровой проверке довоенную теорию оперативного искусства и тактики Сухопутных войск.

Теория оперативного искусства хоть и правильно отражала вопросы подготовки и ведения операции и боя, однако многие теоретические разработки нуждались в пересмотре. Следовательно, как командным, так и научным кадрам пришлось ежедневно и критически осваивать боевой опыт, с огромным трудом преодолевая достаточно серьезные недостатки в теоретической и практической подготовке войск, вырабатывая совершенно новые формы и способы борьбы с противником применительно к реальной боевой обстановке.

Единственным средством разгрома вооруженной силы врага и

победы над ним являлся бой[1]. Таким образом, тактика сведена к бою, прежде всего, наступательному. Это привело к тому, что в начале военных действий как военачальникам, так и командирам, нередко приходилось «сталкиваться с такими явлениями, которые» не предусматривались никакими теоретическими положениями или противоречили им, поэтому возникала необходимость в поиске совершенно новых способов действий. Как правило, на войне более успешно действовали командиры, имеющие более высокую теоретическую подготовку.

Возникает необходимость в выявлении эволюции русского военного искусства, приведшего его к вершине, позволяющей с полной уверенностью признать «искусством Победы».

Если говорить об оперативно-стратегической стороне дела, то наша теория и практика имели совершенно смутное представление о том, как может сложиться начальный период войны, как должны действовать войска в случае внезапного нападения противника.

Предполагалось, что все будет происходить как и в первую мировую войну, когда в ходе приграничных сражений, под прикрытием передовых соединений будет осуществляться отмобилизование и развертывание основных сил для решающих сражений. Но в 1941 г. нашим приграничным округам противостояли заранее отмобилизованные и развернутые группировки немецких войск, готовые в любой момент нанести удар. По своему оперативному положению, наши войска не были в полной мере готовы ни к обороне, ни к наступлению. Причем опыт показывает, что командующим, командирам еще в мирное время надо не только теоретически намечать себе схему предстоящих действий, но реально в живом виде осмыслить, как будет действовать противник и как организовать действия своих войск.

Особо хотелось бы сказать о наступлении и обороне. Опыт Великой Отечественной войны убедительно показал, что объективно основным способом боевых действий может быть только наступление. Без наступления невозможно достичь победы. Однако для успешного ведения войны нужно умелое сочетание как наступательных, так и оборонительных действий. Но к обороне тоже надо относиться серьезно. За недооценку обороны нам в начале войны пришлось тяжело расплачиваться.

Оперативные планы свидетельствуют, что обороняться мы собирались. Но неправильно представляли себе характер оборонительных операций. Оборона рассматривалась как кратковременные действия по отражению вторжения противника с быстрым переходом в наступление. Оборона в стратегическом масштабе с использованием основ-

[1] См. *В. Бланк.* Развитие тактики в мировую войну. Петроград, 1923.

ных сил вообще не предусматривалась. К таким действиям пришлось переходить уже в ходе войны под давлением неблагоприятно сложившихся обстоятельств. Не учитывалось, что отражение превосходящих сил противника невозможно осуществить накоротке лишь частью сил. Для этого требуется ведение целого ряда напряженных и длительных оборонительных операций и сражений.

Но главное в том, что ни опыт первой, ни второй мировых войн такие утверждения не подтвердил. За время войны не было ни одной успешной оборонительной операции, проведенной значительно меньшими силами, чем у наступающего противника. Конечно, когда сил и средств недостаточно, нет другого выхода, как переходить к обороне и определенное время удерживать занимаемый рубеж. Но если противник переходит в наступление с решительными целями, то, располагая значительно меньшими силами, остановить его и тем более сорвать наступление и нанести поражение наступающему противнику далеко не всегда осуществимо. В 1941-1942 гг. удавалось остановить наступление противника лишь после длительного отступления на сотни километров и ввода в сражение свежих резервов. В ходе оборонительной операции на Сталинградском направлении из резерва Ставки было переброшено 87 новых соединений – это в 2 раза больше, чем было к началу оборонительной операции. Возможно отражение атак превосходящих сил противника в обороне в тактическом звене. Но в оперативно-стратегическом масштабе при наличии мощных средств огневого поражения и высокой маневренности войск и авиации наступающий, владея инициативой, имеет возможность создавать многократное, подавляющее превосходство на избранных направлениях, и для парирования его глубоких прорывов нужны достаточно крупные силы. Поэтому, как показал опыт войны, для проведения оборонительной операции, рассчитанной на успешное отражение и срыв крупного наступления противника, требуется не на много меньше сил и средств, чем для наступления. Это подтвердилось и в оборонительных операциях у озера Балатон в конце войны. Весь этот опыт желательно учитывать при организации обороны в современных условиях.

Таким образом, военная советская стратегия встала на победные рельсы в период Сталинградской битвы. Кульминационным периодом ее становления можно считать Курскую битву. На формирование стратегии Победы потребовалось более двух лет. Причиной долгого становления – кадры. Накануне войны из 24 маршалов и генералов, выдвинутых на роль командующих фронтами в 1941 г., суровый отбор прошли только пять человек, оказавшись командующими войсками фронтов на завершающем этапе Великой Отечественной войны. С октября 1944 г. и до конца войны командующими фронтов были мар-

шалы Л. А. Говоров, Г. К. Жуков, И. С. Конев, Р. Я. Малиновский, И.Х. Баграмян, Ф.И. Толбухин, К.К. Рокоссовский, А.И. Еременко. Этому способствовала титаническая работа Ставки Верховного Главнокомандования по формированию органов военного управления.

В годы Великой Отечественной войны развивалось и оперативное искусство. В первые же дни ее ведения стало ясно, что во взглядах на ведение операций есть серьезные просчеты. Их пришлось вести в исключительно сложных условиях и в значительно больших, чем это предполагалось, масштабах. Допущенные в предвоенные годы ошибки исправлялись в ходе тяжелейших кровопролитных сражений. Недостаточная подготовленность наших войск к отражению внезапной агрессии привела к тому, что армии и фронты, переходили к обороне на широком фронте (армия – 100–200, фронт – 300–500 км и более), вынуждены были вести очаговую оборону, в линейных боевых порядках, с наличием больших разрывов и открытых флангов в оперативном построении. Противотанковая и противовоздушная оборона была малоэффективной, слабо осуществлялось инженерное оборудование местности[2].

В 1944 году завершилось становление оперативного искусства. Показательным в достижении уровня совершенства оперативного искусства является Белорусская стратегическая наступательная операция. Этому способствовала творческая работа руководства Ставки Верховного Главнокомандования, Генерального штаба и командования фронтов по своевременному обобщению и доведению до войск боевого опыта.

Ставка Верховного Главнокомандования, Генеральный штаб и командование фронтов самое пристальное внимание стали уделять подбору и расстановке кадров. Состав командующих армиями и их штабов к осени 1944 года был сформирован из наиболее подготовленных генералов и офицеров, имевших боевой опыт, проявивших полководческий талант. Это такие полководцы как генерал-полковники П. И. Батов, А. П. Белобородов, П. А. Белов, А. А. Гречко, П. Л. Романенко, И. И. Федюнинский, В. И. Чуйков, а также командующие танковыми армиями С. И. Богданов, А. Г. Кравченко, М. Е. Кутаков, Д. Д. Лелюшенко, П. С. Рыбалко и другие.

9 ноября 1942 г. Приказом НКО СССР № 347 был утвержден и введен в действие новый Боевой устав пехоты Рабоче-Крестьянской Красной Армии. В его преамбуле сказано, что некоторые положения Боевого устава, существующие с 1927-го и 1938-го гг., назвали устаревшими и способными принести большой вред. Для осознания этого

[2] См. *А. А. Корабельников.* Подвиг на Дальнем Востоке. Сборник статей. «Победа на Дальнем Востоке». К 70-летию Победы над империалистической Японией. М., 2016, сс. 62–74.

понадобилось потерять в 1941 г. 4473,820 тыс. и в 1942 г. – 3258,2 тыс. (безвозвратные потери) и 4111,1 тыс. человек (санитарные потери)[3].

В общих положениях устава были определены и задачи пехоты:

«– в наступательном бою умело сочетая огонь и движение, сблизиться с противником, атаковать его, захватить в плен или уничтожить в рукопашной схватке и закрепить за собой захваченную местность;

– в оборонительном бою мощным и метким огнем и решительными контратаками отразить атаки пехоты и танков противника, нанести ему тяжелые потери и удержать за собой обороняемую местность.

Стойкая оборона дело чести пехоты. Она может отходить только по приказу старшего начальника».

Но сколько еще потребовалось времени и крови, чтобы соблюдать ближе к тексту написанные опять-таки кровью в 1941-1942 гг. буквы Боевого устава, чтобы, наконец-то одержать победу над врагом в 1945-м!

Опять наглядно об этом свидетельствуют потери, например, офицерского состава, которые в 1943 году составили 217 тыс. человек, а 400 тыс. выбыли из действующей армии в связи с ранениями и болезнью. В 1944 г. общие потери офицерского состава составили более 500 тыс. человек. В 1945 г. армия и флот потеряли более 80 тыс. офицеров[4].

Однако до принятия этого уставного документа только непрерывные и напряженные боевые действия обогащали боевым опытом, закаляли военные кадры, делали их более стойкими, мудрыми и уверенными в своих силах, вынуждали овладевать еще непостижимыми в 1941-м секретами военного искусства. В начале войны не было командира, который бы в теории не знал о необходимости сосредоточения основных усилий на решающих направлениях, возможности ведения непрерывной разведки, организации надежного огневого поражения противника.

Но потребовались немалые жертвы, усилия и время, пока большинство командиров овладели этими канонами. Со всей беспощадностью война показала: между знанием теории и практическим владением военным искусством огромная дистанция. Необходимо еще раз напомнить, что глубинная суть организации стратегической обороны не была уяснена и на самом штабном верху не только в 1941-м, но и в 1942-м. И только в 1943 году при подготовке к Курской битве ею суме-

---

[3] См. «История военного искусства. Военное искусство в третьем периоде Великой Отечественной войны, при разгроме империалистической Японии и в послевоенный период (1944–1953 гг.)». Учебник. Книга 3. М., 1961.

[4] См. *там* же.

ли до конца овладеть. Так трудно раскрываются на практике таинства военного искусства.

Многое дали для выучки и боевого слаживания соединений и частей четыре года непрерывной учебы в боевых условиях. Командиры, штабы и войска не только получили практику. Перед каждой операцией многократно тренировались, воссоздавая соответствующую оборону противника на местности, схожей с той, где предстояло действовать. Только при подготовке Белорусской наступательной операции командующие фронтами и армиями пристальное внимание стали уделять подготовке не только командиров соединений, частей, но и подразделений. Вплотную приступили к реализации основного суворовского принципа: «учить тому, что необходимо в бою».

На завершающем этапе войны в деятельности органов управления этот принцип был доведен до совершенства. Подтверждением может служить следующий пример. Командир дивизии показывал начальнику оперативного отделения место, где должен быть развернут пункт управления. И уже без особых указаний заранее назначенные для этого оператор, разведчик, связист, сапер знали, на какой машине и куда ехать, что взять с собой и как все подготовить. Такая слаженность была и во всех звеньях – от Ставки Верховного Главного командования до подразделения. Все действия, функциональные обязанности каждого воина отрабатывались до автоматизма. Это обеспечивало высокую организованность, взаимопонимание и слаженность управления.

Для достижения этого положения в органах управления необходимо было провести организованную работу на творческом подходе по подбору командиров общевойсковых дивизий. И состав их был подобран и расставлен в соответствии с предстоящими задачами. Среди них можно выделить следующих командиров стрелковых дивизий генерал-майоров Б. Б. Городовикова, Г. И. Хетагурова, Н. С. Самохвалова, В. Е. Власова, В. Г. Чернова, А. П. Квашнина, П. Н. Бибикова, полковников Г. И. Дружинина, В. А. Гусева, В. И. Кожанова, А. Г. Кудрявцева, А. Я. Ордановского и др.

Итоги деятельности новаторов военного искусства на завершающем этапе боевых действий в Европе впечатляющи. Войска, возглавляемые ими в количестве около 9 млн советских воинов, участвовали в освобождении 11 европейских стран. Безвозвратные потери Красной Армии при «освобождении Европы» составили около 1 миллиона человек, что составляет примерно одну треть потерь каждого предшествующего года войны.

Главным итогом советско-японской войны стал быстрый и полный

разгром японских войск в Маньчжурии, Северной Корее, на Сахалине и Курильских островах. И это всего за 25 дней военных действий[5].

Как это достигалось? Командиры с фронтовым опытом особенно ясно понимали, что самыми главными, решающими для успешного выполнения поставленной задачи являются два важнейших условия: первое – это тщательная разведка системы обороны и огневых средств противника, второе – точное наложение огня артиллерии и ударов авиации конкретно выявленным целям для надежного их уничтожения. Отношение к этому вопросу определяло и направленность боевой подготовки к предстоящей операции. На завершающем этапе войны любой опытный командир знал, что о нем будут судить не по тому, как он докладывает решение, внешне «правильно» организует бой, а единственно по тому, как будет выполнена боевая задача. Такой подход позволял воспитывать у офицеров конкретность и деловитость.

Нам надо исходить из того, что военное искусство начинается там, где, с одной стороны, глубокие теоретические знания и творческое их применение помогают командиру лучше видеть общую связь происходящих явлений и увереннее ориентироваться в обстановке, с другой стороны, командир, не сковывая себя общей теоретической схемой, стремится глубже проникать в суть реально сложившейся обстановки, уловить ее выгодные и невыгодные особенности и, исходя из их анализа, найти оригинальные решения и способы действий, в наибольшей степени соответствующие данным конкретным условиям обстановки и поставленной задаче. Именно поэтому максимальная степень соответствия решений и действий командующих, командиров и войск конкретным условиям обстановки дает о себе знать на протяжении всей истории с такой устойчивой закономерностью, так как именно в этом выражается главная суть военного искусства, определяющая наиболее существенные и устойчивые связи, соотношение объективных и субъективных факторов, внутреннее движение силы и основные причины побед и поражений в войне. В этом основной закон военного искусства.

На основе вышеизложенного можно сделать вывод о том, что в ходе войны проявилась устойчивая тенденция в эволюции советского военного искусства. В ходе военных действий были вскрыты существенные ошибки и недостатки в оперативном искусстве и тактике довоенного периода, которые пришлось приложением титанических усилий преодолевать. Причем каждая его составная часть имела соответствующий период по времени. Так, на перестройку военной

[5] См. *А. А. Корабельников.* Взаимосвязь военной стратегии, оперативного искусства и тактики в современных условиях. «Вестник Сибирского отделения Академии военных наук». 2019, № 52.

стратегии потребовалось два года, оперативного искусства – три года. Тактика пришла в полную взаимосвязь со стратегией и оперативным искусством и соответствовать предъявляемым требованиям к ней только лишь на завершающем этапе войны. Опыт войны показал, что определяющим в развитии теории и практики составляющих военного искусства является уровень подготовки командующих, командиров и войск. Какими бы совершенными не были вооружения, военная техника, они не могут стать основным фактором в развитии военного искусства, если командующие, командиры и войска не имеют глубоких теоретических знаний и творческих навыков по их применению в боевой обстановке.

ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. *М. А. Гареев.* Сражения на военно-историческом фронте. Сборник статей. Изд. 2. М., 2018.
2. *О. С. Смыслов.* Окопная правда войны. М., 2008.

## THE SOVIET ART OF WAR IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR: ITS EVOLUTION INTO THE ART OF VICTORY

*A. A. KORABELNIKOV, Colonel, Doctor of Military Sciences, Professor, Honored Scientist of the Russian Federation, Senior Research Fellow (Land Forces Operational-Tactical Systematic Studies) Research Centre, Military Educational and Scientific Centre of Land Forces*

SUMMARY

The defeat of Hitler's Germany and its European satellites, followed up by that of the militaristic Japan, is of global importance for the whole world community. This victory was achieved by means of great efforts and sacrifices of countries and nations who fought against fascism, and above all – of the Soviet Union. At the same time, close attention should be paid to the political means, with the help of which our state did win the victory. To these means should be attributed military strategy and tactics, which virtually fail to receive any attention in the assessment of the Great Patriotic War.

During the first and the second stages of the war, the main type of our military actions was defensive, and the main mode of military actions was front-line and army defensive operations. After all, in the pre-war period in the Red Army defense was only considered as a possible type of combat operations. Whilst, on the very first days of the Great Patriotic War, it became quite obvious that the problem of responsive defense could be solved to the fullest extent possible in the front-line defensive operation, rather than in army.

Moreover, the pre-war theory of operational art and the tactics of the

Land Forces underwent a severe testing by the war. Both the command and the academic staff had to assimilate the combat experience daily and critically, overcoming with great difficulty quite serious shortcomings in the theoretical and practical military training, developing completely new forms and methods of struggle.

In the operational-strategic aspect, our theory and practice had very vague idea of how the initial stage of the war would develop, how the troops should act in case of the enemy's sudden attack.

The experience of the Great Patriotic War convincingly showed that the objectively basic combat methods can only be offensive. There is no victory without offense. However, in order to successfully conduct war, a proficient combination of both offensive and defensive operations is required. During the war, not a single successful defensive operation was carried out by forces considerably fewer than the advancing enemy had at the time. Repulsing the attacks of the enemy's superior forces is possible in the tactical level in the defensive positions. But in the operational-strategic scale, with the deadly firepower and high maneuverability of troops and aviation, the attacking side, holding the initiative, does have the capability of reaching multiple, overwhelming superiority in selected directions, and rather large forces are needed in order to parry its deep breakthroughs.

The Soviet military strategy got on track to victory in times of the Battle of Stalingrad. The culmination point of military strategy's evolvement can be considered the Battle of Kursk. The reason for the long evolvement is the personnel.

During the years of the Great Patriotic War the operational art was also developing. Insufficient preparedness of our troops to repel the sudden aggression led the armies and fronts to assume a defense across a wide frontage (for army – 100-200 km, for front – 300-500 km and more), be forced to conduct discontinuous resistance in linear battle formations, with large gaps and open flanks in the operational disposition.

In 1944, the formation of operational art was completed. The Belarusian strategic offensive operation is indicative of achieving the level of perfection in the operational art. This was facilitated by the creative work of the leadership of the Supreme High Command General Headquarters, the General Staff and the commands of the fronts in the timely coordination and communication of combat experience to the troops.

Four years of incessant training in the combat conditions did a lot for crafting the skills and the operational coordination of tactical formations and military units. Merely when preparing the Belarusian offensive operation, the commanders of the fronts and armies began to focus on the

training of not only the commanders of formations, units, but also subunits.

The irrevocable losses of the Red Army during “liberation of Europe” amounted to about 1 million people, which makes approximately one third of the losses of each preceding year of the war.

The art of war begins where, on the one hand, profound theoretical knowledge and its creative application help the commander to better see the general relation of the occurring phenomena, and to more confidently orient himself in the situation; on the other hand, the commander, without constraining himself with a general theoretical scheme, strives to penetrate deeper into the essence of the actual situation, grasp its advantages and disadvantages and, based on their analysis, find original solutions and methods of action, most appropriate for the given specific conditions of the situation and the assigned task. That is why the maximum degree of correspondence of the decisions and actions of commanders, officers in command and troops to the certain conditions of the situation reminds of itself throughout the history with such a steadfast regularity. Here is the main essence of the military art, which determines the most significant and stable relations, the correlation of objective and subjective factors, the internal motion of force and the main reasons for victories and defeats in war. This is the basic law of the art of war.

# ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍՈՎ

*Ն. Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, ավագ լեյտենանտ, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ասպիրանտ և «ռազմական լրագրություն» դասընթացի դասախոս, «Զինուժ մեդիա» պետական հիմնարկի հեռուստալրագրող*



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետխորհրդային տարածությունում էթնոքաղաքական հակամարտությունների պրոբլեմը ժամանակակից հակամարտաբանության արդիական խնդիրներից մեկն է: Նման հակամարտությունների շարքում իր ուրույն տեղն ունի Ղարաբաղյան էթնոքաղաքական հակամարտությունը, որն առանձնանում է պատմական, էթնիկական, մշակութային արմատների խորությամբ, իրավաբանության տեսանկյունից ղարաբաղահայության գործունեության հիմնավորվածությամբ[1] և մետրոպոլիայի կիրառած բռնությունների դաժանությամբ: Հատկանշական է նաև, որ Արցախյան պրոբլեմը ոչ միայն հայ ժողովրդի և հայկական պետականության առջև ծառացած կենսականորեն կարևոր հարցերից է, այլև շնորհիվ տարածաշրջանում Արցախի գրաված ռազմավարական աշխարհաքաղաքական դիրքի հայտնվել է տարածաշրջանային և անգամ համաշխարհային դերակատարների բազմապիսի շահերի ու հետաքրքրությունների շրջանակում: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ Հարավային Կովկասը գտնվում է Հարավ–Հյուսիս ու Արևելք–Արևմուտք տրանսպորտային ուղիների և դեպի Եվրոպա էներգակիրների փոխադրման խաչմերուկում:

Եթե հաշվի առնենք, թե որքան մեծ ազդեցություն ունեն ԶԼՄ-ները հասարակական կարծիքի և անհատի հոգեկանի ու գիտակցականի ձևավորման վրա, ապա պետք է անվերապահորեն ընդունենք այն պնդման արդարացիությունը, որ հայ-ադրբեջանական հակամարտության՝ որպես հարյուրամյակներ տևող դիմաբախության ազգային-էթնիկական, պատմական, քաղաքական, իրավական, սոցիալական, հոգեբանական, քարոզչական տեսանկյունների գիտական վերլուծության ու իմաստավորման անհրաժեշտությունը ոչ պակաս կարևոր է հակամարտությունը լուսաբանողների համար:

Միջազգային քաղաքական շրջաններում Բաքուն փորձում է ադրբեջանական լրատվամիջոցների ռեսուրսի օգտագործմամբ շրջանառության մեջ

[1] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Ղարաբաղյան հակամարտության լուծման առանձնահատկությունները: «Ղարաբաղ. հակամարտություն-համաձայնություն»: Ե., 1997, էջ 5–11:

դնել այն պատկերացումը, թե հակամարտությունը ծագել ու բորբոքվել է ԽՍՀՄ լուծարման շրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման հետևանքով՝ դրանով իսկ ձգտելով միջազգային հանրության տեսադաշտից դուրս մղելու հակամարտության պատմական, քաղաքական և իրավական ակունքները, որոնք կարող էին հիմք ստեղծել հակամարտությունը ոչ իր օգտին կարգավորելու համար:

Ադրբեջանի և Թուրքիայի ղեկավարությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նկատմամբ ցուցաբերած ոչ կառուցողական մոտեցումների համար մեղադրում է ոչ միայն հայկական պետությունների ղեկավարներին, այլև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին:

Բանակցությունների անարդյունավետության պատրվակով (թեև հենց Ալիևն է, ըստ էության, խաթարում այդ գործընթացի բնականոն զարգացումը) Ադրբեջանը, լայնորեն հենվելով Թուրքիայի տարաբնույթ աջակցության վրա, կանոնավոր կերպով խախտում է հրադադարի ռեժիմը, իսկ 2016 թ. ապրիլին և սույն թվականի սեպտեմբերին սանձազերծել է լայնամասշտաբ չհայտարարված պատերազմ ընդդեմ երկու հայկական պետությունների: Այն, որ այդ պատերազմներում (հատկապես՝ 2020 թ. աշնանը) Ադրբեջանը զանգվածաբար կիրառում է արգելված զինատեսակներ՝ դրանց թիրախ դարձնելով Հայաստանի և Արցախի խաղաղ բնակչությանը, որ նրա զորքերում զգալի տեսակարար կշիռ ունեն Սիրիայում, Աֆղանստանում և այլ տեղերում վարձված ահաբեկիչները, որոնք միջազգայնորեն ճանաչված հանցագործ խմբերի անդամներ են («Իսլամական պետություն» և այլն), աներկբայորեն վկայում է, որ թուրք-ադրբեջանական դաշինքը նպատակ ունի ավարտին հասցնելու այն, ինչ չկարողացան իրագործել Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը: Եվ անգամ հայ վրիժառուների ձեռքով այդ հանցագործների մահապատժի իրագործումը չի սթափեցնում այսօրվա ղեկավարներին:

Սույն թվականի սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի առիթով ռուսական հեռուստաընկերություններից մեկին տված հարցազրույցում ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նշելով, որ Թուրքիան փաստացի ներգրավված է Արցախի և Հայաստանի դեմ վարվող ռազմական գործողություններում, միևնույն ժամանակ հիշեցրել է, որ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ արդեն իրագործվել են ցեղասպանական գործողություններ: Այս պատճառով Հայաստանը դրանք ընկալում է որպես էքզիստենցիալ սպառնալիք՝ ուղղված հայ ժողովրդի դեմ, և հայ ժողովուրդն ստիպված է ամեն գնով պաշտպանվել[2]:

«Սկայ Նյուզ Իտալիա» հեռուստաընկերության լրագրող Ջիան Միկելեսինին, որը 30 տարի է, ինչ լուսաբանում է ռազմական թեմաներ և եղել է ավելի քան 35 երկրներում մղված պատերազմների դաշտում, 2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին այցելել էր Արցախ: «Շանթ» հեռուստաընկե-

[2] Տես «Пашинян заявил об угрозе существованию армянского народа». «60 минут», 29.09.2020 (https://www.youtube.com/watch?v=Q923YNjHsi0):

րության լրագրող Քրիստինե Ալագուլյանին տված հարցազրույցում նա նշել էր, որ «Արցախյան թեման շատ երկար տարիներ հեռու է եղել միջազգային մամուլի ուշադրությունից, շատ տարիներ այս հակամարտությունը հեռու էր գլխավոր լուրերի շրջանից, բայց ապրիլի 2-ի գիշերն ամեն ինչ վերսկսվեց, և ես եկա տեսնելու ու ցույց տալու, թե ինչ է կատարվում: Եվրոպայում ուշադրություն չենք դարձրել մի հանգամանքի վրա, որ սա հակամարտություն է՝ բորբոքված քրիստոնեական տարածքում, Կովկասի կենտրոնում: Շատ հաճախ մենք սրան անդրադարձել ենք որպես Արցախի և Ադրբեջանի միջև լոկալ կոնֆլիկտի, սակայն ոչ այն տեսանկյունից, որ այս մարդիկ հայեր են, որոնք 1915 թվականին ցեղասպանության են ենթարկվել»[3]:

Այսպիսով՝ իտալացի լրագրողն իրավամբ նշել է, որ Ղարաբաղյան հակամարտությունը ոչ թե մի շարքային տեղային ընդհիմամարտություն է, որը ծագել է Ղարաբաղի ու Ադրբեջանի միջև, այլ ըստ էության 1915 թվականի ցեղասպանության շարունակությունն է:

Կարծում ենք, որ սա միանգամայն ճիշտ ըմբռնում է, և այն բազմիցս ներկայացրել են մի շարք ճանաչված քաղաքագետներ[4]: Ուստի կարևոր ենք համարում լրատվամիջոցներում տվյալ էթնոքաղաքական հակամարտության լուսաբանման ժամանակ շեշտել նաև այդ տեսանկյան արդարացվածությունը: Մինչդեռ հայաստանյան և ադրբեջանական ԶԼՄ-ների մշտադիտման արդյունքները ցույց են տալիս, թե ինչպես առաջատար լրատվամիջոցներում հակամարտության էթնոքաղաքական ծագմանն առնչվող անճշտությունները, «առանց որևէ նոր կամ անհրաժեշտ տեղեկություն հաղորդելու, հաճախ հասարակական գիտակցության մեջ բացասական համատեքստ են ստեղծում, որը կասեցնում է երկխոսությունն ու փոխըմբռնումը»[5]:

Շատ կարևոր է, թե լրատվամիջոցներն ինչ կերպ կիրառցնեն և կմեկնաբանեն էթնիկությանն առնչվող այս կամ այն փաստը: Կարծում ենք, որ հակամարտության էթնոքաղաքական բնույթի մասին լրագրողների բարձր աստիճանի իրազեկվածությունը կարող է նպաստել խնդրի անաչառ, ընդգրկուն ու գրագետ լուսաբանմանը՝ դրանով իսկ հարևան պետությանը զրկելով էթնիկական անհանդուրժողության մթնոլորտում ապատեղեկատվական քարոզչություն ծավալելու հնարավորությունից, ինչը, իր հերթին, կասեցնում է հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը:

---

[3] Տես «Ապրիլյան Սահմանագիծ/Aprilyan Sahmanagic», 02.04.2017 (https://www.youtube.com/watch?v=FSTUfCzPGEE):

[4] Տես, օրինակ, *Гайк Котанджян*. Взаимное признание Азербайджана и НКР – залог конструктивных переговоров. ИА «REGNUM», 24.01.2019 (https://regnum.ru/news/ polit/1743717.html), *նույնի*՝ Ազգային աղետների դասերի մասին. Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին: «ՀԲ», 2015, հմ. 1–2:

[5] Տես «Ով ինչին է ուշադրություն դարձնում: Հայաստանի և Ադրբեջանի միջազգային լրատվությունը. փորձարարական տվյալներ և բարելավման հանձնարարականներ», 2008 (https://epfarmenia.am/sites/default/files/Document/Whos-Paying-Attention-to-What-CRRC-Research-in-Armenian-2008.pdf):

## Ադրբեջանի վարած էթնոքաղաքականության որոշ դրսևորումներ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում

Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ջ. Ռոտշիլդը շեշտում էր, որ հետազոտողների ուշադրությունը երբեք չի եղել բևեռված միայն զուտ էթնիկական ինքնության կամ էթնոմշակութային արժեքների, այլ՝ առաջին հերթին դրանց հնարավոր, թեև ամենևին էլ ոչ անխուսափելի քաղաքականացման վրա, որը դրսևորվում է բախումների և կարգավորումների ձգձգման ձևով[6]:

Թե՛ թուրքերը, թե՛ ադրբեջանցիները կա՛մ ֆիզիկապես ոչնչացրել են, կա՛մ փորձել իրենց վերագրել այն ժողովուրդների պատմամշակութային ժառանգությունը, որոնց տարածքները բռնազավթել են և այնտեղ բնակություն հաստատել: Նրանք նպատակ են ունեցել այդ եղանակով հասնել կեղեքված ժողովրդի լիակատար արտաքսմանը կամ ձուլմամբ վերածմանը մի չնչին փոքրամասնության, որը չի կարող սպառնալ իրենց պետության գոյությանը: Մյուս կողմից՝ պետական վերահսկողության ներքո իրագործվում է «նոր» պաշտոնական պատմագրության ձևավորում ըստ այն թեզի, թե տվյալ տարածքի և այնտեղ առկա պատմամշակութային ժառանգության նկատմամբ իրենք ունեն ավելի մեծ իրավունքներ, քան այդ տարածքում բնակվող այլ ժողովուրդներ, թեկուզ և այդ արժեքների իրական հեղինակներն ու տերերը[7]:

Թեև Ադրբեջանի ձեռնարկած «պատմագիտական» կեղծարարությունները ուղղված են նաև այլ հարևան պետությունների (Իրան, Վրաստան) և իր զավթած տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների (թալիշներ, թաթեր, լեզգիներ, ուդիներ և այլն) պատմամշակութային ժառանգության յուրացմանն ու կեղծմանը, սակայն դրա հիմնական թիրախը հայ ժողովուրդն ու Հայաստանի (ներառյալ՝ Արցախը) պատմամշակութային ժառանգությունն են[8]:

Հարավային Կովկասում հայ ժողովրդի պատմության արմատական աղավաղման հիմնական նպատակը Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքի նկատմամբ ադրբեջանական հավակնությունների հիմնավորումն է. դրան են ծառայում նաև աղվանների ներկայացումը որպես ադրբեջանցիների և որպես արևելահայության մի որոշ հատվածի նախահայրերի, հայերի «եկվորության» մասին պնդումները և այլն: Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ այս նկրտումների կարևոր նպատակներից մեկն է «միջազգային հանրությանը ներկայացնել հակամարտության վերաբերյալ իր հայեցակարգը, որի համաձայն՝ Ադրբեջանի «պատմական տարածքներում» Հայաստանի Հանրապետության գոյության հանդուրժումը Ադրբեջանի կողմից արդեն իսկ էական զիջում է, ուստի Ղարաբաղյան հակամարտության համատեքստում Ադրբեջանի կողմից տարածքային նոր զիջումները անընդունելի են»[9]:

---

[6] Տես *J. Rotschild*. Ethnopolitics: A conceptual framework. N.Y., 1981, P. 247:

[7] Տես *Պ. Ա. Չոբանյան, Ա. Գ. Ավագյան, Բ. Պ. Պողոսյան, Վ. Հ. Տեր-Մաթևոսյան, Վ. Պ. Ավետիսյան,* Հայաստանի պատմության նենգափոխման ադրբեջանական ռազմավարությունը և դրան հակազդեցության ուղենիշները: «ԱՏ», 2010, հմ. 4:

[8] Տես նույն տեղում:

[9] Տես *Է. Բ. Աթանեսյան,* Պատմության կեղծարարությունների գործոնը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում: «ԱՏ», 2010, հմ. 4:

Արցախի պատմության խեղաթյուրման գործում Ադրբեջանն զգալի ուշադրություն է դարձնում հայ բնակչության «եկվորության» և միայն 19-րդ դարի առաջին քառորդում Արցախում բնակության հաստատման թեզի «ապացուցմանը» և միջազգային գիտական ու հասարակական շրջաններում դրա տարածմանը: Արցախում հայ բնակչության ի հայտ գալը Ադրբեջանը պայմանավորում է բացառապես 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո ստորագրված Թուրքմենչայի պայմանագրի համաձայն տեղի ունեցած քրիստոնյա բնակչության ներգաղթով[10]: Այդ կերպ Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է ոչ միայն միջազգային ասպարեզում վարկաբեկել հայությանը, այլև ներքին քաղաքական դաշտում հային ներկայացնել որպես ագրեսիվ, ամբարիշտ ու դավադիր թշնամու: Ինչպես նշում է միջէթնիկական ու միջդավանական հակամարտությունների ճանաչված հետազոտող, ամերիկացի հոգեբան Առլին Օդերգոնը, իր գաղափարախոսությունը բռնությամբ տարածելու համար անհատապաշտական վարչակարգը հաճախ հասարակության մեջ վախ է սերմանում: Ընդսմին դա արվում է այնքան արդյունավետ կերպով, որքան ավելի ռեալ կերպարանք է տրվում այդ վախի աղբյուրին: Նման աիաբեկչական քաղաքականության հաջողության համար անհրաժեշտ է երկրում ստեղծել վախի, անվստահության կլիմա, անվտանգության սուր պահանջմունք[11]:

Նրան է ձայնակցում ամերիկացի գիտնական Չ. Քեյեսը՝ նշելով, որ անգամ էթնիկական հակամարտություններ չլինելու դեպքում պետությունն ինքն է իր իշխանության օրինականությունը հիմնավորելու նպատակով նպաստում իր կազմի մեջ մտնող էթնիկական հանրությունների մասին որոշակի «առասպելների» տարածմանը, ստեղծում է այնպիսի պայմաններ, երբ էթնիկականությունը հաստատապես դառնում է որոշակի տիպերի սոցիալական հարաբերությունների կառուցավորման գործոն[12]:

Տիտղոսային ազգի գերակայության հաստատման պաշտոնական քաղաքականությունը, որն իրագործվում է ի վնաս իր զավթած տարածքի բնիկ ժողովուրդների իրավահավասարության, իր անդրադարձն է ստանում տարածաշրջանի ժողովուրդների գիտական պատմության նպատակաուղղված վերափոխմամբ՝ միտված նրանց ազգային ինքնության աղճատմանը, ինչպես նաև Արևելյան Անդրկովկասի մշակույթի պատմական զարգացման գործում բնիկների տեղի ու դերի նվազեցմանը: «Յուրացվում են հայերի, պարսիկների, ուդիների, լեզգիների, ավարացիների, թալիշների, թաթերի և մեր տարածաշրջանի այլ ժողովուրդների պատմությունն ու մշակութային ժառանգությունը. դարերով հետ է տարվում ադրբեջանցիների նախնիների՝

[10] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Մուտքի խոսք: «ԱՏ», 2014, հմ. 3–4:

[11] Տես *Арлин Одергон.* Отель «Война». Психологическая динамика вооруженных конфликтов. М., 2008, с. 132:

[12] Տես *Ч. Кейес.* Основа отношений между этническими группами в современных государствах-нациях. «Этнические процессы в СССР и США. Материалы советско-американского симпозиума». М., 1986, с. 70:

Կենտրոնական Ասիայից Անդրկովկաս զանգվածային վերաբնակության պատմությունը[13]:

Այդ քաղաքականությունն ստացավ պաշտոնական բնույթ Հեյդար Ալիևի իշխանության գալով (1993 թ.), երբ պատմաբաններին տրված քաղաքական պատվերի հետևանքով պատմության արտագրումը և «մաքրումը հայերի ժառանգությունից ու հայությունից՝ որպես պատմության գործող անձից» դարձել են Ադրբեջանի Հանրապետության պետական ռազմավարություն[14]:

Ուշագրավ է, որ պատմական աղավաղումները չեն սահմանափակվում նյութական ու հոգևոր արժեքների մակարդակով, Ադրբեջանը պատրաստ է անգամ զանգվածային մարդկային տեղահանությունների ու ջարդերի միջոցով հայկական բնակավայրերից սրբել ամեն հայկականը, ինչպես իրենց թուրք եղբայրները 1915 թ., ինչպես հենց իրենք 90-ականներին զուտ հայկական տարրից ազատվելու նպատակով խաղաղ, անզեն բնակիչներին, հրետակոծության տակ առնելով, ստիպում էին լքել պապենական բնակավայրերը, խոշտանգում, դաժան սպանդի էին ենթարկում, ապա ապօրինաբար առգրավում նրանց գույքն ու ունեցվածքը՝ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ ոտնահարելով իր էթնիկական բնակավայրում ապրելու և արարելու մարդու անքակտելի իրավունքը:

Ղարաբաղահայերը, առաջնորդվելով 1990 թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի ոգով ու տառով, խորհրդային ղեկավարությանը դիմեցին իրենց մարզը Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս բերելու խնդրանքով[15], ինչին Ադրբեջանը պատասխանեց 1988–1989 թթ. Սումգայիթում և Կիրովաբադում, իսկ ավելի ուշ՝ 1990 թ., Բաքվում կազմակերպված տեղաբնակ հայության դաժան ջարդերով[16]:

1991 թ. մայիսին հայաթափվեցին Գետաշեն, Կամո, Ազատ և Մարտունաշեն, Հադրութի շրջանի 14 և Բերդաձորի բոլոր հայկական գյուղերը, հարյուրավոր քաղաքացիներ հայտնվեցին Շուշիի, Աղդամի, Ֆիզուլիի, Կիրովաբադի, Բաքվի բանտերում: Նրանցից շատերի ճակատագիրն առ այսօր անհայտ է:

1992 թվականի ապրիլի 10-ին ադրբեջանական միլիցիայի հատուկ նախանշանակման ջոկատը հրկիզեց Մարաղա գյուղը, կոտորեց բնակչութ-

---

[13] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Ռազմավարական ուղենիշներ Հայաստանի պատմության նենգափոխման դեմ գիտական պայքարում՝ ցանցապետականության տեսանկյունից: «ԱՏ», 2010, հմ. 4:

[14] Տես նույն տեղում:

[15] Տես «Закон о порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР». М., изд. Верховного Совета СССР. «Ведомости Съезда народных депутатов Верховного Совета СССР», 1990, № 15:

[16] Տես *Jacques Derrida, Isaiah Berlin, Alain Finkielkraut, Richard Rorty, et al.* An Open Letter on Anti-Armenian Pogroms in the Soviet Union. “The New York Review of Books”, 27 September 1990, Vol. 37, N 14:

յանը: Մարաղան մինչև հիմա շարունակում է մնալ Ադրբեջանի հսկողության տակ: Մարաղայի ողբերգական դեպքերի ընթացքում սպանված հայերի թիվը տատանվում էր 80–100-ի միջև: Ավելի քան 40 մարդ վիրավորվել է, 63-ը՝ գերի վերցվել: Սպանդը շարունակվել է ապրիլի 22–23-ին, երբ կենդանի մնացած մարաղացիները վերադարձել էին սպանվածների աճյունը հողին հանձնելու համար[17]:

1992 թվականի օգոստոսի 8-ից մինչ օրս Ադրբեջանի Զինված ուժերը բռնազավթել են Արծվաշենը: Արծվաշեն համայնքից բռնի տեղահանված ընտանիքների թիվը ներկայումս կազմում է 719, որոնցից 664 ընտանիքներ բնակություն են հաստատել Հայաստանի Գեղարքունիքի մարզի բնակավայրերում և 55 ընտանիքներ այլ մարզերում[18]: Այս ամենն ի վերջո վերածվել է լայնածավալ պատերազմի:

Առանձնակի չեշտենք, որ հայերին իրենց էթնիկական բնակավայրերից բռնի կերպով տարահանելու զինված գործողությունները հետագայում և առ այսօր շարունակվում են Ադրբեջանի զավթած հայկական բնակավայրերում դարավոր հայկական պատմամշակութային հուշարձանների ու կոթողների պղծմամբ, ժամանակի հետ իսպառ ոչնչացմամբ, որպեսզի երկրի երեսից ջնջվի այն ամենը, ինչը այդ տարածքներում հայերի էթնիկական բնակիչներ լինելու վկայությունն է[19]:

Պետք է հիշել, որ գիտական տեղեկույթի փոխանակման համընդհանրացման ներկայիս պայմաններում կեղծարարությունը դառնում է նոր սերնդի խոցիչ, թեև «ոչ մահաբեր» զենք, որը կարող է օգտագործվել ինչպես քաղաքական (տարածքի նկատմամբ այս կամ այն պետության պատմական իրավունքի ամրագրում, այս կամ այն քաղաքական հաստատության, կառավարող վերնախավի հայեցակարգային գերակայությունների օրինականության կամ անօրինականության հիմնավորում), այնպես էլ տնտեսական, ռազմական կամ այլ նպատակներով: Տվյալ տեսակետից ցանկացած երկրի պատմական տարածքը կարող է օգտագործվել ոչ միայն որպես ժամանակակից տեղեկութային պատերազմներում ճակատամարտերի թատերաբեմ, այլև որպես իրադարձությունների այս կամ այն զարգացման օրինաչափության կեղծ գիտական հիմնավորման միջոց, ինչն արվում է ի շահ նման նենգափոխումները հովանավորող պետության, այդ թվում՝ ռազմական գործողությունները արդարացնելու և իր հաղթանակը կամ հակառակորդի պարտությունը նախապատրաստելու համար[20]:

---

[17] Տես «Ապրիլի 10-ին լրացել է Մարաղա գյուղի խաղաղ բնակչության կոտորածի 19-ամյա տարելիցը»: «PanARMENIAN.Net», 10 ապրիլի 2011 (https://panarmenian.net/m/arm/news/66793):

[18] Տես «Արծվաշենցիները չեն կորցնում իրենց հողը ստանալու հույսը. օգոստոսի 8-ը Արծվաշենի գրավման օրն է»: «Արմենպրես», 02.08.2013 (https://armenpress.am/arm/news/728059/arm/):

[19] Տես *Рубен Заргарян.* В Азербайджане уничтожают армянское цивилизационное наследие. ИА «REGNUM», 1 июня 2016 (https://regnum.ru/news/society/2139694.html):

[20] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Ռազմավարական ուղենիշներ Հայաստանի պատմության

Միևնույն ժամանակ, հայ ադրբեջանագետ Ա. Էլիբեգովան նշում է, որ «ինչպես ցույց է տալիս Ադրբեջանում պաշտոնական մակարդակով քարոզվող օտարատեցության պրոբլեմը շոշափող միջազգային իրավական փաստաթղթերի վերլուծությունը, կան պատժման հստակ մեխանիզմներ, որոնք պետք է կիրառվեն համաշխարհային հանրության առջև ստանձնած պարտավորությունները խախտող երկրի նկատմամբ: Սակայն գործնականում չի արձանագրվել Ադրբեջանի կամ իր ելույթներում ռասիզմ ու հայատեցություն քարոզող դրույթներ օգտագործող նրա ղեկավարության նկատմամբ իրական պատժամիջոցների կիրառման որևէ դեպք»[21]: Եվ ինչու՞ պետք է լինեն, եթե անգամ Ալիևի սանձազերծած հակաիրավական ռազմական գործողությունները գնահատվում են ագրեսորի և ագրեսիայի զոհի միջև հավասարության նշանով:

### Էթնիկության թեմայով լուսաբանման որոշ ռիսկեր

Միջէթնիկական հակամարտությունները ժամանակակից աշխարհի ամենաբարդ և սուր խնդիրներից են: Հայտնի է, օրինակ, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո աշխարհի տարբեր անկյուններում բռնկվել են ավելի քան 100 զինված հակամարտություններ, և դրանց մեծ մասը եղել է միջէթնիկական բնույթի: Այս հակամարտություններն ուղեկցվում են արյունահեղություններով, մարդու իրավունքների զանգվածային ոտնահարումներով, փախստականների իսկայական հոսքերով, զգալի նյութական կորուստներով և այլն:

Օրինաչափ է, որ լրատվամիջոցներն ամենատարբեր շեշտադրումներով մեծ ուշադրություն են հատկացնում էթնիկության թեմային: Սակայն նման տեղեկույթը ոչ միայն իրազեկում է մարդկանց, այլև ձևավորում հանրային մտածողություն և տրամադրություններ: Հանդուրժողականության սահմաններում ստեղծված և հանրայնացված տեղեկույթը նպաստում է այս կամ այն էթնիկ խմբի կենցաղավարության, սովորույթների և ավանդույթների, ծեռքբերումների, էթնոսի պատմության նկատմամբ դրական դիրքորոշումների ձևավորմանը: Այն միտված է հասարակության շրջանում միջէթնիկական համաձայնության և համերաշխության հաստատմանը: Իսկ երբ տեղեկույթն ստեղծված է անհանդուրժողականության մթնոլորտում, երբ այն ծառայում է մի ազգի նկատմամբ մյուսի քաղաքական, առավել ևս` ռազմական գերակայության հաստատման նպատակների, ապա գործնականում ունենում է հակառակ հետևանքները` առաջ է բերում ռասիստական հակադրություններ, սերմանում բնակչության տարբեր էթնիկական խմբերի համատեղ կեցության

---

ատելության դեմ գիտական պայքարում` ցանցապետականության տեսանկյունից: «ՄՏ», 2010, հմ. 4:

[21] *Ա. Գ. Էլիբեգովա,* Ադրբեջանում հայատեցության արմատավորումը` որպես միջազգային նորմերի խախտում Նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնական հայտարարությունների օրինակով: «ՀԲ», 2014, հմ. 3–4:

անհնարինության գաղափարներ, ներշնչում է այս կամ այն էթնոսից բխող վտանգ՝ օտարների նկատմամբ առաջացնելով ատելության զգացում, այսինքն՝ օտարատեցություն:

Ի վերջո այդ զարգացումները վերածվում են ազգամիջյան հակամարտության, որն անցնում է որոշակի տևողությամբ ծածուկ շրջան, ապա բռնկում ներքին բախման (ոչ պարտադրաբար՝ զինված) ձևով[22]: Այդ պատճառով շատ պետություններում խտրականության և ատելության առաջացմամբ հղի ռասիստական-ազգայնամոլական, սոցիալական, կրոնական և այլ բնույթի քարոզչությունը, առաջին հերթին՝ ԶԼՄ-ների միջոցով, արգելվում է օրենքով: ԶԼՄ-ներում էթնիկական թեմայի կողմնակալ լուսաբանումը կարող է դառնալ վտանգավոր երկսայր գործիք: Սրա վկայությունն են նաև մեդիահետազոտող Դ. Ատիկանովայի դիտարկումները, որոնք նա արել է 2010 թվականին Ղրղզստանում ղրղզների և ուզբեկների միջէթնիկական հակամարտության ժամանակ տպագիր լրատվամիջոցների հրապարակումների առնչությամբ: Նա եզրակացնում է, որ իր դիտարկած ժամանակահատվածում էթնիկական թեմայով հրապարակված շատ հոդվածներ արտահայտում են այս կամ այն էթնոսի հանդեպ դժգոհություն կամ քննադատություն և դրանով իսկ նպաստում հակամարտության սրմանը: Նա նաև հիշեցնում է, որ միջէթնիկական իրադարձությունների մասին գրողները պետք է լավ իմանան էթնիկական խնդիրները, հակառակ դեպքում հետևանքները կարող են լինել անդառնալի[23]: Հետևաբար էթնիկական թեմաների լուսաբանման դեպքում շատ կարևոր է լրագրողի արհեստավարժությունն ու քաղաքացիական պատասխանատվության զգացումը, միջազգայնորեն ճանաչված մասնագիտական և վարքային կանոններին, չափանիշներին ու նորմերին հետևելը:

Հարկ է նշել, որ էթնիկական հակամարտությունների լուսաբանումը, եթե հիմնված չլինի հակամարտող էթնոսների ազգային բնավորության, սոցիալ-հոգեբանական, կրոնադավանական առանձնահատկությունների, պատմական զարգացման ընթացքի, պետական-քաղաքական մշակույթի լավ իմացության վրա, կվերածվի մի զավեշտալի ակնարկի, որը կլինի վերլուծական գնահատականներից զուրկ և իրականությունից շատ հեռու:

Պատահական չէ, որ միջէթնիկական, կամ էթնիկական, հակամարտությունները սահմանվում են որպես սոցիալական երևույթ, որը «հանդես է գալիս որպես տարբեր մակարդակներ ու բովանդակություններ ունեցող շահերի բախում և տարբեր էթնիկական հանրությունների, մարդկանց խմբերի միջև ձևավորված հարաբերություններում տեղի ունեցող բարդ խորքային այն զարգացումների դրսևորումներ, որոնք գտնվում են սոցիալ-տնտեսական, քաղաքական, պատմական, հոգեբանական, տարածքային, անջատողա-

[22] Տես *Мурад Эсенов.* Роль СМИ в освещении этнической тематики: на примере публикаций журнала «Центральная Азия и Кавказ». «Центральная Азия и Кавказ», 2012, т. 15, вып. 2:

[23] Տես նույն տեղում:

կան, լեզվամշակութային, կրոնական և այլ գործոնների բազմության ազդեցության տակ»[24]:

Ըստ այս սահմանման՝ պարզ է դառնում, թե որքան բարդ սոցիալ-քաղաքական երևույթ է էթնիկական հակամարտությունը, որքան գործոններ պետք է հաշվի առնվեն դրա վերլուծության և հեռանկարների գնահատման ժամանակ: Ահա թե ինչու մենք փորձեցինք շատ համառոտակի նկարագրել ադրբեջանցիների էթնիկական բնութագրի այն դրսևորումները, որոնք կարող են որոշ չափով ուղեցույց լինել Ղարաբաղյան հակամարտությունը լուսաբանող լրագրողների համար:

Փաստացի լրատվամիջոցներն ի զորու են սրելու եղած լարվածությունը և ուժգնացնելու տարաձայնությունները, սակայն նրանք ունեն նաև լայն սպեկտրով իրադարձությունների լուսաբանման, աղբյուրների տարբերակման, ավելի շատ խաղաղասիրական ձայների (և ոչ միայն ընտրանու) հնչեցման, լրատվությունից աչառության հետևողական բացառման միջոցով պառակտման գծի երկու կողմերի միջև վստահության մթնոլորտի ստեղծման ներուժ:

Ինչևէ, կիզակետային խմբերը ցույց են տալիս, թե ինչպես կարող են անաչառ ԶԼՄ-ները բավարարել հակամարտության վերաբերյալ բարեխիղճ տեղեկությունների սպառողի պահանջարկը: Անշուշտ, տեղեկույթի մատուցման ձևը կարող է նշանակալի դեր ունենալ այն բանում, թե ինչպես հասարակությունը կընկալի հակամարտությունը. որպես միևնույն տարածքին տիրանալու երկու ժողովուրդների հավակնություններ, թե որպես պատմական սխալները արդարությամբ շտկելու հնարավորություն:

### Եզրակացություն

Այսպիսով՝ արդի աշխարհում համընդհանրացման հետ մեկտեղ տեղի է ունենում նաև համատեղայնացում (գլոկալիզացում), որը հաճախ դրսևորվում է էթնիկական (ազգամիջյան) հակամարտությունների ձևով: Դրանց զոհ են գնում հազարավոր մարդիկ, դրանք պատճառում են հսկայական հոգևոր, հոգեկան, մարմնական ու նյութական վնասներ, ավերում քաղաքներն ու շեները, դրանցում եղած պատմամշակութային արժեքները, խոչընդոտում պետությունների սոցիալ-տնտեսական զարգացմանը: Մեզ համար այդպիսի պրոբլեմ է Ղարաբաղյան հակամարտությունը, որը սրման պահերին վերածվում է լինել-չլինելու երկընտրանքի:

Հաշվի առնելով այն հսկայական ազդեցությունը, որն այսօր հասարակական կարծիքի ու անհատի մտայնության վրա ունեն ԶԼՄ-ները, այդ հակամարտությունների ճիշտ լուսաբանումը դարձել է օրվա հրամայական: Իսկ էթնիկական հակամարտությունների ընդհանուր առմամբ բազմագործոն էությունը (ազգային նկարագիր, հոգեկերտվածք, մտածելակերպ, պատմութ-

[24] *М. Д. Давитадзе.* Причины возникновения и стадии развития межнациональных конфликтов. «Стабилизация ситуации и мирное развитие на Северном Кавказе». 1-я Межд. науч.-практич. конф. М., 1999.

յուն, սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ բաղադրիչներ) լուսաբանողից պահանջում է ոչ միայն էթնոքաղաքագիտական օրինաչափությունների իմացություն, այլև տվյալ կոնկրետ հակամարտության պատմական ակունքների ու զարգացման ընթացքի, քաղաքական, իրավական, սոցիալական և այլ կողմերի գիտակցում:

Ուստի էթնիկական հակամարտության լուսաբանմանը ձեռնամուխ լինող մեկնաբանը պետք է իր գործին վերաբերվի ամենայն լրջությամբ, կարողանա վերլուծել իրողությունը, զուգահեռներ տանել այլ էթնիկական հակամարտությունների հետ: Եվ ամենակարևորը՝ չկորցնել բարոյականությունը, միշտ հիշել, որ կրակի վրա յուղ լցնելով նա դառնում է հազարավոր ընտանիքների համար ողբերգության պատճառ: Եվ երբեք չպետք է դույզն-ինչ վնասի ազգային շահերին:

**ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ**

## НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ОСВЕЩЕНИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В СВЕТЕ ЭТНОПОЛИТИКИ

*Н. А. АМБАРЦУМЯН, старший лейтенант, аспирант факультета журналистики ЕГУ и лектор курса «Военная журналистика», тележурналист государственного учреждения «Зинуж Медиа»*

РЕЗЮМЕ

Сложность освещения этнических конфликтов обусловлена их многофакторностью (национальный облик, менталитет и нравы, история, социальные, экономические, политические, культурные, религиозные и другие компоненты). Это требует не только усвоения общих закономерностей этнополитических процессов, но и знания исторических причин и истоков конкретного конфликта, его эволюции, а также политического, правового, социального и других аспектов. При этом необходимо обладать аналитическим складом ума, придерживаться высоких моральных принципов во избежание провоцирования обострения конфликта, и в то же время действовать не в ущерб национальным интересам.

**INFORMATION SECURITY**

# SOME PROBLEMS OF COVERING THE NAGORNO KARABAKH CONFLICT IN THE LIGHT OF ETHNOPOLITICS

*N. A. HAMBARDZUMYAN, Senior Lieutenant, Graduate Student, Department of Journalism, YSU and Lecturer in the Course in “Military Journalism”, TV Journalist, “Zinuzh Media” State Agency*

SUMMARY

The complexity of covering ethnic conflicts is determined by their multi-factor nature (national identity, mentality and customs, history, social, economic, political, cultural, religious and other components). It requires not only mastering general regularities of ethnopolitical processes, but also knowledge of the historical causes and origins of the particular conflict, its evolution, as well as political, legal, social and other aspects. Simultaneously, it is necessary to have an analytical mind, to follow the high moral principles so as to avoid provoking the conflict escalation, and at the same time, not to act against the national interests.

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ
ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴԵՄ

2020 թ. աշուն








ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ



























# ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՔՐԴՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔՐԴՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

*Վ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի ավագ գիտնական-վերլուծաբան*



**Ադրբեջանի Հանրապետության և Քրդստանի շրջանային կառավարության շփումները 1992–2020 թթ.**

Ադրբեջանի Հանրապետության և Քրդստանի (Քուրդիստանի) շրջանային կառավարության (ՔՇԿ) միջև պաշտոնական հարաբերություններ, որպես այդպիսիք, գոյություն չունեն, քանի որ Ադրբեջանը ՔՇԿ-ն դիտում է որպես Իրաքի Հանրապետության անբաժանելի մասի, իսկ Ադրբեջանի և ՔՇԿ քուրդ ղեկավար շրջանների միջև շփումներն ու շնորհավորական ուղերձների փոխանակումը գերազանցապես դիտվում են որպես Ադրբեջան–Իրաք հարաբերությունների շրջանակներում տեղի ունեցող իրողություններ ու քննարկումներ:

Մասնավորապես՝ դեռ 2010 թ. նոյեմբերին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը շնորհավորական ուղերձ հղեց Իրաքի Նախագահ, Քրդստանի հայրենասիրական միության առաջնորդ Ջալալ Թալաբանիին՝ Իրաքի նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ[1]: Մեր կարծիքով՝ տվյալ փաստը ևս պետք է դիտարկել Ադրբեջան–Իրաք հարաբերությունների համատեքստում, քանի որ ուղերձն ուղղված էր Իրաքի Նախագահին:

Այդուհանդերձ, 2017 թ. հունվարին Դավոսի Համաշխարհային տնտեսական համաժողովի ժամանակ կայացավ ՔՇԿ Նախագահ Մասուդ Բարզանիի և ԱդրՀ նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը[2]: Իրաքյան Քրդստանում անցկացված անկախության հանրաքվեից առաջ Ադրբեջանում քննարկվում էր ՔՇԿ Նախագահ Մասուդ Բարզանիին Բաքու հրավիրելու հարցը, սակայն հանրաքվեից հետո այն դուրս եկավ օրակարգից: Երեք տարի անց՝ 2020 թ.

---

[1] Տես *Ильгар Джафаров*. Ильхам Алиев поздравил президента Ирака в связи с переизбранием. «AZE.az», 13 ноября 2010 (http://www.aze.az/news____45291.html#sthash.AtVRgmDI.dpuf): Իլհամ Ալիևն ու Ջալալ Թալաբանին անմիջականորեն երբևիցե չեն հանդիպել:

[2] Տես “Mətbuat icmalı: İlham Əliyev Davosda İraq Kürdüstan Regional Hökumətinin başçısı ilə görüşüb”. “BBC News”, 19 Yanvar 2017 (https://www.bbc.com/azeri/azerbaijan-38676203):

հունվարին, Իրաքի ՔՇԿ Նախագահ Նեչիրվան Իդրիս Բարզանին դարձյալ Դավոսում հանդիպեց ԱդրՀ նախագահ Իլհամ Ալիևի հետ[3]:

Նշված իրադարձություններն ունեին Ադրբեջան–ՔՇԿ շփումներին նոր որակ հաղորդելու ներուժ: Սակայն մեծ ժամանակային ընդմիջումներով տեղի ունեցող այս հանդիպումները չեն հանգեցրել ՔՇԿ կարևորած հարցերում Ադրբեջանի դիրքորոշման փոփոխման: Մասնավորապես՝ Ադրբեջանը

- անընդունելի է համարում ՔՇԿ անկախությունը,
- չի դիտարկում Էրբիլում հյուպատոսություն բացելու տարբերակը,
- հնարավոր չի համարում նաև Բաքվում ՔՇԿ ներկայացուցչություն բացելու հեռանկարը,
- ադրբեջանցի և իրաքյան քուրդ քաղաքական գործիչների ու պաշտոնյաների* միջև հեռակա ու անմիջական շփումները բացառապես դիտում է որպես Ադրբեջան–Իրաք առնչությունների շրջանակում տեղի ունեցող իրադարձություններ:

**Քրդստանի անկախանալու հարցը Ադրբեջանի հասարակական-քաղաքական քննարկումներում**

**Ադրբեջանի դիրքորոշումը Քրդստանի անկախության հարցում:** Սկսած 1990-ական թվականներից Ադրբեջանը որոշակի զգուշավորություն է հանդես բերել Իրաքյան Քրդստանի հետ հարաբերությունների հաստատման ու խորացման գործում: Գտնվելով Թուրքիայի ազդեցության ներքո՝ Բաքուն նաև որդեգրել էր Իրաքյան Քրդստանի նկատմամբ Անկարայի մոտեցումները:

Այսպես. դեռ 2002 թ. հոկտեմբերի կեսերին Ստամբուլի Չիրաղան պալատում կայացած մամուլի ասուլիսում Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը, խոսելով Իրաքում ԱՄՆ-ի իրականացնելիք ռազմական գործողությունների և դրանց հնարավոր հետևանքների մասին, նշեց. «Երբեք չի կարելի թույլ տալ հյուսիսային Իրաքում քրդական պետության ստեղծումը: Մենք լիովին դեմ ենք դրան»[4]:

Հետագա շուրջ 15 տարիների ընթացքում Ադրբեջանի ղեկավարությունն այդ խնդրին պաշտոնապես չանդրադարձավ: Միայն 2017 թ. սեպտեմբերի 29-ին՝ ՔՇԿ անցկացրած անկախության հանրաքվեից 4 օր անց, Ադրբեջանի

---

[3] Տես “Neçirvan Barzani’den üst düzey görüşmeler”. “Kurdistan 24”, 22.01.2020 (https://www.kurdistan24.net/tr/news/a6a1cba5-e551-4afb-b5b9-c871491d77e9):

* 2005 թվականից Իրաքի բոլոր նախագահները՝ Ջալալ Թալաբանին (2005-2014), Ֆուադ Մասումը (2014-2018), Բարհամ Սալիհը (2018-ից մինչ օրս) ազգությամբ քուրդ են: Քուրդ գործիչները վարել են նաև Իրաքի այլ ծանրակշիռ պետական պաշտոններ: Մասնավորապես՝ Իրաքի փոխնախագահի ու փոխվարչապետի պաշտոնն է զբաղեցրել Ռոուշ Նուրի Շավայսը, արտաքին գործերի և ֆինանսների նախարարի պաշտոնները՝ Հոշյար Զեբարին և այլն: Իրաքի ներկայիս ԱԳ նախարարն ու փոխվարչապետն է Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունը ներկայացնող քուրդ գործիչ Ֆուադ Հուսեյնը, որը 2018–2020 թթ. վարել է նաև Իրաքի ֆինանսների նախարարի պաշտոնը:

[4] Տես “Aliyev: Kürt devleti kurulmasına izin verilemez”. “haber.ekolay.net” (http://haber.ekolay.net/haber/Aliyev-Kürt-devleti-kurulmasına-izin-verilemez/64/69490.aspx):

արտաքին գործերի նախարարությունն արտահայտեց իր պաշտոնական դիրքորոշումը: Ի պատասխան *«Report.az»*-ի հարցման՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության մամուլի ծառայության ղեկավար Հիքմեթ Հաջիևը նշեց. «Ադրբեջանը ճանաչում և լիովին պաշտպանում է Իրաքի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»[5]: Հիքմեթ Հաջիևը նաև շեշտեց, որ «Ադրբեջանը կողմ է Իրաքի Կենտրոնական կառավարության և Իրաքի Քրդստանի տարածաշրջանային նահանգի միջև եղած հարցերի խաղաղ կարգավորմանը Իրաքի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության շրջանակներում՝ փոխըմբռնման և երկխոսության միջոցով»[6]:

Հանրաքվեի օրը՝ 2017 թ. սեպտեմբերի 25-ին, Կովկասի մահմեդականների վարչության ղեկավար Ալլահշուքյուր Փաշազադեն նույնպես հայտարարեց, որ Ադրբեջանը դեմ է Իրաքյան Քրդստանի անկախության հանրաքվեի անցկացմանը: Ադրբեջանի հոգևոր առաջնորդը նշեց. «Ադրբեջանը՝ որպես անջատողականությունից տառապող երկիր, կտրականապես դեմ է Իրաքի հյուսիսում հանրաքվեի անցկացմանը»[7]:

Ընդ որում, կարևորում ենք նաև Ադրբեջանի ԱԳՆ կիրառած տերմինաբանությունը: Եթե «Իրաքի կենտրոնական կառավարություն» տերմինի օգտագործումը միանգամայն տրամաբանական է, ապա «Իրաքի Քրդստան տարածաշրջանային նահանգ» արտահայտությունը բացառիկ է, քանի որ տարածված են «Քրդստանի շրջանային կառավարություն», «Իրաքի Քրդստանի տարածաշրջան» կամ ուղղակի «Իրաքյան Քրդստան» անվանումները: Իրաքյան քրդերը լայնորեն գործածում են նաև «Հարավային Քրդստան» տեղանունը*:

ՔԾԿ անկախության հանրաքվեին դեմ հանդես եկան նաև ադրբեջանցի օրենսդիրներն ու հայտնի քաղաքական գործիչները: Արձանագրելով այն փաստը, որ «Ադրբեջանում կան միայն անհատներ, որոնք սատարում են Իրաքյան Քրդստանում տեղի ունեցած հանրաքվեին», ինչպես նաև չբացառելով, որ Ադրբեջանում որոշակի խմբեր իրենց աջակցությունը կհայտնեն անկախության հանրաքվեին, Ադրբեջանի Միլլի Մեջլիսում «Եni Մուսավաթ» կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Վահիդ Ահմեդովը հայ-

[5] Տես “XİN: Azərbaycan İraqın ərazi bütövlüyünü tanıyır və tam şəkildə dəstəkləyir”. “Report.az”, 29 Sentyabr 2017 (https://report.az/siyasi-xeberler/xarici-siyaset/xi-n-azerbaycan-i-raqin-erazi-butovluyu-taniyir-ve-tam-sekilde-destekleyir/):

[6] Տես նույն տեղում:

[7] Տես «Аллахшукюр Пашазаде: Азербайджан против курдского референдума». «EADaily», 25 сентября 2017 (https://eadaily.com/ru/news/2017/09/25/allahshukyur-pashazade-azerbaydzhan-protiv-kurdskogo-referenduma):

* Թուրքիայի քրդաբնակ տարածքները դիտվում են որպես Թուրքական, կամ Հյուսիսային, Քրդստան (Բաքուր), իրաքյանը՝ Հարավային (Բաշուր), սիրիականը՝ Ռոժավա, իրանականը՝ Ռոժհելաթ:

տարարեց, որ Ադրբեջանը՝ որպես պետություն, չպետք է աջակցի այդ հանրաքվեին[8]:

Նույնիսկ Ադրբեջանի քրդական համայնքը հարկադրված էր զսպվածություն հանդես բերել: Խիզախման բացառիկ դրսևորումները պատժվում էին*:

**Իրաքյան Քրդստանի անկախության դեմ բերվող փաստարկները**

Ադրբեջանի պաշտոնական (գերազանցապես՝ օրենսդիր և գործադիր իշխանության ներկայացուցիչներ) և փորձագիտական շրջաններն Իրաքյան Քրդստանի անկախության դեմ ելույթներում գերազանցապես բերում են հետևյալ փաստարկները.

– Հանրաքվեի անհամատեղելիությունը Ադրբեջանի անմիջական շահերի հետ՝ հաշվի առնելով Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և անջատողականության գործոնները.

– Իրաքյան Քրդստանի անկախության հանրաքվեին անմիջականորեն հաջորդած փուլում ադրբեջանցի քաղաքական գործիչներն ու փորձագետները շեշտում էին «անկախ Քրդստանի ու Հայաստանի միջև ապագա համագործակցության հնարավորությունը»[9]: Մասնավորապես՝ այդ գաղափարն առաջ քաշող «Հանրապետական այլընտրանք» շարժման կառավարման խորհրդի անդամ Ազեր Գասիմլին այն տեսակետն էր հայտնում, թե «անկախ Քրդստանը կլինի Թուրքիայի և տարածաշրջանի բոլոր թյուրքական ժողովուրդների թշնամին և կդառնա Հայաստանին ու հակաթյուրքական քաղաքական խմբավորումներին աջակցող այլ պետությունների դաշնակիցը»[10]:

**Քրդստանի անկախության հանրաքվեի անհամատեղելիությունը՝ Ադրբեջանի և Իրաքի միջև հարաբերությունների զարգացման դինամիկայի հաշվառմամբ**

Ադրբեջանը Իրաքյան Քրդստանի անկախության հանրաքվեն դիտում է նաև Իրաքի հետ իր հարաբերությունների համատեքստում: Ադրբեջանն ու Իրաքն ունեն մի շարք մշակութային ու կրոնադավանական ընդհանրութ-

[8] Տես “Azərbaycanlı deputatdan İraq Kürdüstanındakı referenduma etiraz”. “GünAz.TV”, 27 Sentyabr 2017 (https://www.gunaz.tv/az/xeberler/dunyaveiran-6/ azerbaycanli-deputatdan-iraq-kurdustanindaki-referenduma-etiraz-99087):

* Ադրբեջանցի քուրդ պաշտոնյա Ֆիզուլի Թանրիվերդիևը Իրաքյան Քրդստանի անկախության հանրաքվեին իր աջակցությունը հայտնած եզակի քուրդ գործիչներից էր: Այս խիզախումն առաջացրեց ադրբեջանական լրատվամիջոցների վրդովմունքը: Թեև Թանրիվերդիևը հիմնավորում էր իր դիրքորոշումը՝ նշելով Ադրբեջանում խոսքի ազատության գոյությունը, հանրային ճնշումից հետո նա հարկադրված ջնջեց սոցիալական կայքերում իր արած բոլոր գրառումները (տես *Kenan Abbasov.* Kurdish Independence Referendum: Perspectives from Azerbaijan. “Meydan.TV”, 27 September 2017 (https://www.meydan.tv/ en/article/kurdish-independence-referendum-perspectives-from-azerbaijan /?/ref=redirect)):

[9] Տես նույն տեղում:

[10] Տես նույն տեղում:

յուններ: Երկուսն էլ շիա մեծամասնությամբ երկրներ են: Հազարավոր ադրբեջանցիներ ուխտագնացության են մեկնում շիադավանների համար սրբազան իրաքյան քաղաքներ՝ Նեջեֆ և Քերբելա: Դեռ 1973 թվականից Ադրբեջանում գործում է Իրաքի գլխավոր հյուպատոսությունը, իսկ 1991 թվականից հետո Ադրբեջանում բացվեց Իրաքի դեսպանատունը: Իր հերթին, Իրաքում գործում է Ադրբեջանի դեսպանությունը[11]: Ադրբեջանը Նեջեֆ և Քերբելա քաղաքներում ունի մի շարք կրոնական հաստատություններ, և Իրաքը ցանկանում է, որ ադրբեջանցի ուսանողները կրոնական կրթություն ստանան Իրաքում, իսկ այնուհետև ծառայության անցնեն իրենց հուսեյնիեներում ու մզկիթներում[12]:

Իրաքը նաև շահագրգռված է Ադրբեջանի հետ տնտեսական համագործակցություն ծավալելու գործում՝ հատկապես կարևորելով Ադրբեջանի ներդրումները էներգակիրների, շինարարության, էլեկտրաէներգիայի և գյուղատնտեսության ոլորտներում: Իրաքը ձգտում է սերտացնելու Ադրբեջանի հետ համագործակցությունը կրթության և զբոսաշրջության բնագավառներում: Ադրբեջանի պնդմամբ՝ Իրաքը հնարավոր է համարում նաև Ադրբեջանի հետ համագործակցությունը իր բանակաշինության ասպարեզում*:

Ամեն դեպքում, Ադրբեջանն ու Իրաքը աջակցում են միմյանց տարաբնույթ միջազգային կազմակերպությունների հարթակներում: Օրինակ՝ Իրաքը ՄԱԿ-ի ԱԽ-ում քվեարկել է հօգուտ Ադրբեջանի: Չնայած Իսրայելի հետ իր սերտ հարաբերություններին՝ Ադրբեջանը ցուցաբերում է պաղեստինամետ դիրքորոշում՝ ակնկալելով թե՛ Իրաքի, թե՛ այլ արաբական երկրների աջակցությունը Ղարաբաղյան խնդրում:

Մի շարք իրաքցի պաշտոնյաներ (արտաքին գործերի նախարար Հոշյար Զեբարին, Խորհրդարանի միջազգային կապերի հանձնաժողովի նախագահ Խոմամ Խամուդին) նշել են, որ Ղարաբաղյան խնդրում աջակցում են Ադրբեջանին: Սակայն Ադրբեջանն ակնկալում է, որ Արաբական պետութ-

---

[11] Տես “Embassy of Azerbaijan in Baghdad, Iraq” (https://embassies.info/AzerbaijaniEmbassyinBaghdadIraq); “Embassy of Azerbaijan in Baghdad, Iraq” (https://www.embassypages.com/azerbaijan-embassy-baghdad-iraq): Ադրբեջանն ուշացնում էր Իրաքում իր դեսպանատան բացման գործընթացը: Իր հերթին, իրաքյան կողմը հորդորում էր Ադրբեջանին արագացնել Իրաքում Ադրբեջանի դեսպանատան բացման գործընթացը (տես «Азербайджанский депутат предлагает открыть посольство в Ираке». «Trend news agency», 6 апреля 2012 (https://www.trend.az/azerbaijan/politics/2011293.html)):

[12] Տես «Мы приняли решение приобретать оружие для иракской армии у Азербайджана – Хомам Хаммуди (Интервью)», 21.01.2012 (http://wap.islam.az/news/a-8709.html):

* Ադրբեջանական աղբյուրների տվյալներով՝ Իրաքի Խորհրդարանի միջազգային կապերի հանձնաժողովի նախագահ Խոմամ Խամուդին դեռ 2012 թվականին նշել էր, որ ամերիկյան զենքի թանկության պատճառով իրենք մտադիր են զենք գնել այլ աղբյուրներից, և այդ թվում գնումներ կատարել Ռուսաստանում, Ադրբեջանում և այլ երկրներում (տես նույն տեղում): Հիշյալ պնդումները, սակայն, մեր կարծիքով, ոչ միայն իրատեսական չէին, այլև հետապնդում էին քարոզչական նպատակ:

յունների լիգան կցուցաբերի կոնկրետ աջակցություն, և Իրաքն էլ այդ գործում կունենա իր որոշակի ներդրումը: Իրաքն, իր հերթին, պատրաստակամություն է հայտնում պաշտոնական կապուղիներով ու տարաբնույթ արաբական ԶԼՄ-ների միջոցով Արաբական պետությունների լիգայի անդամ պետություններին ավելի մանրամասնորեն իրազեկելու Ադրբեջանի առջև ծառացած ներքին և արտաքին քաղաքական պրոբլեմների մասին[13]:

**Թուրքիայի գործոնը. Քրդստանի անկախության հանրաքվեի նկատմամբ Ադրբեջանի դիրքորոշումը Թուրքիայի դիրքորոշմանը համահունչ դարձնելու անհրաժեշտությունը**

Ադրբեջանցի մեծ թվով քաղաքական գործիչներ ու փորձագետներ տեղական լրատվամիջոցներում հանդես գալիս հիմնականում արտահայտում էին այն միտքն, որ Ադրբեջանը քրդերին առնչվող գործընթացներում իր գործողությունները պետք է համադասի կամ համաձայնեցնի Թուրքիայի հետ[14]: Այդ գաղափարն էր կիսում մասնավորապես Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր Ֆազիլ Գազանֆարօղլուն[15]:

Ադրբեջանի Միլլի մեջլիսում «Ենի Մուսավաթ» կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Վահիդ Ահմեդովը հետևյալ թեզն է զարգացնում. «Թուրքիան մեզ համար շատ կարևոր երկիր է՝ եղբայրական երկիր, և նրա շահերին հակասող գործողությունները հակասում են մեր շահերին»[16]:

**Իրաքյան թուրքոմանների և Քիրքուքի գործոնը**

Իրաքյան Քրդստանի անկախության դեմ Ադրբեջանի հանդես գալու պատճառների շարքում դիտարկվում, թերևս խաղարկվում է նաև Իրաքյան թուրքոմանների գործոնը: Մասնավորապես՝ նման հիմնավորմամբ հանդես եկավ Համակարգաբանների համաշխարհային ակումբի թղթակից անդամ Բահադուր Թայիրբեկովը՝ շեշտելով, որ «Ադրբեջանական ժողովրդին ոչ մի կերպ չի կարող ձեռնտու լինել քրդական պետության ստեղծումն այն պատճառով, որ հյուսիսային Իրաքի քաղաքների (Մոսուլ, Սուլեյմանիե) բնակչությունը հիմնականում ադրբեջանցիներ են: Ապրել քրդական պետությունում՝ ԱՄՆ-ի թելադրանքի ներքո, նույնիսկ ավելի վատ հեռանկար է, քան կյանքը Սադամ Հուսեյնի վարչակարգի օրոք»[17]:

---

[13] Տես նույն տեղում:

[14] Տես *Мамед Мамедзаде.* Азербайджан не признает Курдистан – взгляд из Баку на курдский референдум, 29.09.2017 (http://dalma.news/ru/azerbaydzhan-ne-priznaet-kurdistan-vzglyad-iz-baku-na-kurdskiy-referendum/):

[15] Տես նույն տեղում:

[16] Տես “Azərbaycanlı deputatdan İraq Kürdüstanındakı …” (https://www.gunaz.tv/az/xeberler/dunyaveiran-6/azerbaycanli-deputatdan-iraq-kurdustanindaki-referenduma-etiraz-99087):

[17] Տես *Виген Акопян, Мамед Сулейманов.* Итоги выборов в Ираке: Курдистан и новый региональный расклад. «Восстание меньшинств: Косово, Молдавия, Украина, Грузия, Курдистан». Сборник информационного агентства REGNUM. М., 2006, с. 136:

Թուրքմանները (ոչ ադրբեջանցիներ) կարևոր գործոն են Իրաքում: Միևնույն ժամանակ, անհերքելի փաստ է, որ նրանք, թեև մեծ տոկոս են կազմում Քիրքուքում և մի շարք այլ շրջաններում, սակայն Մոսուլում և Սուլեյմանիեում ընդհանրապես գործոն չեն, առավել ևս չեն գերիշխում կամ մեծ տոկոս չեն կազմում:

Ադրբեջանցի պատգամավոր Վահիդ Ահմեդովը, առանձնակի կարևորություն տալով իրաքյան թուրքմանների գործոնին, այդուհանդերձ, համարում է, որ «խնդիրը պետք է դիտարկել ընդհանուր քաղաքական իրադրության տեսանկյունից»՝ նշելով, թե «ի վերջո, այնտեղ կան նաև թուրքմեններ: Ի՞նչ է լինելու նրանց վիճակը: Նրանք երբեք չեն կարողանա հաշտվել այս իրավիճակի հետ և չեն ընդունի «քրդական պետության» գաղափարը, քանի որ մենք համաձայն չենք»[18]:

Իրաքյան թուրքմանների ու նավթաբեր Քիրքուքի գործոնները շահարկում էր նաև «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության (ԱԺՃԿ) նախագահ Ռազի Նուրուլլաևը, որը թուրքմաններին «ադրբեջանցի թյուրքեր» է համարում: Իր հայտարարության մեջ Նուրուլլաևը նշում էր. «Սեպտեմբերի 25-ին Իրաքյան Քրդստանում հանրաքվեի անցկացումը ծանր դրության մեջ է դնում Քիրքուքը, որտեղ ապրում են մեր հայրենակիցները՝ ադրբեջանցի թյուրքերը: Իրաքյան Քրդստանի առաջնորդ Մասուդ Բարզանին և այս հանրաքվեին սատարող բոլոր կողմերը Քիրքուքն Իրաքյան Քրդստանի սիրտն են անվանում»[19]:

Այն միտքն է առաջ քաշվում, թե «Իրաքյան Քրդստանը փաստացի (դեֆակտո) անկախ է գործում», «սակայն դե յուրե այդ քայլը շահագրգիռ կողմերի՝ Թուրքիայի, Իրանի, Սիրիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հետ չհամաձայնեցնելը կարող է ստեղծել հակամարտության նոր գոտիներ: Սա նշանակում է, որ կարող է բռնկում առաջանալ նաև Քիրքուքում»[20]:

«Եթե Իրաքյան Քրդստանը հռչակի իր անկախությունը, ապա պետք է ճանաչվի նաև նման քայլ կատարելու Քիրքուքի իրավունքը»,–նշում է Ռազի Նուրուլլաևը՝ ավելացնելով, որ այս հարցում Ադրբեջանը նույնպես պետք է ակտիվություն ցուցաբերի և միանա դիվանագիտական բանակցություններին.

[18] Տես "Azərbaycanlı deputatdan İraq Kürdüstanındakı..." (https://www.gunaz.tv/az/xeberler/dunyaveiran-6/azerbaycanli-deputatdan-iraq-kurdustanindaki-referenduma-etiraz-99087): Այդուհանդերձ, իրաքյան թուրքմաններին ներկայացնող որոշակի ուժեր իրենց միանշանակ աջակցությունը հայտնեցին ՔԾԿ-ին՝ անկախության հանրաքվեի առնչությամբ: Միայն Թուրքիայի նախաձեռնությամբ ստեղծված Իրաքյան թուրքմենների ճակատ (ԻԹՃ) կազմակերպությունն է, որ բացառեց քրդական անկախության հեռանկարը:

[19] Տես «Рази Нуруллаев: Азербайджан и Турция должны выступать с единой платформы в вопросе Киркука». «Minval.az», 21.09.2017 (https://minval.az/news/123723535):

[20] Տես նույն տեղում:

«Այս հարցում Ադրբեջանը և Թուրքիան պետք է հանդես գան մեկ-միասնական հենքով և պաշտպանեն ադրբեջանական թյուրքերով բնակեց-ված Քիրքուքը: Որպես ԱԱԾԿ, մենք այս հարցը դնում ենք մեր երկրի գերա-կա խնդիրների շարքում և Ադրբեջանի իշխանություններից՝ Քիրքուքի հար-ցում ակնկալում ենք ակտիվ ու լուրջ քայլեր»[21]:

## Իրանի ազարիներ (ադրբեջանցիներ)–քրդեր հարաբերությունների գործոնը

Ադրբեջանն Իրաքյան Քրդստանի խնդիրը որոշակիորեն կապում է նաև Արևմտյան Իրանում քրդական և ազարիական (ադրբեջանական) խառը բնակչության գործոնի հետ: Ազգային հիմքի վրա առանձնանալու քրդերի փորձերը հեշտությամբ կարող են լարվածություն հրահրել Ադրբեջանի հա-րևանի՝ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում: Սա, իր հերթին, կարող է համապատասխան ազգայնամոլական արձագանք առաջ բերել Իրանի ազարիների (ադրբեջանցիների) շրջանում՝ Ադրբեջանին դնելով ծանր վիճակի մեջ: Մի կողմից՝ Ադրբեջանի իշխանությունները հարկադրված կլի-նեն ցուցադրելու իրենց համերաշխությունը «Հարավային ադրբեջանցիների հետ»*, սակայն մյուս կողմից՝ Ադրբեջանի ղեկավարությանն անհրաժեշտ կլինի բարիդրացիական ու աշխատանքային հարաբերություններ պահպա-նել Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության հետ[22]:

Մեր կարծիքով՝ որոշակի դեր են խաղում նաև Իրանի քրդերի ու ազա-րիների միջև առկա ավանդական հակասությունները[23]: 1946 թ. հունվարի 24-ին Իրանի քրդերի հիմնած և մեկամյա կյանք ունեցած Մահաբադի Հան-րապետությունը տարածքային խնդիրներ է ունեցել մինչ այդ՝ 1945 թ. դեկ-տեմբերի 12-ին, Թավրիզ կենտրոնով անկախ հռչակված Ադրբեջանի ժո-ղովրդավարական Հանրապետության հետ, որի կազմի մեջ են մտել նաև «Արևմտյան Ադրբեջան» օստանի քրդական բնակավայրերը: Ավելին. Խորհրդային Միության և Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները որո-շակի ճնշում են գործադրում Մահաբադի Հանրապետության ղեկավարութ-յան վրա՝ որպեսզի վերջինս որպես ինքնավարություն մտնի Ադրբեջանի ժո-ղովրդավարական հանրապետության (ԱԺՀ) կազմի մեջ կամ առնվազն հա-մաձայնվի այն մտքի հետ, որ կենտրոնի (Թեհրանի) հետ ինքնավարության

---

[21] Տես նույն տեղում:

* Իրանի ազարիներին (ադրբեջանցիներին) Ադրբեջանի Հանրապետությունում անվա-նում են «Հարավային ադրբեջանցիներ»:

[22] Տես *Eldar Mamedov*. Iraq΄s unravelling and Azerbaijan. “Eurasianet”, 10 September 2014 (https://eurasianet.org/iraqs-unravelling-and-azerbaijan):

[23] Տես «Քրդեր-ազարիներ (ազերիներ) հակամարտության հիմքերի և դրսևորումների մասին տես *Ռուդիկ Յարալյան,* Քրդական գործոնն Իրանում՝քրդեր-ազարիներ փոխ-առնչությունների համատեքստում»: «Քրդական գործոնը և հայ-քրդական առնչություն-ները տարածաշրջանային զարգացումների համատեքստում, Քրդագիտական հետազո-տություններ»: Խմբ. Վահրամ Պետրոսյան, հ. 1: Ե., 2019, էջ 64–74:

հարցով բանակցություններում ԱԺՀ-ն պետք է ներկայացնի թե՛ ազարիներին, թե՛ քրդերին[24]: Նպատակն էր՝ հետագայում Իրանական Ադրբեջանը միացնել Խորհրդային Ադրբեջանին: Այդ նախագծերը տապալվեցին Իրանից խորհրդային զորքերի դուրսբերումից հետո: Սակայն Իրանի քրդերի և ազարիների միջև տարածքային խնդիրները և տարածքների ընդգրկման տեսանկյունից «Իրանական Ադրբեջան» և «Իրանական Քրդստան» հասկացությունների ընկալումների միջև եղած տարբերությունները պահպանվում են նաև մեր օրերում:

Քրդստանի անկախության հիմնախնդրի դիտարկումը՝ տարածաշրջանային անվտանգության և Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի ապակայունացման տեսանկյունից:

Ադրբեջանի որոշակի պաշտոնական և փորձագիտական շրջաններ Իրաքյան Քրդստանի անկախության հեռանկարը դիտում են նաև տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից: Նրանք պնդում են, որ «Ընդհանուր առմամբ, տարածաշրջանի համար սա սարսափելի և անընդունելի հարց է: Այն կմեծացնի լարվածությունը տարածաշրջանում...»[25]:

### Ադրբեջանի տարածքային ամբողջականության համար Իրաքյան քրդերի ներկայացրած սպառնալիքը

Իրաքյան Քրդստանի վերաբերյալ ներադրբեջանական քննարկումներում մտահոգությունների առանձին աղբյուր է Ադրբեջանի տարածքային ամբողջականության համար քրդերի ներկայացրած սպառնալիքը: 2013 թվականից ադրբեջանական ԶԼՄ-ներում նշվում էր, որ Իրաքյան Քրդստանի «Ռուդավ» պաշտոնական հեռուստաալիքը ցուցադրում է Մեծ Քրդստանի մի քարտեզ, որում ընդգրկված են նաև Ադրբեջանի մի շարք քաղաքներ[*]: Այդ հեռուստաալիքը պատկանում է Բարզանիներին, հետևաբար՝ ադրբեջանական ԶԼՄ-ների քարոզչության հետևանքով տարածում ստացավ հետևյալ դիտարկումը. «...Քարտեզում պաշտոնապես ներառված են Ադրբեջանի տասնյակ քաղաքներ ու շրջաններ: Իսկ սա ակնհայտորեն տարածքային պահանջ է՝ ընդդեմ Ադրբեջանի հնագույն տարածքների: Այդ քարտեզում Քրդստանում ներառված են Իրանի 6 նահանգներ (օստաններ)՝

---

[24] Տես *Abbas Vali*. Kurds and the State in Iran: The Making of Kurdish Identity. New York, 2014, PP. 57–60:

[25] Տես “Azərbaycanlı deputatdan İraq Kürdüstanındakı ...” (https://www.gunaz.tv/az/xeberler/dunyaveiran-6/azerbaycanli-deputatdan-iraq-kurdustanindaki-referenduma-etiraz-99087): Մեջբերված տեսակետն արտահայտել է Ադրբեջանի Միլլի մեջլիսում «Ենի Մուսավաթ» կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Վահիդ Ահմեդովը:

[*] «Ռուդավ» հեռուստաընկերությունն այդ քարտեզը ցուցադրում է եղանակի տեսության շրջանակներում (տես “İraq Kürdüstanı Azərbaycan şəhərlərinin daxil edildyi böyük Kürdüstan xəritəsini təbliğ edir!”. “GünAz TV”, 14 Dekabr 2013 (https://www.gunaz.tv/az/xeberler/arxiv/iraq-kurdustani-azerbaycan-seherlerinin-daxil-edildyi-boyuk-kurdustan-xeritesini-teblig-edir-foto-12675)):

Արևմտյան Ադրբեջանից (Ազարբայջանից) մինչև Խուզեստան, ինչպես նաև Արևելյան Ադրբեջանն ու Համադանի մեծ մասը: Քարտեզում որպես Քրդստան են դիտարկվում նաև Բաղդադի շրջակայքը, Սիրիայի հյուսիսը, Թուրքիայի տարածքի մեծ մասն ու Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը: Քարտեզում ներառված տարածքներում տարբեր ազգությունների 70 միլիոն մարդ է ապրում: Այդ 70 միլիոն մարդուց 20 միլիոնը՝ քրդեր են: Փաստորեն Բարզանին իրականում ծրագրում է 20 միլիոն քրդերի համար զոհաբերել այլ ազգերի պատկանող 50 միլիոն անձանց…»[26]:

ՔՇԿ-ի դեմ մղվող քարտեզագրական պատերազմը, որը վարում են ադրբեջանական ԶԼՄ-ները, շարունակվեց նաև հետագայում, երբ ակնհայտ դարձավ Իրաքյան Քրդստանում անկախության հանրաքվե անցկացնելու ՔՇԿ մտադրությունը, և մամուլում սկսեցին շրջանառել ապագա անկախ քրդական պետության թղթադրամների ու մետաղադրամների նախագծային նմուշները: «Քրդական թղթադրամի վրա Ադրբեջանի տարածքը պատկերված է որպես Քրդստան» վերտառությամբ նյութում մասնավորապես նշվում էր. «Իրաքի հյուսիսում քրդերը նոր քայլեր են ձեռնարկում երկիրը բաժանելու համար: Հյուսիսային Իրաքի Քրդստանի շրջանի ղեկավար Մասուդ Բարզանիի պնդմամբ՝ կանցկացվի հանրաքվե, և լուրջ նախապատրաստական աշխատանքներ են տարվում այսպես կոչված «նոր պետության» թղթադրամների թողարկման ուղղությամբ: Փաստորեն այս թղթադրամների նախագիծը կազմվել է 2011 թ….:

Թղթադրամները կոչվում են «դրավ», և դրանց վրա գրված է՝ «Քրդստանի կենտրոնական բանկ»: Ամենից շատ մտածելու տեղիք է տալիս 200 դրավ արժողությամբ թղթադրամի վրա պատկերված քարտեզը: Հարավային Ադրբեջանի և Թուրքիայի բազմաթիվ շրջաններ, ինչպես նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը քարտեզում ներկայացված են որպես Քրդստան»[27]:

Ադրբեջանի նկատմամբ քրդերի ունեցած տարածքային պահանջատիրության խնդիրը բարձրացնում էր նաև Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր Ֆազիլ Գազանֆարօղլուն: Նա, մասնավորապես, նշում էր. «Ի դեպ, քուրդ անջատողականների որոշ քարտեզներում Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը ներառված է «Մեծ Քրդստանի» կազմում: Այնպես որ, թեև ադրբեջանական հողերի նկատմամբ քրդերի պահանջները բացահայտորեն չեն հնչեցվում, այդուհանդերձ, կուլիսների ետևում դրանք գոյություն ունեն»[28]:

---

[26] Մեջբերվում է ըստ՝ “İraq Kürdüstanı Azərbaycan şəhərlərinin daxil edildyi böyük…” (https://www.gunaz.tv/az/xeberler/arxiv/iraq-kurdustani-azerbaycan-seherlerinin-daxil-edildyi-boyuk-kurdustan-xeritesini-teblig-edir-foto-12675):

[27] Տես “Kürdlərin pulunda Azərbaycan ərazisi Kürdüstan kimi göstərilib”, 16.07.2014 (http://www.dia.az/8/49822-kurdlerin-pulunda-azerbaycan-erazisi-kurdustan-kimi-gosteri lib.html):

[28] Տես *Մամեդ Մամեդզադե,* Նշ. աշխ.:

### Խնդրի ազդեցությունը նավթի գների վրա

Վերը հիշատակված Վահիդ Ահմեդովը համարում է, որ Իրաքյան Քրդստանում տեղի ունեցած իրադարձություններից հետո համաշխարհային շուկայում նավթի գները ժամանակավորապես կաճեն, սակայն «դա կլինի կարճաժամկետ, և հետո նավթի գները կարող են ընկնել»[29]:

Ընդ որում, Ադրբեջանը և Իրաքյան Քրդստանը նաև մրցակցում են էներգակիրների ոլորտում: Հետևաբար անկախություն ձեռք բերելու դեպքում նա կլիներ ֆինանսական ամուր դիրքեր ունեցող պետություն, ինչը նույնպես մտահոգում է Ադրբեջանին:

Այսպիսով՝ ՔԾԿ անկախության հանրաքվեին առնչվող ներադրբեջանական քննարկումների շրջանակներում՝ այս կամ այն համատեքստում լայնորեն շահարկվում էր հայկական գործոնը: Հետևաբար կարևորում ենք նաև տվյալ խնդրի արծարծումը:

### Քրդական կառույցներին հակահայկական քարոզչության նպատակով օգտագործելու Ադրբեջանի քաղաքականությունը

Ադրբեջանի և Թուրքիայի իշխանությունները հետևողական քայլեր են ձեռնարկում ինչպես Իրաքում, այնպես էլ հետխորհրդային տարածության առանձին պետությունների, մասնավորապես՝ ՌԴ և Կենտրոնական Ասիայի պետությունների (առաջին հերթին՝ Ղազախստանի և Ղրղզստանի) տարածքներում գործող քրդական կառույցներին հակահայկական քարոզչության մեջ ներքաշելու և օգտագործելու նպատակով:

Դեռ Ղարաբաղյան առաջին պատերազմի փուլում հայկական կողմի ռազմական հաջողություններին զուգահեռաբար, Ադրբեջանի իշխանություններն իրենց քարոզչական մեքենայի մասը դարձրին նաև Բաքվում գործող քրդական «Ռոնահի» մշակութային կենտրոնի ղեկավարներին: 1993 թ. ապրիլի սկզբներին նրանց մամուլի ասուլիսի ժամանակ հրապարակվեց մի ուղերձ, որում Ադրբեջանի քրդերի անունից «Կենտրոնի» ներկայացուցիչներն ամբողջ աշխարհի քրդերին կոչ էին անում սկսելու ադրբեջանական ժողովրդի հետ համերաշխության արշավ և աջակցել նրա արդար պայքարին, պնդում էին, թե «Հայաստանը Լաչինի և Քելբաջարի շրջաններում ադրբեջանցիների և քրդերի նկատմամբ վարում է ցեղասպանության և էթնիկական զտումների քաղաքականություն», և հաղորդում, թե «վերջին մի քանի օրերի ընթացքում այս շրջանի 12 քրդական գյուղեր են ջնջվել երկրի երեսից, և որ 1988 թվականից ի վեր Հայաստանի տարածքից արտաքսվել են 20000 մահմեդական քրդեր, որոնք ապաստան են գտել Ադրբեջանում», հայտնում էին, որ իրենք Բաքվում այցելել են գործնականում բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունները և նրանց խնդրել փոխանցել համաշ-

---

[29] Տես “Azərbaycanlı deputatdan İraq Kürdüstanındakı...” (https://www.gunaz.tv/az/xeberler/dunyaveiran-6/azerbaycanli-deputatdan-iraq-kurdustanindaki-referenduma-etiraz-99087):

խարհային հանրության ու համապատասխան պետություններին ուղղված իրենց կոչը՝ «Ադրբեջանի դեմ ագրեսիվ քաղաքականություն վարող» Հայաստանի նկատմամբ կիրառելու պատժամիջոցներ[30]:

Հակահայկական քարոզչության շրջանակներում օգտագործվեցին նաև Ադրբեջանում գործող «Ադրբեջանի քրդական երիտասարդական միություն» *("Rojhat")* ու Յակբունը:

Սակայն Ադրբեջանի փորձագիտական շրջաններում շրջանառում է թյուրքական աշխարհի համար հայերի ու քրդերի երկու հավասարազոր սպառնալիքներ լինելու թեզը: Այսպես. հայերին ու քրդերին դիտելով որպես թշնամիների՝ ադրբեջանցի քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն շրջանառության մեջ է դրել նրանց չեզոքացնելու հետևյալ «դեղատոմսը»՝ ուղղորդել միմյանց դեմ՝ քրդերին վարձել և օգտագործել Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական եղանակով լուծելու ժամանակ*:

Սակայն վերոհիշյալ գաղափարներն ամենևին չեն խոչընդոտել, որպեսզի ադրբեջանցի քաղաքական գործիչներն ու փորձագետները հայերին ներկայացնեն Հայաստանի ու Արցախի հանրապետությունների տարածքում ՔԲԿ զորակայանների առկայության և Ղարաբաղյան հակամարտությունում նրա զինյալներին ներգրավելու մեղադրանքներ:

### ՔԲԿ գործոնի շահարկումը Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ 1991–2020 թթ.

Հայտնի է, որ ադրբեջանցի քաղաքական գործիչներն ու պաշտոնյաները, ժամանակ առ ժամանակ պարզապես պնդում էին, թե ՀՀ և ԼՂՀ տարածքում կան ՔԲԿ զորակայաններ, իսկ ադրբեջանցի փորձագետներն այդ թեզն ավելի համոզիչ դարձնելու համար ձգտում էին հիմնավորելու այն միամիտ ենթադրությունը, թե հայերին ձեռնտու է Ղարաբաղում ունենալ ՔԲԿ զորակայաններ: Այսպես. 2007 թ. ադրբեջանցի փորձագետ Անար Մ. Վալիևը հայտարարեց, թե «Ղարաբաղյան իշխանությունները շահում են իրենց տարած-

---

[30] Տես «Курдский центр в Баку призывает к поддержке Азербайджана и санкциям против Армении». «Interfax», 3 апреля 1993 (http://www.interfax-religion.ru/yz/?act=archive&div=8407):

* Զարդուշտ Ալիզադեն մասնավորապես նշում էր. «Թուրքիայում գործող ՔԲԿ (Քրդստանի բանվորական կուսակցության– *Վ.Պ.*) զինյալները չեն հեռանա Քրդստան (Իրաքյան Քրդստան– *Վ.Պ.*): Հասկանու՞մ եք, հայ թշնամուն սպանելու երկու եղանակ կա. առաջինն այն է, որ նրան ուղղակիորեն գնդակահարելով սպանես, սակայն սա մեր օրերում հղի է հետևանքներով, երկրորդը՝ նրա հետ ընկերանալն է: Եթե հայը դառնում է ընկեր, ապա թշնամի հայը մահանում է: Քրդերին կարելի է սպանել, ռմբակոծել, ոչնչացնել, սակայն կարելի է նաև նրանց հետ ընկերություն անել: Այդ դեպքում թշնամի քուրդը կանհետանա, նա կվերափոխվի՝ գործընկերոջ: ...Մենք շատ փող ունենք, ուստի եկեք տանք նրանց, նրանք անմիջապես կվազեն մեզ մոտ և կհամբուրեն մեր ձեռքերը» (տես «Эмиль Мустафаев, Зардушт Ализаде: «Ваххабиты в Азербайджане – марионетки»». На вопросы корреспондента Эмиля Мустафаева ответил политолог Зардушт Ализаде. «Minval.az», 2015 (https://minval.az/news/55562)):

քում ՔԲԿ զորակայաններն վերադիրքավորումից: Առաջին. ՔԲԿ ահաբեկիչների հետ համատեղ հարյուրավոր քրդական ընտանիքներ կշարժվեն դեպի Ղարաբաղ: Այս քայլով հայկական իշխանությունները փորձում են մեծացնել Ղարաբաղի նվազող բնակչությունը: Երկրորդ. Ղարաբաղը ձեռք է բերում հարյուրավոր, եթե ոչ հազարավոր, փորձված ապստամբական զինյալների: Եթե Ադրբեջանը որոշի իր տարածքները հետ բերելու նպատակով սկսել պատերազմ, նրա բանակն ստիպված կլինի, նախ, ռազմական գործողություններ վարել ՔԲԿ վերահսկողության տակ գտնվող շրջաններում՝ նախքան կհասնի բուն Ղարաբաղի տարածքը, միջնաշխարհը: Երրորդ. Լաչինում և Քելբաջարում ՔԲԿ զորակայանի ստեղծումը դեպի Քրդական պետության կերտում տանող առաջին քայլն է: Կարևոր է նաև նշել, որ Հայաստանի քրդական փոքրամասնությունը, որը շուրջ 60 հազար մարդ է, հույս ունի, որ Հայաստանը իրենց կօգնի ինքնավարություն ստանալու գործում: ՔԲԿ-ն՝ իբրև արհեստավարժ ահաբեկչական կազմակերպություն, ունի կառավարման բոլոր հատկությունները և կարող է ստանձնել նմանատիպ պատասխանատվություն: Որոշ փորձագետներ, զուգահեռներ անցկացնելով, պնդում են, թե Քրդստանը Ղարաբաղում Իրաքյան Քրդստանի մանրակերտն է: Հետաքրքրական է, որ Կովկասում Քրդստանի ստեղծման գաղափարը մեծ համակրանքով ընդունվեց Իրաքյան Քրդստանում, որն այս տարածաշրջանի հետ ուղղակի կապերի կոչեր է անում: Նրանք նաև գտնում են, որ զույգ Քրդստանները կլինեն հակակշիռ պանթուրքականությանը»[31]:

Հեղինակի դատողությունները հեռու են իրականությունից: Մասնավորապես՝ Իրաքյան Քրդստանը (ՔՇԿ-ն), այդ թվում՝ Մասուդ Բարզանին, ՔԲԿ-ն մշտապես դիտում են որպես մրցակցի և չեն կարող հանդուրժել նրա դիրքերի ուժեղացումը համաքրդական դաշտում՝ լինի դա Սիրիայում, թե Կովկասում:

Սակայն իրականում Հայաստան (ՀՀ, ԼՂՀ)–ՔԲԿ կապերի մասին հետևողական թուրք-ադրբեջանական պնդումները հետապնդում են հեռագնա քարոզչական նպատակներ: Նման պնդումներով թուրքերը հանդես են գալիս դեռ 1993 թվականից, իսկ Ադրբեջանը դրան միացավ ավելի ուշ՝ 2000-ականներին: Թուրք-ադրբեջանական պնդումներն ակտիվացան հատկապես 2007 թվականից՝ իրենց գագաթնակետին հասնելով 2020 թ. սեպտեմբերի՝ թուրք-ադրբեջանական ագրեսիային անմիջականորեն նախորդած փուլում[32] և շարունակվող պատերազմի ընթացքում[33]: Սրանով նրանք հետապնդում են հետևյալ նպատակները.

---

[31] *Anar M. Valiyev.* Foreign Terrorist Groups and Rise of Home-grown Radicalism in Azerbaijan. “Journal of Human Security”, January 2008, Issue 2.

[32] Տես *Mushvig Mehdiyev.* Armenia Deploys PKK Terrorists To Occupied Azerbaijani Lands. “Caspian News”, 26 September 2020 (https://caspiannews.com/news-detail/armenia-deploys-pkk-terrorists-to-occupied-azerbaijani-lands-2020-9-25-36/):

[33] Տես “Turkey Claims Armenia Sending Syrian Kurds to Fight Azerbaijan”, 30 September 2020 (https://www.breitbart.com/middle-east/2020/09/30/turkey-claims-armenia-sending-syrian-kurds-fight-azerbaijan/):

- ստեղծել նոր ու լրացուցիչ պատճառներ ՀՀ-ի և ԼՂՀ-ի վրա մշտական ճնշում գործադրելու համար,
- միջազգային հանրությանը ՀՀ-ն ու ԼՂՀ-ն ներկայացնել ոչ միայն բացասական, այլև դատապարտելի կերպարով,
- Ադրբեջանի նախագծվող ռազմական ագրեսիայի համար ստեղծել անհրաժեշտ տեղեկատվական ու քարոզչական հարթակ՝ հնարավոր դարձնելով նաև Թուրքիայի անմիջական միջամտությունը[34]:

## Եզրակացություններ

Այսպիսով՝

- Ադրբեջանի համար անընդունելի է եղել ու մնում ոչ միայն ՔԾԿ, այլև ցանկացած քրդական անկախության հեռանկարը,
- Ադրբեջանը չի դիտարկում Էրբիլում հյուպատոսություն բացելու տարբերակը և հնարավոր չի համարում նաև Բաքվում ՔԾԿ ներկայացուցչության բացման հեռանկարը,
- ադրբեջանցի և Իրաքի քուրդ քաղաքական գործիչների ու պաշտոնյաների միջև հեռակա և անմիջական շփումները դիտվում ու մատուցվում են որպես Ադրբեջան–Իրաք շրջանակներում կամ համատեքստում տեղի ունեցող զարգացումներ,
- ՔԾԿ անկախության հանրաքվեին և քրդական խնդրին, ինչպես նաև Քրդստանի բանվորական կուսակցությանը առնչվող ներադրբեջանական քննարկումների շրջանակներում այս կամ այն համատեքստում լայնորեն շահարկվում է հայկական գործոնը,
- թեև Ադրբեջանն ու Թուրքիան ձգտել են տարաբնույթ քրդական կառույցներին օգտագործելու հակահայկական քարոզչության ասպարեզում, Ադրբեջանից դուրս գործող քրդական կառույցները երբևէ իրենց աջակցությունը չեն հայտնել Ադրբեջանին՝ 1992–1994 թթ. առաջին Ղարաբաղյան պատերազմի, 2016 թ. քառօրյա պատերազմի, 2020 թ. հուլիսին տավուշյան ռազմական գործողությունների և սեպտեմբերին սկսված թուրք-ադրբեջանական ագրեսիայի ընթացքում: Քրդական կառույցները հիմնականում չեն ներգրավվել նաև Թուրքիայի և Ադրբեջանի հակահայկական քարոզչության մեջ, թեև ժամանակ առ ժամանակ հնչեցվել են հայ-քրդական առնչություններում առկա որոշակի պրոբլեմներ:

[34] Տես «Лжеинформация о связи Армении и Курдской рабочей партии - возможная прелюдия к турецкому вторжению: Армен Айвазян». ИА «REGNUM», 07.12.2007 (http://www.regnum.ru/news/929158.html):

**РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ**

# СНОШЕНИЯ МЕЖДУ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКОЙ И РЕГИОНАЛЬНЫМ ПРАВИТЕЛЬСТВОМ КУРДИСТАНА И ВОПРОС НЕЗАВИСИМОСТИ КУРДИСТАНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ АЗЕРБАЙДЖАНА

*В. А. ПЕТРОСЯН, кандидат исторических наук, доцент, старший ученый-аналитик Центра региональных стратегических исследований НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Компаративный анализ аргументации азербайджанских государственных, политических и общественных деятелей в процессе внутриполитического дискурса по референдуму о независимости Курдистана, проведенному Региональным Правительством Курдистана, позволяет выявить глубинные причины негативной позиции Азербайджана. При этом Азербайджан свои отношения с курдской автономией в составе Ирака строит сугубо в рамках межгосударственных отношений с Иракской Республикой, что особенно четко проявилось при избрании на пост Президента Ирака курдского политического деятеля Джаляля Талабани.

В то же время Турция и Азербайджан пытаются использовать курдский фактор в интересах своей антиармянской политики как в целях обвинения РА в связях с Рабочей партией Курдистана (объявленной ими террористической организацией), так и создания в среде курдов антиармянских настроений (с привлечением курдских организаций, действующих в АзР).

**REGIONAL SECURITY**

# RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF AZERBAIJAN AND THE KURDISTAN REGIONAL GOVERNMENT ALONG WITH THE ISSUE OF INDEPENDENCE OF KURDISTAN IN THE AZERBAIJANI SOCIOPOLITICAL DISCOURSE

*V. A. PETROSYAN, PhD in History, Associate Professor, Senior Research Fellow, Center for Regional Strategic Studies, NDRU, MOD, RA*

SUMMARY

The comparative analysis of the reasoning by the Azerbaijani state, political and public figures during the domestic policy discourse on the referendum for the independence of Kurdistan, held by the Kurdistan Regional Government, allows to reveal the root causes for Azerbaijan’s negative stance. With that, Azerbaijan builds its relations with the Iraqi-

based Kurdish autonomy purely in the framework of interstate relations with the Republic of Iraq, which was in particular obviously manifested when the Kurdish politician Jalal Talabani was elected the President of Iraq.

Meanwhile, Turkey and Azerbaijan are trying to exploit the Kurdish factor in the interests of their anti-Armenian policy both in order to accuse the RA of its links with the Kurdistan Workers' Party (declared a terroristic organization by them), and to create anti-Armenian sentiments among the Kurds (with the involvement of Kurdish organizations operating in Azerbaijan).

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ «ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ» ՏԵՂԱՇԱՐԺԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼՔ. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Դ. Մ. ՄԱՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ*



Համաշխարհային քաղաքականության մեջ մշտապես տեղի են ունենում ուժերի հաշվեկշռի փոփոխություններ, որոնք ստանում են տարբեր ձևեր ու մասշտաբներ: Այդ փոփոխությունների պատմաաշխարհագրական առանձնահատկությունները, հզոր տերությունների հեգեմոնիայի հաստատման և անկման պատճառներն ուսումնասիրել են տարբեր գիտնականներ: Նրանք համարում են, որ համընդհանուր աշխարհաքաղաքական համակարգը զարգանում է փուլաշրջանային սկզբունքով՝ մշտապես անցնելով մի «աշխարհակարգից» մեկ այլ «աշխարհակարգի», ինչի ընթացքում արմատապես փոխվում է մեծ տերությունների միջև ուժերի հաշվեկշիռը, ի հայտ են գալիս հակամարտությունների նոր օջախներ, փոխվում է համաշխարհային համակարգի հաստատութենական կառուցվածքը[1]: Յուրաքանչյուր փուլաշրջան բաղկացած է զարգացման երեք փուլից. առաջինը՝ առաջավարի պարտություն և միջազգային լեգիտիմության կորուստ, երկրորդը՝ տերություններից մեկի գերիշխանության հաստատում, և երրորդը՝ նրա անկում (գերիշխանության վախճան):

Համարվում է, որ միջազգային հարաբերությունների համակարգում բացարձակ առաջատար կարող է դառնալ այն պետությունը, որը գերիշխող դիրքի է հասել տնտեսական, ռազմական, քաղաքական և գաղափարական ոլորտներում: Առանձնակի կարևորություն է տրվում այն հանգամանքին, որ հեգեմոն պետությունը տարածի գաղափարներ, որոնք լայն ընդունելություն ստանան աշխարհի մյուս պետություններում: Գերիշխող պետության աստիճանական անկումն սկսվում է այն ժամանակ, երբ այդ պետության տարածած ազատական գաղափարները և դրանց վրա հենվող քաղաքականությունը նրա մրցակիցներին հնարավորություն են տալիս յուրացնելու տեխնի-

---

[1] Սույն խնդիրների մասին ավելի հանգամանորեն տես *P. Kennedy.* The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000. London, 1988 (https://www.cia.gov/library/abbottabad-compound/04/04A70DD54F5CB55BED6BE3B351E242EE_The_Rise_and_Fall_of_Great_Power_Paul_Kennedy.pdf):

կական նվաճումներն ու արտադրության կազմակերպման առաջավոր փորձը և հասնելու ավելի մեծ արդյունավետության, քան գերիշխող պետությունը:

Սույն խնդրով զբաղվող վերլուծաբանները միակարծիք են, որ համաշխարհային առաջավարը կատարում է *«համաշխարհային ոստիկանի»* դեր, առավելություն ունի աշխարհի ռեսուրսների բաշխման ու վերաբաշխման գործում, դրա հետ մեկտեղ կրում է աշխարհում կարգուկանոնի պահպանման վիթխարի բեռը, ինչը նրանից խլում է ռազմական և տնտեսական հսկայական ռեսուրսներ: Դա իր հերթին աստիճանաբար հանգեցնում է այսպես կոչված «կայսերական գերլարվածության», որը համարվում է գերիշխանության հենց այդ փուլաշրջանային փոփոխությունների պատճառներից մեկը և աճում է այնպիսի ռազմավարական ռեսուրսների պակասի հետևանքով, որոնք անհրաժեշտ են գերտերության համաշխարհային գերիշխանության պահպանման համար: Ռազմավարական ռեսուրսների պակասն ի վերջո հանգեցնում է գերլարվածության այն սահմանագծին, որից հետո սկսվում է գերտերության հեգեմոնիայի վախճանը:

Հակիրճ պատմական ակնարկ

Հայ ականավոր գիտնական Ն. Հովհաննիսյանը պատմագիտական տեսանկյունից արծարծել է համաշխարհային քաղաքականության ասպարեզում ուժերի հաշվեկշռի փոփոխությունները՝ ներկայացնելով միջազգային հարաբերությունների կենտրոնի փոփոխման դինամիկան տարբեր դարերում՝ սկսած մ. թ. ա. 1-ին դարից, երբ ուժային կենտրոններ էին Հռոմն ու Պարսկաստանը, հետագայում նաև Եվրասիա մայր ցամաքում որպես առաջատար ուժեր ի հայտ եկած Արաբական խալիֆայությունը, Մոնղոլական կայսրությունը, Օսմանյան կայսրությունը և այլն[2]:

Համաշխարհային քաղաքականության բնագավառում գրեթե կես հազարամյակ գերակա դեր են խաղացել Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևմտյան ափին գտնվող պետությունները՝ նաև իրենց տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ (ռազմածովային նավատորմ և այլն) այլ մայր ցամաքներում վերահսկելով հեռավոր տարածքները: Դա Արևմուտքին հնարավորություն տվեց ընդարձակելու աշխարհագրական սահմանները Եվրոպայի Ատլանտյան ափերից դեպի Արևմտյան կիսագունդ, նախ՝ նվաճման և, այնուհետև՝ բնակեցման միջոցով:

16-րդ դարից մինչև 20-րդ դարի կեսերը այս մշակութային ու քաղաքական զավթողագործությունը հյուսիսատլանտյան եվրոպական պետություններին դարձրեց համաշխարհային մասշտաբով գերիշխող: Այդ ընթացքում Արևմուտքի շրջանակներում եղել են տեղաշարժեր առաջատարի հարցում:

Երկու համաշխարհային պատերազմների հետևանքով Եվրոպայի թու-

[2] Տես *Ն. Հովհաննիսյան,* Միջազգային կենտրոնի տեղաշարժը արևմուտքից արևելք. նոր իրողություններ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)», հ. 3: Ե., 2014, էջ 313–322:

լացման, բաժանվածության շնորհիվ ԱՄՆ-ը հնարավորություն ստացավ օգտագործելու նախորդ դարում զարգացված իր արդյունաբերական և ռազմական կարողությունները, Եվրոպայում բորբոքված մայրցամաքային ու կայսերական հակամարտություններից հեռու լինելու և իր աշխարհագրական մեկուսացածության հանգամանքը՝ Արևմուտքում որպես դոմինանտ ուժ ի հայտ գալու համար: Արդեն Սառը պատերազմով պայմանավորված՝ ԽՍՀՄ-ին զսպելու ընդհանուր ռազմավարության շրջանակներում ԱՄՆ-ի գերակայությամբ ձևավորվեց *Ատլանտյան արևմուտքը* (ԱՄՆ և Արևմտյան Եվրոպա), որն իր դաշնակցությունը հաստատութենացրեց ՆԱՏՕ-ի ստեղծմամբ և այլն: Սառը պատերազմի ընթացքում Ատլանտյան արևմուտքը ԽՍՀՄ-ի նկատմամբ ուներ հստակորեն արտահայտված ֆինանսական և տնտեսական առավելություն, իսկ միջազգային կազմակերպությունների համագործակցային ցանցի միջոցով (ՄԱԿ, ԱՄՀ, ՀԲ) կարողացավ նաև հաստատութենացնել համաշխարհային քաղաքականության ասպարեզում իր գերիշխող դիրքը:

Սառը պատերազմի ավարտից և ԽՍՀՄ փլուզումից հետո միջազգային հարաբերություններում ձևավորվեց միաբևեռ աշխարհակարգ՝ ԱՄՆ-ի բացարձակ գերիշխանությամբ: 1990-ական թվականների և 2000-ականների սկզբի համար հատկանշական եղան միջազգային հարաբերություններում Արևմուտքի (առաջին հերթին՝ ԱՄՆ-ի) բացարձակ գերիշխանությունը (այդ թվում՝ ամերիկյան արժեքների, կենսակերպի, ազատական ժողովրդավարական գաղափարների համաշխարհային տարածմամբ) և եվրաատլանտյան անվտանգության համակարգի (ՆԱՏՕ և ԵՄ) ընդլայնումը: Ամերիկյան առաջատար մասնագետներն ընդունում էին մոլորակի գրեթե ամբողջ տարածքի վրա ԱՄՆ-ի միահեծան տիրապետության փաստը, և որ ԽՍՀՄ փլուզումից հետո պատմության մեջ առաջին անգամ Եվրասիայում գերակայում է ոչ եվրասիական ուժը[3], ինչպես նաև կանխատեսում էին «արևմուտքի վերջնական հաղթանակն» ու ազատական ժողովրդավարության աստիճանական տարածումն ամբողջ երկրագնդում: Նրանք նաև պնդում էին, որ այսուհետև այլևս չեն լինի տարբեր գաղափարախոսությունների վրա հիմնվող հակամարտություններ[4]:

Այն, որ ԱՄՆ-ն ստանձնել էր «համաշխարհային ոստիկանի» գործառույթը, հստակ կերպով դրսևորվեց հատկապես «չարի առանցքի» դեմ պայքարի շրջանակներում, երբ ռազմականորեն ներգրավվեց 2001 թ. Աֆղանստանի և 2003 թ. Իրաքի պատերազմներում:

---

[3] Տես *Zbigniew Brzezinski.* The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives, 1997 (https://www.cia.gov/library/abbottabad-compound/36/36669B7894E857AC4F3445EA646BFFE1_Zbigniew_Brzezinski_-_The_Grand_Chess Board.doc.pdf):

[4] Տես *F. Fukuyama.* The End of History and the Last Man. New York, 1992 (https://www.democraziapura.altervista.org/wp-content/uploads/2015/01/1992-Fukuyama.pdf):

### Ուժի «ցրումը» Արևմուտքից դեպի այլ տարածաշրջաններ. Արևելքի հզորացումը

Հատկանշական է, որ 20-րդ դարի առաջին կեսին մի շարք արևմտյան առաջատար միջազգայնագետներ համաշխարհային հզորության երեք գլխավոր կենտրոնների շարքում Ատլանտյան օվկիանոսի արևելյան (հյուսիսամերիկյան) և արևմտյան (եվրոպական) ծովեզրի հետ մեկտեղ նշում էին նաև Եվրասիայի Հեռավոր Արևելքը՝ հիմնավորելով, որ թեև ուժը (քաղաքական, ռազմական, ֆինանսատնտեսական, տեխնոլոգիական և այլ առումներով) գլխավորապես կենտրոնացած է Ատլանտյան օվկիանոսի երկու հատվածներում, այդուհանդերձ, մեծ հավանականությամբ այն մոտակա տասնամյակների ընթացքում կտեղափոխվի դեպի «արևելք»՝ դեպի Եվրասիայի արևելյան հատված, առաջին հերթին՝ Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան[5]: Իսկ արդեն հետսառըպատերազմյան ժամանակահատվածում ամերիկյան հեղինակավոր ռազմավարներն սկսեցին աստիճանաբար ուրվագծել բազմակենտրոն աշխարհակարգի կառուցումը[6], որի հիմքում էին ԱՄՆ-ի հզորության հարաբերական թուլացումը և տնտեսական, քաղաքական ու ռազմական այլ հզոր կենտրոնների (Չինաստան, Հնդկաստան, Ճապոնիա, Ռուսաստան, Բրազիլիա, իսլամական աշխարհ և այլն) ձևավորումը: Այս համատեքստում ուշագրավ էր հատկապես Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ս. Հանտինգտոնի «քաղաքակրթությունների բախման» տեսությունը, որի շրջանակներում առաջ քաշվեց և հիմնավորվեց տարբեր քաղաքակրթությունների համընդհանուր պայքարի անխուսափելիության վարկածը, որում լուրջ հարցականի տակ էր դրվում մեկ համաշխարհային գերտերության (տվյալ դեպքում՝ ԱՄՆ-ի) բացարձակ գերակայության հնարավորությունը և Սառը պատերազմում Արևմուտքի, եվրաատլանտյան ուժերի վերջնական հաղթանակը: Նա համարում էր, որ ԽՍՀՄ-ի նկատմամբ ԱՄՆ-ի տարած ռազմավարական հաղթանակը քաղաքակրթական հաղթանակ չէ, և չի կարող լինել համընդհանուր արևմտականացում: Ավելին. նա պնդում էր, որ Սառը պատերազմի ավարտից հետո արևմտյան քաղաքակրթության «զավթողագործությունը» հանգեցնելու է արևելյան քաղաքակրթությունների «զարթոնքի», ինչի հետևանքով Արևմուտքին կհակադրվի կոնֆուցիոնականություն–իսլամ քաղաքակրթական միասնության հենքի վրա հզորացող Արևելքը, առաջին հերթին ի դեմս Չինաստանի և իսլամական պետությունների[7]:

---

[5] Տես *H. Mackinder.* The round world and the winning of the peace. “Foreign Affairs”, 1943, Vol. 21, N 4; *N. Spykman.* Geography and Foreign Policy I. “American Political Science Review”, February 1938, Vol XXXII, N 1:

[6] Տես *Z. Brzezinski.* Strategic Vision: America and the Crisis of Global Power. New York, 2012, PP. 32–47; *J. Nye.* Will the Liberal Order Survive?, *R. Niblett.* Liberalism in Retreat. “Foreign Affairs”, January-February 2017, Vol. 96, N 1:

[7] Տես *S. Huntington.* The Clash of Civilizations and the Remaking of World Order. Simon & Schuster, 1996:

Թե՛ 2000-ական թվականների առաջին կեսին Իրաքում և Աֆղանստանում Ջ. Բուշի վարչակազմի ձեռնարկած և վիթխարի տնտեսական, քաղաքական ու ռազմական ռեսուրսներ խլած աշխարհաքաղաքական «արկածախնդրությունները», թե՛ 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ԱՄՆ-ին կանգնեցրին լրջագույն ներքին սոցիալ-տնտեսական, նաև արտաքին քաղաքական խնդիրների առաջ (ԱՄՆ-ի գրավչության ազդեցության և նրա նկատմամբ եղած վստահության մասնակի անկում, վերջին տասնամյակում իսլամական աշխարհում հակաամերիկյան տրամադրությունների աճում և այլն): Միևնույն ժամանակ, հստակ կերպով ուրվագծվեց նաև համաշխարհային քաղաքականության «ծանրության կենտրոնի» տեղաշարժը դեպի արևելք: Ճգնաժամը, լրջագույն հարված հասցնելով ԱՄՆ-ի տնտեսությանն ու ֆինանսական հաստատություններին, ցույց տվեց, որ համաշխարհային տնտեսական մարտահրավերները հաղթահարելու համար այժմ պահանջվում են ոչ միայն աշխարհի միակ գերտերության կամ Արևմուտքի ընդհանրական, այլև այն պետությունների ջանքերը, որոնք մինչ այժմ չէին մասնակցել համաշխարհային ֆինանսատնտեսական որոշումների կայացմանը: Այս նոր իրականության գործնական դրսևորումն էր 2008 թ. ասիական, աֆրիկյան և լատինաամերիկյան պետությունների մուտքը «Մեծ ութնյակ» (ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ռուսաստան), որը մինչ այդ համարվում էր առավելապես «արևմտյան ակումբ»՝ այն վերածելով «Մեծ քսանյակի»[8]:

Խորհրդանշական է, որ ամերիկյան առաջատար գիտնականներն սկսեցին արծարծել այսպես կոչված «հետամերիկյան աշխարհի» ձևավորման գաղափարը[9]: Նույնիսկ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջ. Նայը, որը տարբեր չափումներում (տնտեսական, ռազմական, «փափուկ ուժի» և այլն) ԱՄՆ-ի և նրա հավանական մրցակիցների հնարավորությունների համեմատական վերլուծության հիման վրա կարծում է, որ ամերիկյան դարաշրջանը դեռևս ավարտված չէ, այդուհանդերձ, նշում է համաշխարհային քաղաքականության մեջ ԱՄՆ-ի դերի եթե ոչ *բացարձակ*, ապա *հարաբերական* անկման ի հայտ եկած միտումները, որոնք ուղեկցվում են վերջին տասնամյակներում արդյունավետ բարեփոխումների և արդիականացման շնորհիվ արագորեն զարգացող արևելյան ուժային կենտրոնների, առաջին հերթին՝ Չինաստանի և Հնդկաստանի տնտեսական ու տեխնոլոգիական հզորացմամբ և մի շարք ոլորտներում համաշխարհային մասշտաբի դերակատարների վերածմամբ[10]:

Համաշխարհային քաղաքականության մեջ հօգուտ ոչ արևմտյան դերակատարների ուժային հաշվեկշռի փոփոխություններն է փաստում նաև Հ.

---

[8] Ավելի հանգամանորեն տես “G20” կայքը (https://g20.org/en/Pages/home.aspx):

[9] Տես *F. Zakaria.* The Post-American World. W. W. Norton & Company, 2008; *N. Ferguson.* Civilization Part 1 BBC Series, 06.11.2016 (https://www.youtube.com/watch?v=VaKQHpqnRMA):

[10] Տես *J. Nye.* Is the American Century Over?, 10 December 2014 (https://www.files.ethz.ch/isn/187176/Lecture%20Transcript_December_2014.pdf):

Քիսինջերն իր «Աշխարհակարգ» աշխատության մեջ: Հեղինակը խնդիրը դիտարկում է արդի միջազգային հարաբերությունների հիմքը կազմող Անվտանգության վեստֆալյան համակարգի թուլացման տեսանկյունից, մի համակարգի, որը համընդհանրացման, ազգ-պետությունների դերի փոփոխման, ոչ պետական դերակատարների ազդեցության մեծացման հետևանքով հայտնվել է խոր ճգնաժամում: Քիսինջերը համարում է, որ մի շարք պետություններ (օրինակ՝ Չինաստան, Ռուսաստան, Իրան, Թուրքիա և այլն) ունեն աշխարհակարգի վերաբերյալ իրենց ուրույն համապիտանի մոտեցումները և հակված են նվազ չափով առաջնորդվելու Արևմուտքի ձևավորած վեստֆալյան համակարգի անկյունաքարային սկզբունքներով (պետությունների ինքնիշխանություն, տարածքային ամբողջականության պահպանում և այլն), իսկ տարբեր ոչ պետական դերակատարներ բացարձակապես չեն ընդունում այդ համակարգի լեգիտիմությունը[11]:

Անշուշտ, վերջին 10-15 տարիների ընթացքում մենք ականատես ենք եղել, թե ինչպես են մեծ թվով ոչ արևմտյան պետություններ բացահայտորեն մարտահրավեր նետում Արևմուտքին և աշխարհում ԱՄՆ-ի միահեծան տիրապետությանը: Ցույն օրինակներից է դեռ 2007 թ. Անվտանգության քաղաքականության հարցերով մյունխենյան համաժողովում Ռուսաստանի Նախագահ Վ. Պուտինի ելույթը, որը մասնագետները համարում են Սառը պատերազմի ավարտից հետո Ռուսաստանի ղեկավարության ամենակոշտ հակաարևմտյան ելույթը, որտեղ հստակ ուրվագծվում էր փոփոխվող աշխարհակարգում առաջատար ուժային կենտրոնի վերածվելու և Արևմուտքի գերակայության դեմ պայքարելու՝ Ռուսաստանի ռազմավարական տեսլականը[12]: Հետագա տարիներին ռուսական նոր եվրասիականության դպրոցի տարբեր ներկայացուցիչներ փորձեցին ձևավորվող բազմակենտրոն աշխարհակարգում հայեցակարգայնացնել Արևմուտքի դեմ պայքարում Ռուսաստանի աշխարհաքաղաքական ռազմավարությունը[13]:

Այս համատեքստում պետք է դիտել նաև վերջին տարիներին հետխորհրդային տարածությունում եվրաատլանտյան ուժերի ծավալումը զսպելուն միտված Ռուսաստանի քաղաքականությունը (Վրաստան, Ուկրաինա) և ԱՄՆ–Ռուսաստան ռազմավարական հակամարտության խորացումը, հետխորհրդային տարածաշրջանում իր ուժերը համախմբելու և ինտեգրային գործընթացներն առաջ մղելու (ԵԱՏՄ ստեղծում) ուղղությամբ Ռուսաստանի ձեռնարկած քայլերը[14]: Հարկ է նշել նաև Ռուսաստանի ձեռնարկած ինտեն-

---

[11] Տես *H. Kissinger.* World Order. New York, 2014:

[12] Տես «Выступление Владимира Путина на Мюнхенской конференции 2007 года», 09.02.2017 (https://www.youtube.com/watch?v=VtLa--bUVSo):

[13] Տես *Դ. Մանասյան,* Նոր եվրասիականության աշխարհաքաղաքական հայեցակարգի շրջանակներում Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունների զարգացման հնարավորությունների ռազմավարական գնահատում: «ՀԲ», 2019, հմ. 4, էջ 28–35:

[14] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *D. Trenin*. Russia’s Evolving Grand Eurasia Strategy: Will it Work? “Carnegie Moscow Center”, 20 July 2017 (https://

սիվ քայլերը՝ ուղղված Չինաստանի և Հնդկաստանի հետ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ (ԲՐԻԿՍ, Համագործակցության շանհայյան կազմակերպություն) ձևաչափերով համագործակցության ծավալմանը: Հենց այդ շրջանակներում, որպես Արևմուտքին հակակշիռ եվրասիական հնարավոր բևեռ, ռուս մասնագետներն առաջ են քաշում այսպես կոչված «Մեծ եվրասիական համագործակցության» գաղափարը[15]: Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ էապես մեծանում է թուրքական, իրանական և իսլամական գործոնների կարևորությունը:

Վերջին տարիներին Արևելքի հզորացման և այդ համատեքստում բազմակենտրոն աշխարհակարգի ձևավորման կարևոր ցուցիչ են դիտվում Չինաստանի առաջավարական ձգտումները՝ հենված նրա տնտեսական, տեխնոլոգիական, ռազմաքաղաքական և քաղաքակրթական հզորությունների վրա: Դրա կարևոր դրսևորումներից է 2013 թ. սեպտեմբերին առաջ քաշված «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» նախաձեռնությունը (2017 թ. վերանվանվել է «Գոտի և ճանապարհ»), որի հիմնական նպատակը Չինաստանը Եվրոպային կապող նոր ծովային ու ցամաքային տրանսպորտային ենթակառուցվածքների ստեղծումն է: Տվյալ նախաձեռնության շրջանակներում Չինաստանը նախատեսում է զարգացնել բոլոր պետություններում փոխկապված ենթակառուցվածքների ցանց, ընդլայնել տրանսպորտային և տարանցիկ միջանցքները, մեծացնել բեռնափոխադրումների ծավալն ու շահավետությունը: Ներկայումս Չինաստանն աշխարհում ենթակառուցվածքների ոլորտում ամենամեծ ներդրողն է (վերջին երկու տասնամյակում այս ոլորտ տարեկան ուղղվել է միջինը ՀՆԱ-ի 8,5 %-ը)[16]: Այդ նախաձեռնության անքակտելի մաս է չինակենտրոն ֆինանսական համակարգը, որն արտացոլում է համաշխարհային տնտեսական զարգացման՝ Չինաստանի առաջ քաշած օրակարգը: Ինչպես նշում է Ռ. Կապլանն իր «Աշխարհագրության վրեժը» աշխատության մեջ, Չինաստանը իր «Գոտի և ճանապարհ» նախագծով, ֆինանսատնտեսական և ժողովրդագրական ծավալապաշտությամբ, Կենտրոնական Ասիայից մինչև Ռուսաստանի հեռավորարևելյան շրջանները և Հարավչինական ծովից մինչև Հնդկական օվկիանոս տարածվող իր ազդեցությամբ հիմնովին փոխում է ուժերի՝ վերջին տասնամյակներում ձևավորված հաշվեկշիռը համաշխարհային գերակայության համար առանցքային համարվող Եվրասիա մայր ցամաքում[17]: Անշուշտ, դեպի արևելք համաշ-

carnegie.ru/2017/07/20/russia-s-evolving-grand-eurasia-strategy-will-it-work-pub-71 588):

[15] Այս մասին ավելի հանգամանորեն տես *S. Karaganov*. The new Cold War and the emerging Eurasia. “Journal of Eurasian Studies”, July 2018, Vol. 9, Issue 2 (https:// www.sciencedirect.com/science/article/pii/S18793 66518300174):

[16] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Բ. Պ. Պողոսյան, Ա. Գ. Դավթյան, Գ. Է. Հարությունյան,* Չինաստանի «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» նախաձեռնությունում ՀՀ ներգրավման ռազմավարական հնարավորությունները: «ԱՏ», 2018, հմ. 2:

[17] Տես *R. Kaplan.* The Revenge of Geography: What the Map Tells us about Coming Conflicts and the Battle against Fate. New York, 2012, PP. 188–227:

խարհային քաղաքականության «ծանրության կենտրոնի» տեղափոխման հիմնական ցուցիչներից է համարվում նաև «հզոր տասնյակի» նոր անդամներից մեկի՝ Հնդկաստանի զարգացումը՝ իր ժողովրդագրական ներուժով, տնտեսական և ռազմական հնարավորություններով և արդեն դրսևորած համաշխարհային հավակնություններով հանդերձ: Բրազիլիան և Ինդոնեզիան իրենց հերթին հայտ են ներկայացրել «Մեծ քսանյակի» շրջանակներում մասնակցելու համաշխարհային տնտեսական-ֆինանսական որոշումների կայացմանը՝ հստակ կերպով շեշտելով իրենց տարածաշրջաններում առաջավար լինելու հավակնությունները: Դրա հետ մեկտեղ, պետք է նկատի ունենալ նաև Ասիայում վերջին տարիներին տնտեսական առաջընթացով աչքի ընկնող Հարավային Կորեային, Թայվանին, Սինգապուրին:

Արևելքի հզորացման ցուցիչ կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ հիշատակված պետությունները վերածվում են առաջատար տեխնոլոգիաների կենտրոնների, իսկ Չինաստանը՝ այդ ոլորտում ԱՄՆ-ի հիմնական մրցակցի (ներկայումս աշխարհի քսան ամենամեծ տեղեկատվական տեխնոլոգիական ընկերություններից ինը չինական են):

Հատկանշական է, որ բազմակենտրոն աշխարհակարգի ձևավորման պայմաններում հզորացող ոչ արևմտյան ուժային կենտրոններն առաջ են քաշում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված և հին աշխարհակարգը բնորոշող միջազգային կառույցների (ՄԱԿ և այլն) վերափոխման և ներկա իրողություններին համապատասխանեցման պահանջ՝ նույնիսկ հարցականի տակ դնելով ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի համակարգի արդյունավետությունն ու լեգիտիմությունը[18]:

Միևնույն ժամանակ նշենք, որ չնայած ԱՄՆ-ի համաշխարհային դերի նվազման և արևելյան ուժային կենտրոնների դերի աճման ներկայիս միտումներին, ԱՄՆ-ը համաշխարհային քաղաքականության ասպարեզում շարունակում է մնալ որպես առաջատար ուժ: Պետության ուժը բնորոշող բոլոր ավանդական պարամետրերով (ռազմական, տնտեսական և ֆինանսական), ինչպես նաև տեխնոլոգիական նորամուծություններով, բնակչության ստեղծարար էներգիայով, հաստատությունների հզորությամբ, «փափուկ ուժի» գործիքակազմով ԱՄՆ-ը այլ ուժային կենտրոնների նկատմամբ ունի առավելություն և առնվազն 10–15 տարի կպահպանի իր առաջատար դիրքերը:

Այսպես. Չինաստանը դեռ չունի ԱՄՆ-ի համաշխարհային դերն ստանձնելու և նրան «հաջորդելու» անհրաժեշտ ներուժ: Ի տարբերություն ԱՄՆ-ից, որը սահմանակից է օվկիանոսներին և բարեկամ հարևաններին, համաշխարհային գերակայության հասնելու համար Չինաստանն իր աշխարհագրական դիրքով այդքան էլ նպաստավոր պայմաններում չէ: Նա տարած-

[18] Տես 2020 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 75-րդ նստաշրջանի ընթացքում Ռուսաստանի, Չինաստանի, Իրանի, Թուրքիայի առաջնորդների ելույթները (http:// kremlin.ru/events/president/news/64074/videos,https://www.youtube.com/watch?v =FHkp81LSt3U, https://www.youtube.com/watch?v=ozjnSyLwAdA):

քային վեճեր ունի Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Ճապոնիայի, Մալայզիայի և Թայվանի հետ: Ի տարբերություն ԱՄՆ-ից, որը թերթաքարային նավթի ու գազի հեղափոխական կիրառության շնորհիվ էներգակիրներ ներմուծողից վերածվել է արտահանողի, Չինաստանը մեծապես կախված է այն էներգակիրների ներկրումից, որոնց ուղին անցնում է Պարսից ծոցով և Հնդկական օվկիանոսով, որտեղ ԱՄՆ-ն ունի ռազմածովային գերակայություն:

ԵՄ-ին առաջատար համաշխարհային ուժ կարելի է համարել միայն նրա տնտեսական կարողությունների հաշվառմամբ, բայց ոչ ռազմական ու քաղաքական ազդեցության մակարդակով, քանի որ այս տեսակետից էապես զիջում է թե՛ ԱՄՆ-ին, թե՛ Չինաստանին: Ավելին. ԵՄ-ում խորացող ժողովրդագրական ճգնաժամը (ծերացող բնակչություն և ցածր ծնելիություն) և շատ լուրջ միգրացիոն պրոբլեմները (մահմեդականների թվաքանակի էական մեծացման միտումներ և այլն), ռազմական (ՆԱՏՕ) և քաղաքական տեսանկյունից ԱՄՆ-ից լիովին կախվածությունը նվազեցնում են ԵՄ-ի ազդեցությունը համաշխարհային մասշտաբով պրոյեկտելու հնարավորությունը:

Թեև Ռուսաստանն ունի իր երբեմնի գերակայությունը հետխորհրդային տարածաշրջանում հաստատելու և իր նախկին համաշխարհային դերը վերականգնելու ակնհայտ հավակնություններ, այդուհանդերձ իր ներքին քաղաքական, տնտեսական, հաստատութենական, ինչպես նաև շատ լուրջ ժողովրդագրական պրոբլեմների պատճառով չունի դրան հասնելու իրական հնարավորություններ:

Հնդկաստանը և Ճապոնիան ևս չունեն նման համաշխարհային դեր ստանձնելու իրական հնարավորություններ, հատկապես, եթե նկատի առնենք Չինաստանի հզորացումը և նրան հակակշռելու հարցում ԱՄՆ-ից այդ պետությունների աճող կախվածությունը և այլն:

Ուստի միջազգային հարաբերություններում Արևմուտքի համաշխարհային դերի թուլացումը չի ենթադրում համաշխարհային մասշտաբով «արևելյան» գերակայության հաստատում: Սույն խնդրով զբաղվող մի շարք առաջատար ռազմավարագետների գնահատմամբ՝ ուժային կենտրոնների «առաջատար տասնյակի» համեմատական վերլուծությունը վկայում է, որ ներկայումս ոչ մի պետություն (այդ թվում և ԱՄՆ-ը) չունի անհրաժեշտ տնտեսական, քաղաքական, ռազմական և այլ ռեսուրսներ ու հնարավորություններ, որ կարողանա ստանձնել այն համաշխարհային առաջնորդության դերը, որն ուներ ԱՄՆ-ը Խորհրդային Միության փլուզումից հետո: Պատահական չէ, որ «կայսերական գերլարվածությունը» ուղղակիորեն դրդում է ԱՄՆ-ին հրաժարվելու 1990-ականներին իր մշակած «ազատական գերիշխանության» մեծ ռազմավարությունից և տարբեր տարածաշրջաններում որդեգրելու «օֆշորային հաշվեկշռման» ռազմավարությունը: Դա ենթադրում է, որ ԱՄՆ-ը աստիճանաբար նվազեցնում է իր ռազմաքաղաքական լայնածավալ ներգրավվածությունը տարբեր տարածաշրջաններում՝ «կարգ ու կանոնի» ապահովման գործառույթը, և այնտեղ իր շահերի առաջմղումը «փոխանցում» է իր տարածաշրջանային դաշնակիցներին՝ նրանց տալով «արտոնյալ հնարավորություններ», որոնք, ելնելով իրենց շահերից, պետք է զգալի

չափով իրենց վրա վերցնեն նաև ԱՄՆ-ի հակառակորդ ուժերին զսպելու և տարածաշրջանում այլ հեգեմոն ուժի ի հայտ գալը կանխելու և ուժային հաշվեկշիռը պահպանելու բեռը: Նման ռազմավարությունը ԱՄՆ-ին հնարավորություն է տալիս խնայելու իր ռազմավարական ռեսուրսները, կրճատելու պաշտպանական ծախսերը, խնայված միջոցների գումարները ներդրելու իր տնտեսության մեջ և այլն[19]:

Ուստի առավել հավանական է, որ «հետամերիկյան» աշխարհը լինի ոչ թե «չինական» կամ «ռուսական», այլ մի աշխարհ, որտեղ չի լինի մեկ գերիշխող համաշխարհային ուժ, և կլինեն տարբեր հզորությամբ մի շարք ուժային կենտրոններ, որոնք տիրապետող կլինեն իրենց տարածաշրջաններում: Առաջատար ռազմավարագետների կանխատեսմամբ՝ ցայտունորեն արտահայտված համաշխարհային առաջնորդ չլինելու պայմաններում ուժային կենտրոնները տարածաշրջանային գերակայության համար ծավալվող պայքարում կլինեն ավելի հավակնոտ, իրենց քայլերում՝ նվազ կաշկանդված: Որպես արդյունք՝ կմեծանան տարածաշրջանային հակամարտությունների ծագման հաճախականությունը, դրանց մասշտաբները և ինտենսիվությունը[20]:

### Բազմակենտրոն աշխարհակարգ. ազդեցությունը Մերձավոր Արևելքի և Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա

Վերջին տարիներին Մերձավոր Արևելքում տեղի ունեցող զարգացումները և ուժերի հաշվեկշռի փոփոխությունները ևս վկայում են, որ համաշխարհային քաղաքականության «ծանրության կենտրոնը» տեղաշարժվում է Արևմուտքից դեպի Արևելք, ինչպես նաև այն, որ այդ պայմաններում ԱՄՆ-ը որդեգրել է նոր ռազմավարություն: ԱՄՆ-ը, որը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Մերձավոր Արևելքում միշտ ունեցել է տիրապետող դեր, այժմ աստիճանաբար կորցնում է տարածաշրջանում իր երբեմնի գերակայությունը: Այդ են փաստում հենց ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության ռազմավարական պլանավորման գործում ներգրավված մասնագետները[21]: Վերլուծությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ի համար Մերձավոր Արևելքի ռազմավարական կարևորությունն ունի նվազման միտում (զգալիորեն նվազել է ԱՄՆ-ի կախումը տարածաշրջանի նավթից և գազից), իսկ «համաշխարհային ոստիկանի» գործառույթն ստանձնելու հնարավո-

---

[19] Տես *John J. Mearsheimer, Stephen M. Walt.* “The Case for Offshore Balancing: a Superior US Grand Strategy”. “Foreign Affairs”, Vol. 95, Issue 4 (July–August 2016), PP. 70-83; *G. Allison.* “The New Sphere of Influence: Sharing the Globe with other Great Powers”, *Foreign Affairs,* March/April 2020 (https://www.foreignaffairs.com/ articles/ united-states/2020-02-10/new-spheres-influence):

[20] Տես *G. Allison.* “The New Sphere of Influence: Sharing the Globe with other Great Powers”, “Foreign Affairs”, March–April 2020 (https://www.foreignaffairs.com/ articles/united-states/2020-02-10/new-spheres-influence); *Z. Brzezinski.* “Strategic Vision: America and the Crisis of Global Power”, 2012. New York, PP. 32–47:

[21] Տես, օրինակ, *Steven Simon, Jonathan Stevenson*. The End of Pax Americana: Why Washington’s Middle East Pullback Makes Sense. “Foreign Affairs”, November-December 2015, Vol. 94, N 6:

րությունների և հավակնությունների էական նվազման, ԱՄՆ-ում ի հայտ եկած, այդ թվում՝ համավարակի հետևանքով, լուրջ ներքաղաքական և սոցիալ-տնտեսական պրոբլեմների առկայության պայմաններում հավանական է, որ Վաշինգտոնը սակավ շահագրգռվածություն ցուցաբերի, ավելի քիչ ռեսուրսներ տրամադրի և պակաս ներգրավված լինի[22]:

Մերձավոր Արևելքում ստեղծված այդ աշխարհաքաղաքական վակուումն ինտենսիվորեն լրացնում են Ռուսաստանը և Չինաստանը[23]: 2015 թ. սեպտեմբերին սիրիական հակամարտությունում Ռուսաստանի ռազմական ներգրավումը, որը Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային տարածաշրջանից դուրս առաջին ռազմական ձեռնարկումն էր, նպատակաուղղված էր ոչ միայն զուտ մեծացնելու Մերձավոր Արևելքում իր ռազմական, քաղաքական-դիվանագիտական և տնտեսական դերը, այլև վերականգնելու Ռուսաստանի՝ որպես համաշխարհային ուժային կենտրոնի դիրքերը և հաստատելու նրա առանցքային դերը միջազգային անվտանգության պրոբլեմների լուծման գործում[24]:

Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա նա, ելնելով իր ռազմավարական մշակույթի առանձնահատկություններից, բացահայտ կերպով ցույց չի տալիս համաշխարհային առաջավար դառնալու և Մերձավոր Արևելքում առաջատար արտաքին ուժի վերածվելու հեռահար նպատակները[25]: Պեկինը, զերծ մնալով տարածաշրջանի ռազմաքաղաքական հակամարտություններում ներգրավումից և դեռևս չունենալով այնտեղ ԱՄՆ-ի ավանդական դերն ստանձնելու ո՛չ նպատակ, ո՛չ էլ հնարավորություններ, որդեգրել է ավելի հավասարակշռված և պրագմատիկ քաղաքականություն՝ շեշտը դնելով բացառապես էներգետիկ և ֆինանսատնտեսական բաղադրիչի վրա[26]: Չինաստանի աճող աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական ազդեցության վկայությունն է հատկապես «Գոտի և ճանապարհ» ծրագրի շրջանակներում Ծոցի արաբական միապետությունների, Իրանի*, Եգիպտոսի,

---

[22] Սույն խնդրով ամերիկյան առաջատար վերլուծաբանների ռազմավարական գնահատումների վերաբերյալ ավելի հանգամանորեն տես “Foreign Affairs”: “The Post-American Middle East”, November-December 2015, Vol. 94, N 6:

[23] Տես *С. Тарасов.* «Смогут ли Россия и Китай заменить США на Ближнем Востоке?». ИА «REGNUM», 23 августа 2020 (https://regnum.ru/news/polit/3043629.html):

[24] Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ռազմավարության մասին տես “Russian Strategy in the Middle East”. RAND Corporation, 2017, PP. 1–15:

[25] Տես *Z. Brzezinski.* Strategic Vision: America and the Crisis of Global Power, P. 33:

[26] Տես *Ehud Yaari.* “China’s Middle East Policy: Speak Softly and Wave a Large Purse”. “The Washington Institute for Near East Policy”, 17 June 2019 (https://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/chinas-middle-east-policy-speak-softly-and-wave-a-large-purse):

* Չինաստան–Իրան ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցության խորացումը ամերիկյան առաջատար որոշ մասնագետներ դիտում են որպես մարտահրավեր Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի գերակա դիրքերին (այս մասին ավելի հանգամանորեն

Թուրքիայի, Իսրայելի ու միմյանց միջև լուրջ հակասություններ ունեցող այլ ուժերի հետ տնտեսական ու քաղաքական համագործակցության խորացումը, ինչի շնորհիվ նա դարձել է տարածաշրջանի մի շարք պետությունների ամենամեծ առևտրային գործընկեր և մի շարք ենթակառուցվածքային նախագծերում խոշորագույն ներդրող, ինչն իր հերթին ստեղծում է փոխադարձ շահերի վրա խարսխված ամուր տնտեսական ու քաղաքական փոխկախվածություն[27]: Մերձավոր Արևելքում Չինաստանի կապիտալ ներդրումների ծավալը կազմում է մոտավորապես 123 մլրդ դոլլար[28]:

Անշուշտ, Մերձավոր Արևելքում Ռուսաստանի և Չինաստանի դերի մեծացման, այնտեղ «կարգուկանոն» հաստատող արտատարածաշրջանային ուժի բացակայության, ինչպես նաև ԱՄՆ-ի «օֆշորային հաշվեկշռման» ռազմավարության պայմաններում տեղի են ունենում մի շարք հետաքրքրական երևույթներ: Առաջին. ռազմաքաղաքական որոշումների կայացման գործում մեծանում են մերձավորարևելյան պետությունների ինքնուրույնությունն ու տարաշարժի հնարավորությունը (օրինակ՝ Թուրքիայի ներգրավումը Սիրիայում, Իրաքում, Լիբիայում, Լիբանանում, ակտիվացումը արևելյան Միջերկրականում և այլն): Երկրորդ. ավելի է սրվում այդ ուժային կենտրոնների միջև ընթացող պայքարը (Իրան–Սաուդյան Արաբիա, Իրան–Իսրայել, Թուրքիա–Սաուդյան Արաբիա, Թուրքիա–Իրան, Եգիպտոս–Թուրքիա և այլն): Եվ երրորդ. ԱՄՆ-ի դաշնակիցները (օրինակ՝ Ծոցի միապետությունները, Եգիպտոսը, Թուրքիան և այլն) հարկադրված են լինում վերաիմաստավորելու իրենց համագործակցային և դաշնակցային անվտանգային մեխանիզմները և արտաքին անվտանգային ռազմավարության բազմազանեցման հնարավորությունները (դրա վկայությունն են վերջին տարիներին Չինաստանի, Հնդկաստանի և հատկապես Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական, քաղաքական և տնտեսական կապերը խորացնելու ԱՄՆ-ի ավանդական դաշնակիցների ձեռնարկած ինտենսիվ քայլերը):

Ինչպես Մերձավոր Արևելքի պարագայում է, հետսառըպատերազմյան միջազգային անվտանգության համակարգի կերպափոխումը և համաշխարհային քաղաքականության ասպարեզում ուժերի հաշվեկշռի փոփոխությունները էապես ազդում են նաև Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա:

**Առաջին.** հավանական է, որ Արևմուտքի համաշխարհային ազդեցության աստիճանական թուլացումն առաջիկա տարիներին ուղեկցվի տարածա-

---

տես *Michael Singh*. When China Met Iran. “New York Times”, 21 July 2020 (https://www.nytimes.com/2020/07/21/ opinion/china-iran.html)):

[27] Տես *J. Fulton.* China’s Changing Role in the Middle East. Atlantic Council, June 2019, PP. 2–14 (https://www.atlanticcouncil.org/wp-content/uploads/2019/06/Chinas_ Changing_Role_in_ the_Middle_East. pdf); “China’s Great Game in the Middle East”. European Council on Foreign Relations, Policy Brief, October 2019 (https://www.ecfr.eu/page/-/china_great_game_middle_ east.pdf):

[28] Տես *Р. А. Кузнецов.* О роли и месте Китая на Ближнем Востоке. «Институт Ближнего Востока», 11 августа 2020 (http://www.iimes.ru/?p=72151):

շրջանում արևելյան ուժային կենտրոնների, առաջին հերթին՝ Չինաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային ազդեցության ծավալմամբ: Դրա վկայությունն են նաև վերջին տարիներին հարավկովկասյան պետությունների հետ հարաբերությունները զարգացնելու գործում Չինաստանի ցուցաբերած շահագրգռվածությունը և այդ համատեքստում նաև չինական «փափուկ ուժի» գործիքակազմի ընդլայնմանը նպատակաուղղված քայլերը (հարկ է նշել, որ Չինաստանը ՀՀ-ում կառուցում է հետխորհրդային տարածաշրջանում իր երկրորդ ամենամեծ դեսպանատունը): Չինաստանը տարածաշրջանը դիտում է որպես «Մետաքսի ճանապարհի» կարևոր «հանգույց և կայարան», որն ունի տարանցիկ բեռնափոխադրումների, ապահովումային զարգացման մեծ ներուժ:

**Երկրորդ**. ինչպես արդեն նշել ենք, բազմակենտրոն աշխարհակարգի կառուցումը մեծացնում է միջազգային հարաբերություններում տարածաշրջանային ուժային կենտրոնների տեղաշարժի հնարավորությունները, որոշումների կայացման ինքնուրույնությունը, տարածաշրջանային դերը և հավակնությունները:

Դրա վկայությունը կարող ենք համարել Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմական քաղաքականությունն ու հավակնոտ նպատակները, որոնք դրսևորվում են Ադրբեջանի հետ «մեկ ազգ՝ երկու պետություն» և «մեկ ազգ՝ մեկ բանակ» սկզբունքներով ռազմաքաղաքական դաշինքի սերտացման ու հաստատութենացման ձևով: 2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ այդ միացյալ ուժերի սանձազերծած պատերազմը հստակ կերպով ցույց տվեց Հարավային Կովկասում իր դերը մեծացնելու Թուրքիայի հավակնությունները: Սույն նպատակին հասնելու ուղիներից մեկը Անկարան համարում է Ղարաբաղյան հիմնախնդրի «սիրիականացումը», ինչը Թուրքիային կարող է տալ թե՛ ռազմական, թե՛ քաղաքական ազդեցության լծակներ: Դրա ապացույցներն են ինչպես Սիրիայում և Լիբիայում գործած թուրքամետ վարձկան զինյալների օգտագործումը ղարաբաղյան հարթակում, այնպես էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափի քայքայմամբ ղարաբաղյան բանակցային գործընթաց մուտք գործելու և Հարավային Կովկասում սիրիական հակամարտության կարգավորման Աստանայի գործընթացը հարմարեցնելու Անկարայի ձգտումները: Անշուշտ, Թուրքիան ձգտում է, ամրապնդվելով Հարավային Կովկասում և օգտագործելով Արևմուտքի թուլացման իրողությունը, Մեծ Մերձավոր Արևելքի շրջանակներում ընդլայնելու սակարկման իր դաշտը ու մեծացնելու Ռուսաստանի և այլ ուժային կենտրոնների հետ ռազմավարական առևտուր վարելու իր հնարավորությունները: Կարելի է ենթադրել նաև, որ «օֆշորային հաշվեկշռման» ռազմավարության շրջանակներում ամերիկյան ռազմավարներն ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Հարավային Կովկասում մեծ դեր են վերապահում Թուրքիային Վաշինգտոնի շահերն առաջ մղելու գործում (առաջին հերթին՝ Հարավային Կովկասից Ռուսաստանի դուրսմղման, Չինաստանի և Իրանի «զսպման» առումով):

Նման պայմաններում առավել հավանական է դառնում տարածաշրջա-

նային մրցակցության սրումը «կայսերական հավակնություններ» ունեցող Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Չնայած վերջին տարիներին տնտեսական, քաղաքական, ռազմատեխնիկական և այլ ոլորտներում երկկողմ համագործակցության ինտենսիվացմանը՝ Թուրքիան պատրաստ չէ Ռուսաստանի հետ «իրավիճակային» գործակցությունը փոխադրելու ռազմավարական դաշնակցության մակարդակ՝ վտանգելով ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերությունները[29]:

Այս առումով Ռուսաստանի, Չինաստանի և Իրանի շահերը համընկնում են: Վերջիններս, շահագրգռված լինելով Հարավային Կովկասում ռազմաքաղաքական կայունության պահպանման գործում, գիտակցում են, որ Հայաստանն ունի Թուրքիան և թյուրքական աշխարհը բաժանող «ամրոցի ռազմավարական գործառույթ»: Ուստի հայ-ադրբեջանական ճակատում ստատուս-քվոյի փոփոխությունը կարող է հանգեցնել Թուրքիա–Ադրբեջան դերի մեծացմանը՝ վերջիններիս համար ստեղծելով պանթյուրքական ռազմավարության իրագործման համար նպաստավոր նախադրյալներ: Դա կարող է սպառնալ Չինաստանի կենսական շահերին, եթե հաշվի առնենք երկրի արևելյան Սինցզյան-ույղուրական ինքնավար շրջանում անկայունության խորացման հավանական վտանգը և իր աշխարհաքաղաքական ռազմավարության մեջ «ույղուրական գործոնը» Չինաստանի դեմ օգտագործելու ԱՄՆ-ի աճող ձգտումը:

### ՀՀ արտաքին անվտանգության ռազմավարության վերաիմաստավորման անհրաժեշտությունը

Արտաքին անվտանգության ռազմավարությունն իրականացնելու համար Հայաստանն իր արտաքին քաղաքականության մեջ որդեգրել է բոլոր կենտրոնների հետ հաշվեկշռված հարաբերությունների պահպանման սկզբունքը: Դրա էությունն է արտաքին հարաբերությունների հնարավորինս ընդլայնումը և որոշումների կայացման գործում իր ինքնուրույնությունը պահպանելու նպատակով տարբեր ուժային կենտրոնների հետ համագործակցության իրատեսական հաշվեկշռումը:

Միաբևեռ աշխարհակարգից բազմակենտրոն աշխարհակարգին անցումը և այդ համատեքստում դեպի արևելք համաշխարհային քաղաքականության «ծանրության կենտրոնի» տեղաշարժը ոչ միայն էապես մեծացնում են տարածաշրջանային անվտանգության առանձին համակարգերում առաջատար դիրք ունեցող դերակատարների գործունեության ինքնուրույնության մակարդակը, այլև հանգեցնում են տարածաշրջանային մակարդակում լարվածության և դիմակայության աճման, ինչը բացասաբար է ազդում հատկապես փոքր պետությունների անվտանգային համակարգի վրա:

Տվյալ զարգացումները պահանջում են վերաիմաստավորել ՀՀ արտա-

[29] Տես *Դ. Մանասյան,* Նոր եվրասիականության աշխարհաքաղաքական հայեցակարգի շրջանակներում Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունների զարգացման հնարավորությունների ռազմավարական գնահատում: «ՀԲ», 2019, հմ. 4:

քին անվտանգային քաղաքականությունը և առավելագույնս համապատասխանեցնել աշխարհակարգի նշված փոփոխություններին:

2020 թ. հուլիսին հրապարակված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում, որում ուրվագծվել են առաջիկա տարիներին ՀՀ անվտանգության ապահովման նպատակով արտաքին քաղաքականությունում իրագործվելիք հիմնական ռազմավարական ուղղությունները, էապես կարևորվել են Ռուսաստանի հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափով ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների կայուն խորացումն ու ընդլայնումը[30]: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է թվում ռազմավարությունում ուժային կենտրոնների հետ համագործակցության ռազմավարական առաջնահերթություններ սահմանելիս ավելի մեծ կարևորություն տալ հզորացող արևելյան ուժային կենտրոններին: Թեև «Ռազմավարությունում» շեշտվում է Չինաստանի ու Հնդկաստանի հետ կապերի խորացման կարևորությունը (2007 թ. ռազմավարությունում Չինաստանը դիտվում էր զուտ ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համատեքստում), սակայն ձևակերպումներն արված են շատ սեղմ և ընդհանրական ձևով[31], ինչի հետևանքով մի շարք ուղերձներ դուրս են մնացել կամ ճապաղել, իսկ դա հնարավորություն չի տալիս ՀՀ-ին այդ ուժերի համար լինելու ավելի ընկալելի ու կանխատեսելի: Դա առաջին հերթին վերաբերում է Չինաստանի նախաձեռնած «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» ծրագրին (որը «Ռազմավարության» մեջ չի էլ հիշատակվում), քանի որ վերլուծությունները վկայում են, որ ՀՀ ռազմավարական շահերից է բխում նրա մասնակցությունը սույն ծրագրին ինչպես տարածաշրջանային մեկուսացման հաղթահարման, այնպես էլ Հայաստանում իրագործվող ոլորտային-ենթակառուցվածքային ծրագրերում չինական ներդրումների ու ֆինանսական ռեսուրսների ներգրավման տեսանկյունից[32]:

Այս առումով նաև կարևորվում է Իրանի հետ համապատասխան ուղղություններով հարաբերությունների զարգացումը՝ հաղորդակցային ուղիների զարգացման շեշտադրմամբ. առաջին հերթին՝ Պարսից ծոց–Սև ծով բազմատեսակ (մուլտիմոդալ) տրանսպորտային միջանցքի գործարկման և Չինաստանի «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» նախաձեռնությանը դրա ինտեգրման հնարավորության տեսանկյունից[33]:

[30] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», հուլիս 2020 (https://www.sns.am/file_manager/razmavarutyun/Ազգային%20անվտանգության%20ռազմավարություն%202020%20(1)_0.pdf):

[31] Տես նույն տեղում:

[32] Այս մասին ավելի հանգամանորեն տես «Աշխատանքային տետրեր». «Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունում ՀՀ ներգրավման ռազմավարական ուղենիշները», 2018, հմ. 2:

[33] Տես *Բ. Պ. Պողոսյան, Ա. Գ. Դավթյան, Գ. Է. Հարությունյան,* Նշ. աշխ.:

# ԽԱՂԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ. ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

*Ս. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ, Ռ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ավագ գիտնական-վերլուծաբան*





Արդի աշխարհում տեղի են ունենում արագընթաց փոփոխություններ, որոնք բնորոշվում են քաղաքական գործընթացների քաոսայնությամբ, անորոշությամբ, և որոնց ուսումնասիրության ու վերլուծության պրակտիկայում լայն կիրառություն են ստացել խաղային տեխնոլոգիաները: Ավելին. այդ փոփոխությունների նպատակայնության ապահովման համար քաղաքական գիտության մեջ խաղերի տեսությունն ու խաղային տեխնոլոգիաների տրամաբանությունն սկսեցին կիրառվել որպես քաղաքական գործընթացների մոդելավորման մի առանձնահատուկ եղանակ:

## Խաղերի տեսությունը՝ որպես միջազգային հարաբերությունների վերլուծության մեթոդ

**Խաղերի տեսությունը**, որը կիրառական մաթեմատիկայի բաժիններից է, ուսումնասիրում է մրցակցության պայմաններում խաղացողների կամ դերակատարների օպտիմալ ռազմավարությունները՝ դիմացինի ռեսուրսների և հավանական քայլերի հաշվառմամբ: Խաղերի տեսությունը ախոյանի հնարավոր քայլերի բազմազանությամբ պայմանավորված անորոշության պարագայում օպտիմալ որոշումների մաթեմատիկական մոդելների մշակման տեսություն է, **երբ որոշում ընդունող սուբյեկտը («խաղացողը»), տիրապետելով հնարավոր իրավիճակների վերաբերյալ տեղեկույթի, ընդունում է համապատասխան որոշում կամ ընտրում «ռազմավարություն», որոնք տվյալ իրավիճակում առավել մեծ հավանականությամբ կապահովեն «հաջողություն»**[1]:

1950-ական թվականներից՝ «Սառը պատերազմի» մեկնարկից հետո, խաղերի տեսությունն սկսում է ներթափանցել քաղաքական գիտության ոլորտ, և քաղաքագիտական ուսումնասիրություններում ավանդական

[1] Տես *Л. А. Петросян.* Теория игр. Учебник. 2-е изд., перераб. и доп. СПб., 2012, с. 8:

պատմանկարագրական (կռահողական-տրամաբանական) մոտեցումից անցում է կատարվում դեպի գործառական-կիրառական (վերլուծական-կանխատեսումային մոտեցում): Խաղերի տեսությունը հնարավորություն է տալիս «քանակականացնելու» որոշ քաղաքական պարամետրներ և դրա շնորհիվ կիրառելու դրանց վերլուծության օբյեկտիվ մեթոդները[2]:

Այս համատեքստում տարաբնույթ հակամարտային իրավիճակների վերլուծությունը բարդացել է, քանի որ մեծ թվով թաքուն (ոչ հաստատութենական) գործոններով ծանրաբեռնվածությունը դրանց ուսումնասիրությունը դարձնում է անհնար, եթե խաղային տրամաբանությունը կիրառվում է առանց ապագայի ռազմավարության մշակման և արդյունքի կառավարման: Այսօր քաղաքական գիտության մեջ խաղերի տեսության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս, նախ՝ մոդելավորելու տարբեր ժամանակների բազմաթիվ քաղաքական իրադարձություններ, ապա՝ յուրաքանչյուր իրավիճակի համար օպտիմալ որոշումների ընդունմամբ ստեղծելու համապատասխան ռազմավարությունների բազա: Հետևաբար հետազոտողը կարող է խաղերի տեսության կիրառմամբ հիմնավորել օպտիմալ որոշման ընդունման բազմամակարդակ մոդելավորումը, օպտիմալության սկզբունքներին բավարարող որոշումների մշակումը և այդ որոշումների իրագործման եղանակների շրջանակներում անորոշության վերացումը կամ աճումը: Անորոշության պայմաններում ու հակամարտային իրավիճակներում գիտակցված և ուղղորդված **որոշումների ընդունման բարդ գործընթացը** պահանջում է դերակատարների ռազմավարական մտածողություն: Այս համատեքստում հնարավոր է խաղերի տեսության միջոցով վերլուծել որոշումների ընդունման ժամանակ մասնակիցների ռացիոնալ գործողությունները:

Ակնհայտ է, որ խառնաշփոթության պայմաններում, երբ բարդ է վերլուծել իրականությունը (ինչը հանգեցնում է նոր խառնաշփոթության), խաղացողների քաղաքականությունը եզրահանգվում է և կորցնում իր ռազմավարական բնույթը: Անորոշությունը այս պարագայում կարող է պայմանավորված լինել ոչ միայն իրենց գործողությունների արժեքաբանությունը թաքցնելու խաղացողների ձգտմամբ, այլև տեղեկատվության համակարգում ձեռնածվական տեխնոլոգիաների առկայությամբ: Որպես կանոն, մարդու և հասարակության, քաղաքացու և պետության, պետությունների միջև հարաբերությունների հիմքում հենց այս գործոններն են:

Այսօր խաղերի տեսությունը լայնորեն կիրառվում է բոլոր՝ համընդհանրացման, համատեղայնացման, տեղային մակարդակներում քաղաքական գործընթացների վերլուծության և կանխատեսման, անորոշությունների ու քաոսների կանխման, միջուկային զսպման, ատոմային զենքի չտարածման, տնտեսական պատժամիջոցների սահմանման մեխանիզմների մշակման[3], ինչպես նաև համաշխարհային առևտրի, տարաբնույթ միջազգային հակա-

---

2 Տես *Д. Дегтерев, А. Дегтерев.* Теория игр и международные отношения. «Мировая экономика и международные отношения», 2011, № 2:

3 Տես *Т. Шеллинг.* Стратегия конфликта. М., 2007:

մարտությունների և պետական քաղաքականության ռազմավարական մոդելավորման նպատակով:

Խաղերի տեսության էությունը ռացիոնալ հակառակորդների ռազմավարական գործակցության մաթեմատիկական մոդելավորումն է, երբ յուրաքանչյուր դերակատարի (խաղացողի) գործողությունները կախված են մյուսի գործողություններից: Խաղերի տեսությունը հակամարտային իրավիճակում որոշումներ ընդունելու մաթեմատիկական տեսություն է: Որոշումներն ընդունում են ռացիոնալ դերակատարները՝ մրցակցության պայմաններում, իսկ դա մի այնպիսի իրավիճակ է, որին մասնակցում են տարբեր կողմեր՝ ունենալով ուրույն հնարավորություններ, շահեր և ռազմավարություններ[4]:

Խաղերի տեսությունն ուսումնասիրում է, թե ինչպես կարող են ռացիոնալ դերակատարների որոշումներն ազդել մյուս դերակատարների որոշումների վրա[5]: Խաղացողներից յուրաքանչյուրը փորձում է մաթեմատիկական հաշվարկներով որոշել, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել իր հաջորդ քայլը:

Ըստ Հ. Ռաիֆայի՝ խաղերի տեսության հարացույցները հետևյալն են.

- պետք է գործել (ոչինչ չանելը նույնպես գործել է),
- ակնկալվող արդյունքին հասնելը կախված է ինչպես քո, այնպես էլ խաղի մյուս մասնակիցների կատարած քայլերից,
- դու չգիտես, թե ինչ է անելու մրցակիցդ, բայց դու գիտես, թե նա ինչ կարող է անել,
- նրանք չգիտեն, թե դու ինչ ես անելու[6]:

Միջազգային հարաբերություններում խաղերի տեսությունը հատկապես հաճախ օգտագործվում է բանակցությունների վերլուծության, որոշումների ընդունման, հակամարտությունների կարգավորման և փոխշահավետ համաձայնության հասնելու նպատակով:

Խաղերի տեսության բնույթը լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է տարբերակել զրոյական գումարով խաղերի և համագործակցային խաղերի բնույթները[7]: Զրոյական գումարով խաղերի դեպքում մի կողմի հաղթանակը համարժեք է մյուս կողմի պարտությանը: Եթե մրցակիցները երկուսն են, ապա խաղը համարվում է «անտագոնիստական», այսինքն՝ կողմերը կարող են պայքարել այնքան ժամանակ, մինչև որ նրանցից մեկը ջախջախվի: Կարելի է զրոյական գումարով խաղերի շարքը դասել նաև **հաստատուն գումարով խաղը**, որտեղ մի խաղացողի օգուտի ավելացումը տեղի է ունենում մյուս խաղացողի օգուտի համապատասխան կրճատման հաշվին:

Զրոյական գումարով խաղերին բնորոշ են այնպիսի իրավիճակներ, երբ կողմերի միջև մրցակցությունը մեծ է, և երբ մասնակիցներն ունեն խիստ

---

[4] Տես *Դ. Դեգտերև, Ա. Դեգտերև,* Նշ. աշխ.:

[5] Տես *H. Raiffa.* Negotiation Analysis: The Science and Art of Collaborative Decision Making. First Harvard University Press paperback edition. London, 2007, P. 53:

[6] Տես նույն տեղում, էջ 54:

[7] Տես *A. Dixit, S. Skeath, D. Reiley.* Games of Strategy. Ed. 4. London, 2015, P. 21:

հակադիր շահեր (մարզական միջոցառումներ, ռազմական բախումներ): Երբ դերակատարների թիվը մեծ է երկուսից, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ հնարավոր է՝ որոշ դերակատարների միջև կազմվեն դաշինքներ:

**Համագործակցային խաղերի** ժամանակ դերակատարները կարող են ընդունել համաձայնեցված որոշումներ, կազմել դաշինքներ, ինչպես նաև փորձել շահույթը բաժանել դաշինքների անդամների միջև: Համագործակցային տեսակի խաղերի տեսությունը շատ քիչ է կիրառվում քաղաքագիտությունում, քանի որ խաղի մասնակիցները հաճախ հակված են լինում խախտելու ձեռք բերված պայմանավորվածությունները:

Միջազգային հարաբերությունների վերլուծության բնագավառում բավական կարևորվում է Թ. Շելինգի «Հակամարտության ռազմավարությունը» աշխատությունը, որն առաջիններից էր, որտեղ դերակատարների հարաբերությունները համարվում էին անտագոնիստական, սակայն ընդհանուր խաղը դիտարկվում էր *ոչպես ոչ զրոյական գումարով*[8]*:* Նա առաջ էր քաշում «վստահելի պարտավորություններ» հասկացությունը, ըստ որի՝ խաղի յուրաքանչյուր մասնակից իր հակառակորդին պետք է վստահեցնի, որ ինքը երբեք չի հրաժարվելու իր ռազմավարությունից: Դրանով հնարավոր է սահմանափակել հակառակորդի տարաշարժի ազատությունը:

Խաղերի դասակարգման մեջ կարևորվում են նաև վերջավոր և անվերջ կրկնվող խաղերը[9]: Վերջավոր խաղերն այն համաձայնեցված խաղերն են, որոնց վերջում կան հաղթողներ և պարտվողներ: **Վերջավոր խաղերի** մասնակիցները հաճախ ունենում են կարճաժամկետ նպատակներ: Իսկ **անվերջ կրկնվող** խաղերի դեպքում խաղացողները սովորաբար ունենում են երկարաժամկետ ռազմավարություններ և մարտավարություններ: Անվերջ կրկնվող խաղերում խաղացողներից մեկը կարող է հաղթել միայն այն դեպքում, երբ մյուս խաղացողները ուժասպառ լինեն և չկարողանան շարունակել խաղը:

Խաղերի տեսության մեջ կարևոր տեղ ունեն նաև միաժամանակյա և հաջորդական խաղերը: **Միաժամանակյա** խաղում կողմերի միջև չի կատարվում տեղեկույթի փոխանակում, նրանք իրենց որոշումներն ընդունում և իրագործում են՝ հաշվի առնելով ոչ թե մրցակցի կատարած քայլերը, այլ խաղի ընդհանուր տրամաբանությունը: Իսկ **հաջորդական խաղերը**, ի տարբերություն միաժամանակյա խաղերից, առավել մեծ ճկունություն են տալիս խաղացողներին, քանի որ յուրաքանչյուր խաղացողի հաջորդ քայլը կախված է լինում նախորդ խաղացողի կատարած քայլից: Ուստի այս տարբերակում կողմերի գործողություններն ավելի մեծ չափով են փոխկապված[10]:

Հաջորդական գործողություններով խաղում, ի տարբերություն միաժամանակյա գործողություններով խաղից, առաջին քայլը կատարող խաղացողին հնարավորություն է տրվում ընտրելու իր ռազմավարությունը և ընդ-

---

[8] Տես *Թ. Շելինգ,* Նշ. աշխ., էջ 306:

[9] Տես *P. Siddhartha.* Game theory, Strategies and the convoluted triangle - India, Pakistan, Kashmir, ZBW – Leibniz Information Centre for Economics. Hamburg, 2019 (https://www.econstor.eu/bitstream/10419/195929/1/main%20article.pdf):

[10] Տես *Ա. Դիքսիտ, Ս. Սկիտ, Դ. Ռեյլի,* Նշ. աշխ., էջ 187–188:

հանուր խաղը կառուցելու ըստ դրա, իսկ մյուս խաղացողն առաջնորդվում է արդեն սահմանված խաղային տրամաբանությամբ: Հաջորդական գործողություններով խաղի դեպքում բոլոր կողմերի համար մեծանում է շահավետ արդյունքի հասնելու հավանականությունը:

Խաղի մասնակիցները հաճախ բախվում են հակառակորդի մասին սահմանափակ տեղեկույթ ունենալու խնդրին: Ուստի խաղերի տեսությունում առանձնացվում են նաև ոչ ամբողջական տեղեկույթով և ամբողջական տեղեկույթով խաղերը[11]:

Եթե խաղի մասնակիցը չգիտի, թե իր մրցակիցը նախկինում ինչ գործողություններ է կատարել, չի ուսումնասիրել հակառակորդի կիրառած ռազմավարությունները կամ ուսումնասիրելու դեպքում չգիտի, թե ինչ հավանականությամբ այն կարող է կիրառվել տվյալ խաղում, ապա այդ իրավիճակը կանվանենք **ռազմավարական անորոշություն**: Իսկ եթե տեղեկույթի ոչ ամբողջականությունը պայմանավորված է այլ օբյեկտիվ հանգամանքներով, ապա այն անվանում ենք **արտաքին անորոշություն**: Եթե խաղում չկա ո՛չ ռազմավարական անորոշություն, ո՛չ արտաքին անորոշություն, ապա այն համարվում է **ամբողջական տեղեկույթով խաղ**, հակառակ դեպքում դա **ոչ ամբողջական տեղեկույթով խաղ** է:

Ամբողջական տեղեկույթով խաղերում խաղի մասնակիցները դիտարկում են մրցակիցների բոլոր նախորդ քայլերը, կիրառած ռազմավարությունները, այս ամենի ճիշտ վերլուծությամբ հստակեցվում են խաղի ընդհանուր տրամաբանությունը, մրցակցի մտադրություններն ու հնարավորությունները, ինչը հնարավորություն է տալիս ընտրելու գործողությունների օպտիմալ ռազմավարություն:

Նույնիսկ տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման արդի պայմաններում երբեմն դժվար է լինում հայթայթել մրցակիցների մասին ամբողջական տեղեկույթ, ուստի խաղային ռազմավարություն ընտրելուց առաջ պետք է լինում գնահատել նաև ոչ ամբողջական տեղեկույթով խաղային տրամաբանության ռիսկերը: Եթե խաղացողներից մեկը տիրապետում է որևէ տեղեկույթի, որն անհայտ է մյուս խաղացողին, ապա այդ դեպքում նա կարող է կիրառել հետևյալ երեք ռազմավարություններից որևէ մեկը. թաքցնել այդ տեղեկույթը, հաղորդել մրցակցին ամբողջությամբ կամ մասամբ, հաղորդել սխալ տեղեկույթ: Վերջին դեպքում խոսքը վերաբերում է ապատեղեկատվությանը, որը մրցակցին կարող է շեղել և մոլորեցնել՝ անմիջականորեն ազդելով նրա ռազմավարության վրա:

Ապատեղեկույթի տարածման և հակառակորդի մոլորեցման ռազմավարությանը մեծ կարևորություն է տվել Ֆ. Նոյմանը: Նա համարում է, որ խաղաթղթերով խաղի ժամանակ կիրառվող մոլորեցման ռազմավարությունը (բլեֆ) կարող է կիրառելի լինել նաև միջազգային հարաբերություններում: Ֆ. Նոյմանն առաջարկում է մոլորեցման երկու տեսակի ռազմավարություն. առաջինը՝ մրցակցին էապես զիջելու դեպքում առավելություն ունեցող խաղացողի

[11] Տես նույն տեղում, էջ 23:

տպավորություն գործելը, և երկրորդը՝ մրցակցի նկատմամբ որոշակի առավելություն ունենալու դեպքում թույլ խաղաթղթեր ունեցողի տպավորություն գործելը[12]: Լինում են դեպքեր, երբ տեղեկույթի վերահսկելի արտահոսքը նպատավոր է, և հակառակորդը, հաշվարկելով առկա հնարավորությունները, ուղղակիորեն խուսափում է ընդհարումից: Օրինակ՝ պետությունը կարող է կանխամտածված կերպով տարածել տեղեկույթ իբր միջուկային մարտագլխիկներ ունենալու մասին, ինչն արդյունավետ ռազմավարական զսպման գործուն մեխանիզմ է: Նպատավոր տեղեկույթի տարածումը կոչվում է ազդանշան[13], որը հաճախ դրսևորվում է զորահանդեսների ժամանակ հզոր սպառազինության և ռազմական տեխնիկայի ցուցադրմամբ:

Ոչ ամբողջական տեղեկույթով խաղերում, խաղացողներից մեկը, իր մրցակցից ստանալով որոշակի տեղեկույթ, ևս ունի հետևյալ երեք ռազմավարություններից որևէ մեկն ընտրելու հնարավորություն. վստահել տեղեկույթի հավաստիությանը, փորձել տարանջատել ճշմարիտ տեղեկույթը կեղծից, անտեսել ստացված տեղեկույթը: Ամենաօպտիմալ տարբերակն է ստացված տեղեկույթի հավաստիության ստուգումը հնարավոր եղանակներով, ինչից հետո կարելի կլինի հասկանալ մրցակցի իրական մտադրությունները:

Խաղերի տեսության վերլուծության մեջ հեղափոխական եղավ **Ջ. Նեշի հավասարակշռման ռազմավարության մոդելը**: Նա առաջարկում էր ոչ համագործակցային խաղերի մի մոդել, ըստ որի՝ յուրաքանչյուր խաղացող պետք է ծանոթ լինի մրցակցի հավասարակշռային ռազմավարությանը: Նեշի հավասարակշռման ռազմավարության մոդելում յուրաքանչյուր խաղացող մյուս խաղացողի քայլերին ի պատասխան ընտրում է իր «լավագույն արձագանքը»[14]: Հաճախ խաղացողները պետք է կատարեն միաժամանակյա գործողություններ, ուստի երբեմն հայտնի չէ, թե մյուս խաղացողն ինչ քայլերի է նախապատրաստվում: Նեշի հավասարակշռման ռազմավարության մոդելի առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր խաղացող պետք է մանրակրկիտ կերպով ուսումնասիրի մյուսի քայլերի տրամաբանությունը:

## Կատալոնիայի ինքնորոշման վերլուծությունը խաղերի տեսության կիրառմամբ

Փորձենք խաղերի տեսությունը կիրառել ինքնորոշումային հակամարտությունները մոդելավորելու համար: Խաղերի տեսության կիրառական նշանակությունն ավելի լավ պատկերացնելու համար ներկայացնենք Իսպանիայի և նրա կազմի մեջ մտնող Կատալոնիայի ինքնավար մարզի միջև գոյություն ունեցող քաղաքական հակասությունները: Խաղը կառուցելու համար անհրաժեշտ է ներկայացնել խաղացողների ցանկը, յուրաքանչյուր խաղացողի առանձին ռազմավարությունը և նրա ակնկալած արդյունքները:

---

[12] Տես *J. V. Neumann, O. Morgenstern.* Theory of Games and Economic Behavior. Princeton, 1953, P. 189:

[13] Տես *J. Banks, J. Sobel.* Equilibrium Selection In Signaling Games. “Econometrica”, May, 1987, Vol. 55, N 3 (https://authors.library.caltech.edu/67310/1/1913604.pdf):

[14] Տես *Ա. Դիկսիտ, Ս. Սկիտ, Դ. Ռեյլի,* Նշ. աշխ., էջ 97:

Կատալոնիան Իսպանիայի համար ունի կարևոր ժողովրդագրական, մշակութային և քաղաքական նշանակություն: Կատալոնիայի բնակչությունը կազմում է Իսպանիայի բնակչության 16,3 %-ը (2019 թ.), իսկ ՀՆԱ-ն՝ պետության ՀՆԱ-ի 19 %-ը, ինչի շնորհիվ նա Իսպանիայի ամենաբարձր կենսամակարդակ ունեցող շրջանն է: Կատալոնիան Իսպանիայի ազգային բյուջե է վճարում մոտ 16 մլրդ եվրոյով ավելի, քան ստանում է այնտեղից, և նրա ՀՆԱ-ն 20 %-ով մեծ է Իսպանիայի ազգային միջին ՀՆԱ-ից (2019 թ.)[15]:

Կատալոնական ինքնորոշման շարժումը ծնունդ է առել դեռ 20-րդ դարի սկզբին: Մինչ գեներալ Ֆրանկոյի իշխանության հաստատումը կատալոնացիներին հաջողվել էր Իսպանիայում ստեղծել կատալոնական ինքնավար մարզ: 1930-ական թվականներին կատալոնացիները մի քանի անգամ ապստամբել են գեներալ Ֆրանկոյի իշխանության դեմ, սակայն Իսպանիայի վարչակարգը զանգվածային բռնությունների գործադրմամբ կարողացել է ևս որոշ ժամանակ Կատալոնիան ամբողջությամբ պահել իր վերահսկողության տակ:

1979 թ. Կատալոնիան հռչակվել է ինքնավար մարզ, ինչն ամրագրվել է «Ինքնավարության կանոնադրություն» կոչվող օրենքով: Իսկ արդեն 2006 թ. կատալոնացիները հանրաքվեով հաստատել են «Կատալոնիայի ինքնավարության նոր կանոնադրությունը», որով նախատեսվում էին մի շարք արտոնություններ, այդ թվում՝ ֆինանսական ինքնուրույնության ընդլայնում[16]:

2012 թվականից կենտրոնի հետ քաղաքական հարաբերություններն սկսել են ավելի ու ավելի լարվել, հատկապես, երբ Իսպանիայի վարչապետը Կատալոնիայի իշխանությունների հետ տևական բանակցություններից հետո հայտարարել է, որ Իսպանիայի կառավարությունը չի ցանկանում Կատալոնիայի հետ կնքել նոր հարկաբյուջետային համաձայնագիր: Այդ փաստը Կատալոնիայում առաջացրել է դժգոհություններ, և 2012 թ. սեպտեմբերի 11-ին Բարսելոնայում անցկացվել է Կատալոնիայի պատմության ամենազանգվածային ցույցերից մեկը՝ ավելի քան 1,5 մլն մասնակիցներով, որոնք ընտրել են «Կատալոնիա, նոր պետություն Եվրոպայում» կարգախոսը: Այդ իրադարձություններից հետո Կատալոնիան վերանայել է իր մոտեցումները, և եթե նախկինում նա պահանջել է միայն հարկաբյուջետային քաղաքականության վերանայում, ապա բանակցությունների ձախողումից հետո սկսել է հանդես գալ անջատողական դիրքերից[17]:

2017 թ. հոկտեմբերի 1-ին Կատալոնիայում անցկացվել է անկախության հանրաքվե, որին մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող քաղաքացինե-

[15] Տես “The independence conflict in Catalonia”. Madrid, 2019, P. 13 (http://www.realinstitutoelcano.org/wps/wcm/connect/d8496562-e096-44a1-81da-b871c91ccf62/ Catalonia-dossier-elcano-october-2019.pdf?MOD=AJPERES&CACHEID=d8496562-e096-44a1-81da-b871c91ccf62):

[16] Տես “Statute of Autonomy of Catalonia – Consolidated text”. Parliament de Catalunya, 19.07.2006 (https://www.parlament.cat/document/cataleg/150259.pdf):

[17] Տես “Autonomy and Self-determination: Between Legal Assertions and Utopian Aspirations”. Ed. by P. Hilpold. Cheltenham, 2018, P. 263:

րի 42 %-ը, և նրանց 90 %-ը կողմ է քվեարկել անկախությանը[18]: Իսպանիայի սահմանադրական դատարանի վճռով մինչ այդ հանրաքվե անցկացնելու մասին տեղական իշխանությունների որոշումը հայտարարվել էր չեղյալ, և Իսպանիայի կառավարությունը փորձում էր ուժի կիրառմամբ խոչընդոտել ընտրատեղամասերի աշխատանքներին:

Կատալոնական ինքնորոշման շարժման հիմնական պատճառն այն է, որ Իսպանիան տնտեսապես շահագործում է Կատալոնիային: Կատալոնական անկախացման շարժման կողմնակիցները բազմիցս հնչեցրել են «Իսպանիան կողոպտում է մեզ» կարգախոսը[19], որը մեկ անգամ ևս փաստում է, որ կատալոնական անկախացման շարժման կողմնակիցների հիմնական նպատակն է, որ կենտրոնական իշխանությունը վերանայի իր հարկաբյուջետային քաղաքականությունը: 2017 թ. հանրաքվեից հետո Կատալոնիայում տեղի ունեցող ցույցերի ընթացքում Իսպանիան ուժ կիրառեց, և կողմերի միջև տեղի ունեցան բախումներ: Հանրաքվեն նոր իրավիճակ ստեղծեց ոչ միայն Իսպանիայում, այլև ամբողջ ԵՄ-ի տարածքում:

Մենք կփորձենք խաղերի տեսության միջոցով վերլուծել և մոդելավորել ստեղծված իրավիճակը, որոշարկել դերակատարների ռազմավարությունները, ինչպես նաև կանխատեսումների հիման վրա առաջարկել հնարավոր զարգացումների սցենարներ: Մոդելավորելու համար կօգտվենք հասարակական հարցումների արդյունքներից, գիտական վերլուծություններից, հրապարակումներից և այլ աղբյուրներից:

Ըստ Կատալոնական հասարակական կարծիքի ուսումնասիրությունների գլխավոր կենտրոնի կատարած հարցումների՝ 2008–2019 թթ. Կատալոնիայում մոտ 20 %-ով ավելացել է բնակվող և ընտրելու իրավունք ունեցող այն քաղաքացիների թիվը, որոնք կողմնակից են Կատալոնիայի անջատմանը: Մասնավորապես՝ 2019 թ. արված հարցման տվյալներով՝ հարցվածների 61,8 %-ը կարծում է, որ Կատալոնիան հասել է ինքնավարության անբավարար մակարդակի, իսկ 21,3 %-ը համարում է, որ ինքնավարության բավարար մակարդակի[20]: Այսինքն՝ այս հարցումը ցույց է տալիս, որ 2017 թ. հանրաքվեից հետո կատալոնացիները չեն համարում, թե հարցն արդեն լուծված է, և, հետևաբար, Կատալոնիան հետագայում իր քաղաքականությունը չի կառուցի անցկացված հանրաքվեի հիմքի վրա, այլ կփորձի այլ ելքեր գտնել:

---

[18] Տես “The independence conflict in Catalonia”, P 25 (http://www.realinstitutoelcano.org/wps/wcm/connect/d8496562-e096-44a1-81da-b871c91ccf62/Catalonia-dossier-elcano-october-2019.pdf?MOD=AJPERES&CACHEID=d8496562-e096-44a1-81da-b871c91ccf62):

[19] Տես “How does the rest of Spain feel about Catalan independence demands?". “The Local”, 15 December 2017 (https://www.thelocal.es/20171215/how-does-the-rest-of-spain-feel-about-catalan-independence-demands); “‘Spain steals from us!’ The ‘populist drift’ of Catalan regionalism”. “Springer Link”, 15 October 2018 (https://link.springer.com/article/10.1057/s41295-018-0140-3):

[20] Տես “Barómetro de Opinión Política. 3ª ola 2019”. Generalitat de Catalunya, P. 8 (http://upceo.ceo.gencat.cat/wsceop/7408/Resumen%20en%20Espa%C3%B1ol%20-954.pdf):

Հարցվածների 6 %-ը կարծում է, որ Կատալոնիան պետք է լինի Իսպանիայի մարզ, 21,7 %-ը՝ Իսպանիայի հետ կազմի հավասար լիազորություններով դաշնային հանրապետություն, 28 %-ը՝ ինքնավար մարզ՝ Իսպանիայի կազմում, 36,7 %-ը՝ Իսպանիայից անկախ պետություն: Իսկ «Դուք ցանկանու՞մ եք, որ Կատալոնիան դառնա անկախ պետություն» կոնկրետ հարցին հարցվածների 43,7 %-ը պատասխանել է՝ այո, իսկ 47,9 %-ը՝ ոչ[21]:

Հարցումներից պարզ է դառնում, որ Կատալոնիայի բնակչության մեծ մասի հիմնական պահանջը ոչ թե լիակատար անկախությունն է, այլ հարկաբյուջետային քաղաքականության վերանայումը: Սակայն չի բացառվում, որ եթե Իսպանիան չմեղմի իր հարկաբյուջետային քաղաքականությունը, ապա Կատալոնիայում անկախ պետականություն ունենալու կողմնակիցների թիվը կշարունակի աճել, ինչպես դա եղավ վերջին տասնամյակում:

Խաղի մասնակիցների շահերին կարող են բնորոշ լինել որոշակի ընդհանրություններ, բայց քանի որ նրանք չեն համագործակցում, ուստի համատեղ նախընտրելի արդյունքների հասնելը դառնում է քիչ հավանական: Ի տարբերություն համագործակցային խաղերից, ոչ համագործակցային խաղերի դեպքում կա ավելի մեծ վտանգ, որ կողմերը կկրեն անդառնալի վնասներ: Կատալոնիայում անցկացված հանրաքվեն, դրան հաջորդած բողոքի ցույցերը և մետրոպոլիայի բռնի գործողություններն ապացույցն են այն բանի, որ կողմերի միջև համագործակցություն չլինելը հանգեցնում է բացասական հետևանքների:

Կողմերի շահերը և փոխազդեցության մեխանիզմները հնարավորինս ճշգրիտ մաթեմատիկորեն արտահայտելու համար խաղարկենք Իսպանիայի կենտրոնական և Կատալոնիայի տեղական իշխանությունների միջև քննարկվող հարկաբյուջետային քաղաքականության փոփոխմամբ պայմանավորված իրադրությունը՝ 2012 թ. տեղի ունեցած բանակցությունների արդյունքների և դրանց հաջորդած կատալոնական ինքնորոշման ձգտումների ակտիվացման հաշվառմամբ:

Կատալոնիայի և Իսպանիայի ակնկալած արդյունքները նորմավորելու դեպքում, կարող ենք նշել, որ եթե Իսպանիայի կենտրոնական իշխանությունը պատեհաժամորեն մեղմեր հարկաբյուջետային քաղաքականությունը, ապա Կատալոնիայի ինքնավար մարզը չէր դիմի ծայրահեղ քայլերի՝ անցկացնելով չհամաձայնեցված հանրաքվե, իսկ Իսպանիան էլ ստիպված չէր լինի ուժ կիրառել: Որպես արդյունք՝ երկու կողմերն էլ վնասներ չէին կրի, և կատալոնական ճգնաժամը չէր խորանա:

Նախ, մոդելավորումը կատարենք միաժամանակյա գործողություններով խաղի պայմաններում: *Նկ. 1*-ում պատկերված է միաժամանակյա գործողությունների մատրիցը: Ընդսմին «E»-ով նշանակենք հարկաբյուջետային քաղաքականությունը փոփոխելուց Իսպանիայի հրաժարման հետևանքով Կատալոնիայի ինքնորոշման ձգտումների ակտիվացումը կանխելու հավանականության արժեքը, «A»-ով՝ հարկային քաղաքականությունը փոփոխե-

[21] Տես նույն տեղում, էջ 9–11:

լուց Իսպանիայի հրաժարման հետևանքով Կատալոնիայի ինքնորոշման ձգտումների ակտիվացման ազդեցության արժեքը:

Ըստ տվյալ խաղային մոդելի՝ «E>0», «A>0»: Ընդսմին այս դեպքում նշագրենք «–A», իսկ Կատալոնիայի ինքնորոշման ձգտումների ակտիվացումը կանխելու հավանականության արժեքը՝ «–E»:

Եթե Իսպանիայի գլխավոր առաջնահերթությունը առանց հարկային քաղաքականությունը փոփոխելու Կատալոնիան իր կազմում պահելն է, ապա՝ «A>E»: Իսպանիայի համար ամենաբացասական արդյունքը համարվում է Կատալոնիայի անջատումը, որին Իսպանիան ի վիճակի չի լինի խոչընդոտելու՝ «-C» արդյունքով, որից էլ կարող է հետևել՝ «C>A»:

| Կատալոնիա / Իսպանիա | Ստատուս-քվոյի պահպանում | Անջատում |
|---|---|---|
| Չի խոչընդոտում | 0<br>0 | 8 (D)<br>-10 (-C) |
| Խոչընդոտում է | 0<br>-4 (-E) | -6 (B)<br>-6 (A) |

Նկ. 1. Միաժամանակյա գործողությունների մատրից

Իսպանիայի չխոչընդոտելու պարագայում Կատալոնիայի ինքնորոշման դրսևորման ակնկալվող արդյունքը նշանակենք «D»-ով, իսկ Իսպանիայի խոչընդոտելու պարագայում՝ «-B»-ով, որտեղ «D>B>0»:

Ըստ այդ տրամաբանության՝ *նկ. 1-ում* կառուցենք խաղը և կատարենք նշանակումներ՝ 0-ից 10-ը սանդղակով, և ըստ դրա կազմենք տվյալ խաղի հավասարակշռության ռազմավարությունը:

$\beta$-ով նշանակենք Իսպանիայի հարկաբյուջետային քաղաքականությունը վերանայելու մասին առաջարկությունը մերժելու հավանականությունը, իսկ $t$-ով՝ Կատալոնիայի ինքնորոշման ձգտումների հայտարարմամբ հանրաքվեին նախապատրաստվելու հավանականությունը: Ըստ այդմ, նրանց հավասարակշռության ռազմավարությունները՝ $\beta^*$ և $t^*$, ինչպես նաև նրանց ակնկալած արդյունքները՝ $H^*_{Իս}$ և $H^*_{Կ}$, որոշվում են հետևյալ բանաձևերով՝ $\beta^*=b/(b+d)$, $t^*=e/(e+c-a)$, $H^*_{Իս}=(-e*c)/(e+c-a)$, $H^*_{Կ}=0$[22]: Տվյալ պարագայում բանաձևերն ստանում են հետևյալ տեսքը.

$\beta^*=6/(6+8)=3/7$, $t^*=4/(4+10–6)=1/2$, $H^*_{Իս}=(–4*10)/(4+10–6)=–5$, $H^*_{Կ}=0$[23]:

Իր հարկաբյուջետային քաղաքականությունը վերանայելուց Իսպանիայի հրաժարումից հետո Կատալոնիայի ինքնորոշման ձգտումների ակտիվացումը պայմանավորված էր այն բանով, որ ստատուս-քվոյի պահպանումը նրան ոչինչ չէր տալիս, իսկ անջատման պարագայում նրա ակնկալած արդյունքը մեծ էր զրոյից: Ուստի Իսպանիայի մերժումից հետո կատալոնական

[22] Տես *V. Kremenyuk*. International Negotiation: Analysis, Approaches, Issues. San Francisco, 2002, P. 211:

[23] Բանաձևերի դուրսբերումը առավել հանգամանորեն տես նույն տեղում:

կողմի համակերպումը և ստատուս-քվոյի պահպանումը չեն կարող Կատալոնիայի համար համարվել հավասարակշռության ռազմավարություն:

*Նկ. 2*-ում պատկերված է կատալոնական ինքնորոշումային խաղի մոդելավորման ընդարձակ տարբերակը, որի դեպքում մրցակիցների նախորդ քայլերի վերաբերյալ ունեցած տեղեկույթի վերլուծությամբ խաղացողները կատարում են հաջորդ քայլերը:




Նկ. 2. Մոդելավորման ընդարձակ տաբերակը

Խաղային ծառի ամենավերին հատվածում Իսպանիան որոշում է, թե ինչ հավանական «$\beta$»-ի դեպքում նա կարող է մերժել հարկաբյուջետային քաղաքականությունը վերանայելու Կատալոնիայի պահանջը և իր որոշումը հայտնում է Կատալոնիային: Վերջինս, հաշվի առնելով «$\beta$»-ի հնարավոր արժեքը, որոշում է կա՛մ դիմել անջատման, կա՛մ համակերպվել առկա իրողությունների հետ: *Նկ. 2*-ում պատկերված հանգույցների վերջնամասում ներկայացված են խաղացողների ակնկալած արդյունքները, որոնք կարող են փոփոխվել՝ ըստ խաղային քայլերի: Տվյալ խաղային ռազմավարությունում Կատալոնիան հանդես է գալիս որպես երկրորդ խաղացող, և նրա քայլը կախված է առաջին խաղացողի՝ Իսպանիայի որոշումից, ուստի այն կարելի է անվանել ամբողջական տեղեկույթով խաղ:

Կատալոնական հակամարտությունը փորձենք ներկայացնել նաև հետադարձ մակածության (ինդուկցիայի) խաղային վերլուծության տրամաբանությամբ, որն ըստ էության, խաղային մոդելավորման ընդարձակ տարբերակում հնարավորություն է տալիս յուրաքանչյուր ենթախաղի համար որոշելու խաղացողների ակնկալած արդյունքները[24]: Այդ նպատակով պարզեցնենք մոդելավորման ընդարձակ տարբերակը յուրաքանչյուր ենթախաղում կողմերի ակնկալած արդյունքների արժեքների կոնկրետ նշմամբ (*Նկ. 3*):

Կանխատեսելով, որ մետրոպոլիան մերժելու է իր առաջարկությունը, այսինքն՝ «$\beta$»-ն 0-ից 1 միջակայքում լինելու է 1, Կատալոնիան կարող է՝

- համակերպվել, եթե $0 \geq -b+(b+d)*\beta$,
- դիմել անջատման, եթե $0 < -b+(b+d)*\beta$[25]:

[24] Տես նույն տեղում, էջ 213:

[25] Բանաձևերի դուրսբերումը առավել հանգամանորեն տես նույն տեղում:




$-a*(1-\beta)-c*\beta$ — $-e*(1-\beta)$

$-6*0-10*1=-10$ Իսպանիա — $-4*(1-1)=0$ Իսպանիա

$-a*(1-\beta)+d*\beta$ — $0$ Կատալոնիա

$-6*0+8*1=8$ Կատալոնիա

Նկ. 3. Մոդելավորման ընդարձակ տաբերակ յուրաքանչյուր ենթախաղում կողմերի ակնկալած արդյունքների արժեքների կոնկրետ նշմամբ

Ըստ այդմ՝ $0<-6+(6+8)*1$, $8>0$, այսինքն՝ ըստ խաղային տրամաբանության՝ Կատալոնիան դիմում է ինքնորոշման:

Կատալոնիան ինքնորոշումային քայլերի է դիմում նաև ըստ Իսպանիայի հավասարակշռության ռազմավարության.

- համակերպվել, եթե $\beta\leq\beta^*$,
- դիմել անջատման, եթե $\beta>\beta^*$, $1>3/7$:

Հավասարակշռության ռազմավարությամբ խաղը ցույց է տալիս, որ կատալոնական ինքնորոշումային գործընթացներում կարող են գոյություն ունենալ երկու հնարավոր սցենարներ: Ըստ վերը շարադրվածի՝ առաջինը՝ արդեն կայացած հանրաքվեի արդյունքների հիման վրա Կատալոնիան միակողմանի կերպով կհռչակի իր անկախությունը, և երկրորդը՝ Կատալոնիան հանդես կգա հարկաբյուջետային փոփոխությունների նոր առաջարկությամբ, և նորից կողմերի միջև կվերսկսվեն բանակցությունները: Վերլուծելով այս երկու սցենարները՝ կարծում ենք, որ առավել հավանական է Կատալոնիայի տեղական իշխանությունների նախաձեռնությամբ Կատալոնիայի ինքնավար մարզի և Իսպանիայի կառավարության միջև բանակցությունների վերսկսումը, քանի որ 2017 թ. չհամաձայնեցված հանրաքվեով խնդիրը չկարգավորվեց, և Կատալոնիայի՝ հանրաքվեի անցկացման քաղաքական շանտաժը որևէ արդյունք չտվեց:

Խաղը կարելի է դիտարկել նաև ԵՄ-ին Կատալոնիայի անդամակցության հավանականության տեսանկյունից: Այս դեպքում ամբողջությամբ կփոխվի խաղի հավասարակշռությունը. Կատալոնիայի ինքնորոշումային գործընթացների արդյունքը հիմնականում կախված կլինի այն բանից, թե, արդյոք, ԵՄ-ը Կատալոնիան կդիտի որպես իր առանձին անդամի: Եթե Կատալոնիան հայտարարի իր այդ պատրաստակամության մասին, և ԵՄ-ը մերժի, ապա նոր անկախության հանրաքվե անցկացնելու հավանականությունը կլինի փոքր:

## ПОЛИТОЛОГИЯ

# СМЕЩЕНИЕ «ЦЕНТРА ТЯЖЕСТИ» МИРОВОЙ ПОЛИТИКИ С ЗАПАДА НА ВОСТОК: ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ОЦЕНКИ В РАКУРСЕ БЕЗОПАСНОСТНЫХ ИНТЕРЕСОВ РА

*Д. М. МАНАСЯН, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований НИУО МО РА*

РЕЗЮМЕ

После развала СССР и ОВД мир претерпевает глубокие изменения, в частности происходит трансформация однополярного миропорядка в полицентричный. Это объясняется относительным ослаблением компаративной мощи США и, как следствие, формированием новых экономических, политических и военных центров (Китай, Индия, Япония, Россия, Бразилия, исламский мир и т. д.). При этом «центр тяжести» мировой политики смещается на восток, главным образом – в Азиатско-Тихоокеанский регион.

Важным показателем данного процесса считаются лидерские амбиции Китая, зиждущиеся на его экономической, технологической, военно-политической и цивилизационной мощи.

Формирование полицентричного миропорядка приводит к возрастанию возможностей маневрирования для региональных центров силы, их самостоятельности при принятии решений, их региональной роли и амбиций.

Данные процессы оказывают существенное влияние на безопасностную среду на Ближнем Востоке и Южном Кавказе, где борьба между региональными гегемонами, пытающимися в отсутствие единоличного мирового лидера заполнить создавшийся геополитический вакуум, в ближайшие годы, вероятно, обострится.

Свидетельством тому геополитическая стратегия Турции и ее претенциозное поведение в регионе. Война, развязанная тандемом Турция-Азербайджан против Республики Арцах 27 сентября 2020 г., наглядно продемонстрировала долгосрочные цели Турции по наращиванию своей роли на Южном Кавказе. Анкара полагает, что одним из способов достижения этой цели является «сиризация» Карабахского конфликта, что может обеспечить Турции рычаги как военного, так и политического воздействия. В свете этих устремлений Турции следует рассматривать привлечение протурецких наемников на Карабахской платформе, так и попытки Анкары включиться в Карабахский переговорный процесс и адаптировать Астанинский процесс урегулирования сирийского конфликта к условиям Южного Кавказа путем подрыва формата Минской группы ОБСЕ.

## ТЕОРИЯ ИГР КАК МЕТОД АНАЛИЗА САМООПРЕДЕЛИТЕЛЬНЫХ КОНФЛИКТОВ (НА ПРИМЕРЕ КАТАЛОНИИ)

*М. М. МАРГАРЯН, доктор политических наук, профессор, заведующая кафедрой политического управления и публичной политики Академии государственного управления РА, Р. Г. АВЕТИСЯН, аспирант кафедры политического управления и публичной политики Академии государственного управления РА, старший ученый-аналитик НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Применение современных информационно-коммуникационных технологий (ИКТ) позволяет существенно повысить качество и достоверность анализа и оценки политических процессов, в условиях глобализации и глокализации, характеризуемых высокой степенью турбулентности и неопределенности. Одной из наиболее перспективных методологий использования ИКТ в этих целях является их применение на основе теории игр. Различные формы оценочных игр при правильном их выборе для каждого конкретного случая позволяют повысить достоверность прогнозов развития международных отношений, в том числе конфликтов, эффективность выработки оптимальных управленческих решений и т. д.

В статье рассматривается пример использования теории игр в отношении самоопределительного Каталонского конфликта в Испании.

**POLITICAL SCIENCE**

## THE SHIFT IN THE GRAVITY CENTER OF WORLD POLITICS FROM WEST TO EAST: GEOPOLITICAL ASSESSMENTS IN THE PERSPECTIVE OF THE RA SECURITY INTERESTS

*D. M. MANASYAN, PhD in History, Head, Center for Regional Strategic Studies, NDRU, MOD, RA*

SUMMARY

After the collapse of the USSR and the WTO, there have been major changes undergoing all over the world, namely, the unipolar world order is being transformed into a polycentric one. This is due to the relative weakening of the comparative power of the United States and, as a consequence, the formation of new economic, political and military centers (China, India, Japan, Russia, Brazil, the Islamic world, etc.). Meanwhile, the “center of gravity” of world politics is shifting to the east, mainly to the Asia-Pacific region.

China's leadership ambitions based on its economic, technological,

military-political and civilizational power are considered an important indicator of this process.

The formation of a polycentric world order leads to an increase in the possibilities of maneuvering for regional power centers, their independence in decision-making, their regional role and ambitions.

The given processes do have significant influence on the security environment in the Near East and South Caucasus, where the fight among regional hegemons, striving to fill the geopolitical vacuum in the absence of a sole world leader, perhaps is going to get tougher in the coming years.

An evidence of this is Turkey's geopolitical strategy and its pretentious behavior in the region. The war, unleashed by the Turkish-Azerbaijani tandem against the Republic of Artsakh on September 27, 2020, obviously exposed Turkey's long-term goals to expand its role in the South Caucasus. Ankara believes that one of the ways to achieve this goal is to “syrify” the Karabakh conflict, which can provide Turkey with both military and political leverages for influence. Getting the pro-Turkish mercenaries involved in the Karabakh platform, as well as Ankara's attempts to get involved in the Karabakh negotiation process, and adapt the Astana process meant to resolve the Syrian conflict to the conditions of the South Caucasus by way of undermining the OSCE Minsk Group format, should be considered in the light of these aspirations by Turkey.

## THE GAME THEORY AS A METHOD OF ANALYSIS OF SELF-DETERMINATION CONFLICTS (THE CASE OF CATALONIA)

*M. M. MARGARYAN, Doctor of Political Science, Professor, Head, Chair of Political Governance and Public Policy, Public Administration Academy, RA,*
*R. G. AVETISYAN, Graduate Student, Chair of Political Governance and Public Policy, Public Administration Academy, RA, Senior Research Fellow, NDRU, MOD, RA*

SUMMARY

Implementation of modern information and communications technology (ICT) allows to significantly level up the quality and credibility of the analysis and evaluation of political processes marked by a high degree of turbulence and uncertainty in terms of globalization and glocalization. One of the most advanced methodologies of using the ICT for these purposes is its application on the basis of the game theory. Various types of game-based assessment, if accurately chosen for each specific case, permit to enhance the reliability of the international relations development forecast, including the conflicts, as well as the efficiency of the elaboration of optimal management decisions, etc.

The paper describes an example of the use of the game theory in relation to the Catalan self-determination conflict in Spain.

# ՈՐՈՇ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊԲՀ-ի ռազմաբժշկական կրթագիտական կենտրոնի տնօրեն, Ա. Ս. ՔՈՉԱՐՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ-ի ՌԲՖ-ի ռազմադաշտային թերապիայի ամբիոնի դասախոս, Հ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, ԵՊԲՀ-ի արտակարգ իրավիճակների բժշկության ամբիոնի դասախոս, Ա. Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆ, ԵՊԲՀ-ի արտակարգ իրավիճակների բժշկության ամբիոնի դասախոս, Ս. Լ. ԶՈՐՅԱՆ, ԵՊԲՀ-ի ՌԲՖ-ի ռազմադաշտային թերապիայի ամբիոնի դասախոս*

Ներկայումս կորոնավիրուսային վարակին վերաբերող ուսումնասիրությունները բազմակողմանի են, ընդգրկում են հիվանդության պատճառագիտությունը (էտիոլոգիա),ախտածագումը, կլինիկան, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը:

Հաշվի առնելով դրա հույժ կարևորությունը և տվյալների ծավալները՝ մենք կփորձենք այստեղ ներկայացնել հիվանդության առաջացման պատմությունը, պատճառագիտությունը և ախտածագումը:

Հարկ է նշել, որ նոր կորոնավիրուսային վարակը (*COVID-19*, անգլ.՝ *COronaVIrus Disease* 2019) սուր շնչառական վարակ է:

2019 թ. դեկտեմբերի 19-ին Չինաստանի Հեբոյ նահանգի Ուհան քաղաքում տեղի շուկայի կենդանիների և ծովամթերքի հետ կապ ունեցող բնակիչների շրջանում հայտնաբերվել են թոքաբորբի դեպքեր: Չինացի գիտնականները թոքաբորբով հիվանդների թոքերից վերցված նմուշներում առանձնացրել են վիրուս, հաստատել են դրա գենոմի հաջորդականությունը, արձանագրել, որ այն ավելի քան 70 %-ով նման է սուր շնչառական համախտանիշ առաջացնող (հայտնի նաև ատիպիկ թոքաբորբ անվանմամբ) *SARS-CoV* վիրուսին: Ըստ այդմ էլ այն անվանվել է *SARS-CoV-2:*

2019 թ. դեկտեմբերի 31-ին Չինաստանի իշխանություններն զգուշացրել են ԱՀԿ-ին, որ արձանագրվել է անհայտ թոքաբորբի բռնկում: 2020 թ. հունվարի 22-ին Ուհանում մտցվել է կարանտին, հունվարի 24-ին այն տարածվել է նաև Ուհանի շրջակա բնակավայրերի վրա:

ԱՀԿ-ն նոր կորոնավիրուսով պայմանավորված բռնկումը 2020 թ.-ի հունվարի 30-ին հայտարարել է հանրային առողջապահության տեսակետից միջազգային նշանակություն ունեցող արտակարգ իրավիճակ: Իսկ 2020 թ. փետրվարի 19-ին ԱՀԿ-ն այս հիվանդությունն անվանել է *COVID-19:* 2020 թ. մարտի 11-ին ԱՀԿ-ը որոշում է ընդունել, որ բռնկումը համավարակային (պանդեմիկ) բնույթի է, իսկ մարտի 13-ին հայտարարել է, որ պանդեմիայի կենտրոնը Եվրոպան է:

**Պատճառագիտություն**

Կորոնավիրուսները դասվում են *Coronaviridae* (լատ. *corona* – թագ) ընտանիքի *Coronavirus* ցեղին, որն ընդգրկում է մարդու, կենդանիների և թռչունների առավելապես շնչառական, ինչպես նաև աղեստամոքսային համակարգերն ախտահարող շուրջ 40 տեսակի վիրուսների: Համաձայն Բալթիմորյան դասակարգման՝ կորոնավիրուսները 4-րդ խմբում են: Մարդու կորոնավիրուսը հայտնաբերել են Դ. Թիռելը և Մ. Բինոն 1965 թ.՝ այն առանձնացնելով սուր շնչառական հիվանդություններով անձանցից:

Կորոնավիրուսները մշտապես շրջանառում են մարդկային պոպուլյացիաներում՝ հարուցելով հիմնականում թեթև ընթացքով շնչառական հիվանդություններ, աղիքաբորբ (էնտերիտ), աղեստամոքսային բորբոքում (գաստրոէնտերիտ): Մարդու ախտաբանությունում դրանց դերը հատկապես կարևորվել է 21-րդ դարի սկզբին. 2002 թ. ծանր սուր շնչառական համախտանիշի (անգլ.՝ *SARS*), այնուհետև՝ 2012 թ., մերձավորարևելյան շնչառական համախտանիշի (անգլ.՝ *MERS)* դեպքերի արձանագրման ու համաճարակային տարածման հետևանքով:

Վիրուսային մասնիկներն ունեն բարդ կառուցվածք, չափերը տատանվում են բավական լայն սահմաններում՝ 80-220 նմ, բազմաձև են, առավել հաճախ հանդիպում են կլոր ձևերը: Նուկլեոկապսիդը տարածական համաչափության պարուրաձև տիպի է: Այն շրջափակված է լիպոպրոտեինային թաղանթով՝ գերկապսիդով, որի մեջ ընկղմված գուրզանման վիրուսասպեցիֆիկ գլիկոպրոտեինները պայմանավորում են վիրիոնի՝ արեգակի լուսապսակ հիշեցնող թագանման տեսքը:

Գենոմը ներկայացված է միաթել դրական (+) շղթա ՌՆԹ-ով՝ զուգորդված անտիգենային (հակածին) հատկությամբ օժտված նուկլեոկապսիդային *N* սպիտակուցի հետ, ինչը պայմանավորում է կորոնավիրուսների ցեղային առանձնահատկությունը և հայտնաբերվում է կոմպլեմենտի կապման ռեակցիայով: Գերկապսիդը ձևավորված է բջջային ծագմամբ երկշերտ լիպոպրոտեինային թաղանթով, որի վրա տեղակայված են անդրթաղանթային (տրանսմեմբրանային) *E1* և մակերեսային *E2* գլիկոպրոտեինները: Վերջիններս օժտված են անտիգենությամբ, պայմանավորում են կորոնավիրուսի տիպային յուրահատկությունը և հայտնաբերվում են վիրուսի չեզոքացման ռեակցիայով:

*E2* գլիկոպրոտեինները պատասխանատու են վիրիոնի մակակլանման (ադսորբցում) համար: Վերարտադրության ընթացքում թիրախ բջջի մակերևույթին դրանց դրսևորումը նպաստում է ախտահարված բջիջների միաձուլմանը, սինցիտիումների առաջացմանը և խթանում է մակրոօրգանիզմում ցիտոտոքսիկ ավշաբջիջների (լիմֆոցիտների) ակտիվացմանն ու բազմացմանը (պրոլիֆերացում):

Կորոնավիրուսների վերարտադրությունը վիրուսասպեցիֆիկ նուկլեինաթթուների և սպիտակուցների համադրում է, նուկլեոկապսիդի, հասուն վիրիոնի ձևավորում, կատարվում է ախտահարված բջջի ցիտոպլազմայում:

*E1* և *E2* գլիկոպրոտեիդները տեղաշարժվում են դեպի էնդոպլազմային ցանց, Գոլջիի ապարատ, ձևափոխում են դրանց թաղանթները, որտեղից նուկլեոկապսիդը, բողբոջելով, պատվում է գերկապսիդով և սողոսկման մեխանիզմով դուրս գալիս ախտահարված բջջից:

*SARS-CoV-2-ը* ՌՆԹ պարունակող վիրուս է, պատկանում է *Coronaviridae* ընտանիքին, բետակորոնավիրուսային ցեղին, *2b* խմբին: Ենթադրվում է, որ *SARS-CoV-2*-ը չղջիկի կորոնավիրուսի և այլ՝ դեռևս անհայտ, վիրուսի վերահամակցման արդյունք է: Կա կարծիք, որ վիրուսն ունի երկու շտամ՝ *L* և *S*, ընդ որում, որոշ տվյալներով *L* շտամը, որը վիրուսի սկզբնական տարբերակն է և հայտնաբերվել է Ուհանում, ավելի ագրեսիվ է և ավելի հազվագյուտ է հանդիպում: Սա թաղանթ ունեցող վիրուս է՝ 100-160 նմ չափերով: Թաղանթն ունի դեպի դուրս ուղղված ելուստներ, որոնք եռաչափ են և պարունակում են S-ացիլման հեմագգլյուտինին էսթերազ *(S Hemagglutinin esterase, HEs)* գլիկոպրոտեին և M սպիտակուց: Ներսում գտնվում է պարուրաձև նուկլեոկապսիդը՝ կազմված *N* սպիտակուցով շրջապատված վիրուսի գենոմից: Գենոմը մեկթելանի «+շղթա» ՌՆԹ մոլեկուլ է:

### Ազդեցության մեխանիզմը և ախտաֆիզիոլոգիան

*SARS-CoV-2*-ը բջջի ներս թափանցելու համար օգտագործում է իր մակերևույթին գտնվող Սպայկ-Պրոտեինը (ելուստավոր պրոտեին *Spike Protein*, կամ *SP)* և երկու ընկալիչ ԱՓՖ2 *(ACE2)* և *CD147:*

ԱՓՖ2-ը անգիոտենզին փոխակերպող ֆերմենտի ընկալիչ է, մեծ քանակությամբ գտնվում է քթանցքի (պատասխանատու է լորձի արտադրման համար), թոքերի ալվեոլային (արտադրում են սուրֆակտանտ, իմունո-մոդուլատորներ ու կարգավորում են էպիթելով իոնների տեղափոխումը) և աղիների, ինչպես նաև զարկերակների ու երակների էնդոթելային բջիջներում:

*CD147*-ը պատկանում է իմունոգլոբուլինների ընտանիքին:

Ենթադրվում է, որ *SARS-CoV-2*-ը, պաշարելով ԱՓՖ2-ին, կարող է առաջացնել անգիոտենզին-2-ի և բրադիկինինի քանակի ավելացում:

Այս ֆերմենտը անգիոտենզին-2-ից պոկում է ամինաթթվի մեկ մոլեկուլ և դրանով փոխում նրա հատկությունները. առաջացած մոլեկուլն ունի անոթասեղմիչ հատկություն և կարող է մասնակցել սուր շնչառական դիսթրես համախտանիշի զարգացմանը: Մյուս կողմից՝ ԱՓՖ2-ը մոդուլավորում է բջջի թաղանթով ամինաթթուների տեղափոխումը, որը կատարվում է ամինաթթուների թաղանթային տեղափոխիչի՝ $B^0$*AT1*-ի միջոցով:

Կրիոէլեկտրոնային մանրադիտման (առանձին մոլեկուլների սառեցում և «դիտարկում» էլեկտրոնային մանրադիտակով) կիրառմամբ ստացվել են $B^0$*AT1*-ի առկայությամբ ԱՓՖ2-ի կառուցվածքի տվյալները: Մոլեկուլները գտնվել են երկու վիճակներից մեկում. կա՛մ եղել են կապված *SARS-CoV-2*-ի *S*-սպիտակուցի հետ, կա՛մ առանց կապվածության: Հատուկ ուշադրություն է դարձվել այն հատվածին, որով *S*-սպիտակուցը կապվում է ԱՓՖ2-ին:

Պարզվել է, որ ԱՓՖ2-ն ու *$B^0AT1$*-ն առաջացնում են հետերոդիմեր՝ երկու ոչ միանման մասերով մոլեկուլ: Երկու այդպիսի մոլեկուլները առաջացնում են հոմոդիմեր: Վերջինիս ամբողջականությունն ապահովվում է ԱՓՖ2-ի երկու մոլեկուլի նմանատիպ հատվածների փոխգործությամբ:

SARS-CoV-2-ի ելուստը (*S*-սպիտակուց) բևեռային փոխգործության շնորհիվ կապվում է ԱՓՖ2-ի մոլեկուլի պրոտեազային ակտիվությամբ այն հատվածի հետ (պրոտեազային դոմեն), որն ապահովում է անգիոտենզին-2-ի մոլեկուլից ամինաթթվի մեկ մոլեկուլի պոկումը: Ընդ որում, մեկ ԱՓՖ2-ի հետ կարող է կապված լինել վիրուսային սպիտակուցի տրիմեր (երեք միանման մոլեկուլներից կազմված համալիր), իսկ դիմերի դեպքում, համապատասխանաբար, 2 տրիմեր: Ընդ որում, թեև ԱՓՖ2-ի կառուցվածքը դեռևս լիարժեք կերպով պարզված չէ, սակայն ներկայումս կատարվում են աշխատանքներ, որոնցում հաշվի է առնվում հետևյալ հանգամանքը. ԱՓՖ2-ի մոլեկուլում կարելի է փոխել այն ամինաթթուները, որոնք միանում են *SARS-CoV-2*-ի *S*-սպիտակուցի հետ, որպեսզի նվազեցվի դրանց միանալու, այսինքն՝ բջջին վարակելու, հավանականությունը:

Հաստատված է, որ ԱՓՖ-ն շրջանառում է բջջից դուրս, կատալիզացնում է անգիոտենզին-1-ի դեկապեպտիդի քայքայումը մինչև անգիոտենզին-2-ի օկտապեպտիդի՝ նվազեցնելով զարկերակային ճնշումը, ինչի շնորհիվ կարևոր դեր ունի ռենին-անգիոտենզինային համակարգում: ԱՓՖ2-ի երկրորդ կարևոր գործառույթը բրադիկինի ապակտիվացումն է:

Ներկայումս անգիոտենզին փոխակերպող ֆերմենտը դարձել է սրտանոթային հիվանդություններով, հիպերտոնիայով և շաքարախտով տառապող հիվանդների բուժման համար լայնորեն կիրառվող բազմաթիվ դեղամիջոցների (ԱՓՖ ճնշողներ և անգիոտենզինի ընկալիչների պաշարիչներ) թիրախը:

Այսպիսով՝ ստացվում է, որ ԱՓՖ պաշարիչները նվազեցնում են զարկերակային ճնշումը՝ վիրուսի բազմաքանակ խմբերի գրավման միջոցով մեծացնելով անգիոտենզին փոխակերպող ֆերմենտ-2-ի էքսպրեսիան: Ենթադրվում է, որ վիրուսը, փոխազդելով ԱՓՖ-ի հետ, նրան հյուծում է, ինչի հետևանքով զարգանում են այդ ֆերմենտի պակասուրդի սուր ախտանշաններ, ինչն էլ վարակի ծանր ընթացքի պատճառներից է:

Գրականության մեջ նաև նշվում է, որ չկան ուղղակի ապացույցներ, թե *SARS-CoV-2*-ով վարակվելու պարագայում անհրաժեշտ է հրաժարվել ԱՓՖ պաշարիչների նշանակումից:

Կա և կարծիք, որ *SARS-CoV-2* վիրուսը, ԱՓՖ-ի միջոցով կպչելով բջջին, դրա մեջ է ներքաշում նաև ընկալիչի մոլեկուլ: Զանգվածային ախտահարման պարագայում թաղանթից ԱՓՖ մոլեկուլն անհետանում է, և, որպես արդյունք, ավելանում է բրադիկինինի քանակը, իսկ նա «ստանում է ազատ գործունեության հնարավորություն», կտրուկ բարձրացնում է մանր անոթների թափանցելիությունը, ինչի հետևանքով հեղուկը անոթներից դուրս է գալիս վարակված հատված, և «մազանոթները թրջվում են»:

Կա այն տեսակետը, թե վերը նշված երևույթը համապատասխանում է թոքերի կորոնավիրուսային ախտահարման առաջին փուլին (ինտերստիցիալ պնևմոնիտ), երբ թոքերում դիտվում է հեղուկի կուտակում, որը կլինիկորեն արտահայտվում է հևոցով, իսկ համակարգչային շերտագրությունը տալիս է մի յուրահատուկ պատկեր:

Հարկ է նշել, որ *SARS-CoV-2*-ն ազդում է նաև *TMPRSS2*-ի պրոտեազայի միջոցով, ընդ որում, եթե օրգանիզմում ԱՓՖ-ի դերն ուսումնասիրված է, ապա *TMPRSS2*-ի պրոտեազայի վերաբերյալ տվյալներն աղքատիկ են, հայտնի է միայն, որ նա որոշակի դեր ունի շագանակագեղձի մի շարք տեսակների քաղցկեղի զարգացման գործում: Ընդ որում, եթե ԱՓՖ2-ը կապվում է վիրուսի թաղանթի վրա գտնվող ելուստների հետ, ապա *TMPRSS2* պրոտեազան ակտիվացնում է այդ սպիտակուցները՝ դրանով իսկ ընթացք տալով բջջի մեջ վիրուսի ներթափանցմանը:

Ապացուցված է, որ առկա է ԱՓՖ-ի գենի էքսպրեսիայի համապա-տասխանություն այն գեների էքսպրեսիային, որոնք ակտիվանում են ինտերֆերոնի՝ վարակի նկատմամբ իմունային պատասխան մշակող նյութի միջոցով:

Նման երևույթը ցույց է տալիս, որ *SARS-CoV-2* վիրուսն իր էվոլյուցիոն զարգացման ընթացքում ունակ է դարձել իր կարիքների համար օգտագործելու բջջի պաշտպանական մեխանիզմները, այսինքն, իմունային պատասխանի կողմնակի արդյունքներից մեկը *SARS-CoV-2* վիրուսի պարազայում վարակման «դարպասները բացելն է»:

Ներկայումս հաստատվել է, որ *SARS-CoV-2*-ն ախտահարում է նաև անոթների էնդոթելը: Էնդոթելն ակտիվ պարակրինային, էնդոկրին և աուտոկրին ամենամեծ օրգանն է, որը սփռված է բոլոր հյուսվածքներում: Էնդոթելը արտադրում է արյան մակարդելիության, անոթների տոնուսի և զարկերակային ճնշման կարգավորման, երիկամների զտիչ ֆունկցիայի, սրտամկանի կծկողունակության ակտիվության, գլխուղեղի նյութափոխանակության ապահովման համար անհրաժեշտ նյութեր: Այն վերահսկում է ջրի, իոնների, նյութափոխանակության արգասիքների դիֆուզիան:

Էնդոթելային ծագմամբ նյութերից են՝

- պրոստացիկլինները *(NOᵃ)*, որոնք մշտապես արտադրվում են էնդոթելում և դուրս են գալիս բջիջներից,
- Վիլենբրանդի գործոնը՝ *vWF*-ն, *P*-սելեկտինը, *t-PA*-ն, որոնք կուտակվում են էնդոթելում և դուրս են գալիս նրա գրգռման, ակտիվացման կամ վնասման դեպքերում,
- էնդոթելին-1, *ICAM*-1, *VCAM*-1, *E*-սելեկտին, *PAI-1* նյութերը, որոնց արտադրությունը բնականոն պայմաններում գործնականում տեղի չի ունենում, սակայն դրանց մակարդակը կտրուկ բարձրանում է էնդոթելի ակտիվացման ժամանակ,
- էնդոթելում արտադրվող և կուտակվող նյութերը *(t-PA)* կամ էնդոթելի թաղանթային սպիտակուցները (ընկալիչներ)՝ թրոմբոմոդուլին, C-սպիտակուցի ընկալիչ:

Այն եզրակացությունը, թե *SARS-CoV-2*-ն ունի էնդոթելի վրա ներգործելու, դրան վնասելու և դրանով իսկ բազմաօրգանային ախտահարում առաջացնելու ունակություն, կատարվել է մի շարք դիտարկումների հիման վրա: Դրանց օբյեկտներ են եղել՝ նոր կորոնավիրուսային վարակից մահացած անձը, որն ունեցել է սրտի իշեմիկ հիվանդություն և հիպերտոնիա (հայտնաբերվել են սրտի, բարակ աղիների, թոքերի, երիկամների էնդոթելի հետ զուգորդված բորբոքային բջիջների կուտակումներ), շաքարախտով ու ճարպակալությամբ տառապող հիվանդը (հայտնաբերվել են սրտում, թոքերում, լյարդում ու երիկամներում լիմֆոցիտային էնդոթելիտ, ինչպես նաև լյարդի բջիջների մեռուկացում), հիպերտոնիկ հիվանդությամբ բուժառուն: Էնդոթելային բջիջները լցված են եղել *SARS-CoV-2* վիրուսով, ինչը խանգարել է դրանց բնականոն գործունեությանը, և զարգացել է էնդոթելի ապագործառում (դիսֆունկցիա):

Հաստատված է, որ էնդոթելային ապագործառումը այն գլխավոր որոշիչն է, որը հնարավորություն է տալիս հայտնաբերելու միկրոանոթային ապագործառումը, որը հանգեցնում է օրգանի իշեմիայի, հյուսվածքների բորբոքման և այտուցի զարգացման:

Ձեռնարկվել են մի շարք հետազոտություններ՝ նվիրված *SARS-CoV-2* վիրուսի հնարավոր հակմանը, ինչի համար առողջ դոնորների բազմաթիվ հյուսվածքների ՌՆԹ սեկվենացիայի կատարմամբ: Ուսումնասիրվել է գեների էքսպրեսիան՝ կապված վիրուսի ներթափանցման հետ: Բարձր հակում արձանագրվել է քթի, աչքերի և աղիների էպիթելային բջիջներում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ *SARS-CoV-2* վիրուսի փոխանցումը տեղի է ունենում մեծ արդյունավետությամբ: Կարևորվում է այն հանգամանքը, որ նշված օրգաններում այդ գեները համագործակցում են իմունիտետի ձևավորման նպատակով, ինչով շեշտվում է այդ բջիջների դերը վիրուսային վարակի փոխանցման և տարածման գործում:

Վերջին ժամանակներում կատարված մի շարք հետազոտություններ ցույց են տալիս, որ *SARS-CoV-2* վիրուսի համար, բացի թոքերից, թիրախ օրգաններ են նաև աղիները: Մարդու բարակ աղիների օրգանոիդներում *(hSIO)* համակիզակետ և էլեկտրոնային մանրադիտակով տարբերակված էնտերոցիտներում հայտնաբերվում են մեծ թվով *SARS-CoV-2* վիրուսի մասնիկներ: Նման երևույթը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է այդ բջիջներում ԱՓՖ-ի առկայությամբ: Այն կարծիքն է հայտնվում, որ աղիքային էպիթելը նպաստում է *SARS-CoV-2*-ի կրկնապատկմանը, իսկ *hSIO*-ն ծառայում է որպես կորոնավիրուսային վարակի և կենսաբանության փորձնական մոդել:

Բավական հետաքրքրական արդյունքներ են ստացվել *SARS-CoV-2* վիրուսի ազդեցության հետևանքով կոագուլոպաթիայի զարգացման ուսումնասիրությամբ:

Հայտնի է, որ COVID-19-ով հիվանդների կլինիկական պատկերն սկսվում է շնչառական անբավարարությամբ ու հետագա հարաճունությամբ, ավելի ուշ բազմաօրգանային անբավարարության զարգացմամբ, ընդ որում, հիվան-

դության ելքի տեսակետից ամենաանբարենպաստը կոագուլոպաթիայի զարգացումն է: Վերլուծենք այս դեպքը:

Նշվում է, որ կատարվել են լաբորատոր եղանակով հաստատված *COVID-19*-ից մահացած 52-87 տարեկան 9 տղամարդու և 2 կնոջ դիակների համակարգչային շերտագրում, հյուսվածաբանական-ախտաբանական և վիրուսաբանական հետազոտություններ (50 %-ն ունեցել է սրտի իշեմիկ, 25 %-ը՝ թոքերի քրոնիկական օբստրուկտիվ հիվանդություն): Շատ բարձր է եղել թրոմբոէմբոլիկ բարդությունների հաճախականությունը: Վիրուսի բարձր տիտրը հայտնաբերվել է թոքերում, լյարդում, սրտում, երիկամներում: Այստեղ կարևորվել է այն հանգամանքը, որ *COVID-19*-ի ծանր դեպքերում նկատվում է տարածուն ներանոթային մակարդման համախտանիշ *(ДВС синдром)*, ընդ որում, ախտաբանական կենսընթացը տեղի է ունենում Սանարելի-Շվարցմանի փորձարարական երևույթի զարգացմամբ, այսինքն՝ թրոմբոցիտների թիվը նվազում է և առաջանում է սպառման կոագուլոպաթիա:

Սանարելի-Շվարցմանի երևույթը էնդոտոքսինի նկատմամբ հատուկ բորբոքային ռեակցիա է: Ակտիվացված *CD4T*-բջիջները և լեյկոցիտները արտադրում են բորբոքամետ միացություններ, ներառյալ՝ ուռուցքային մեռուկացման $\alpha$ գործոն *(tumor necrosis factor-$\alpha$)*, ինտերլեյկիններ, ցիտոկիններ և այլն, որոնք հանգեցնում են «ցիտոկինային փոթորկի»: Հետագայում միանում են տարբեր ձևերի բջջային պատասխանները, որոնք գրգռում են հակաբորբոքային և բորբոքածին միացությունների արտադրությունը, ակտիվացնում են պրոմակարդիչներին, գեներին, ընկալիչների կարգավորումը և իմունաճնշումը (իմունասուպրեսիան):

Էնդոտոքսինը գրգռում է էնդոթելային բջիջներով հյուսվածքային գործոնների արտադրությունը և դրանով իսկ հանգեցնում է պրոմակարդիչների արտադրման՝ միևնույն ժամանակ նվազեցնելով ակտիվացված C տիտի հակաթրոմբոտիկ ներգործությունը:

Ինչպես արդեն նշել ենք*, COVID-19*-ի ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս, որ հիվանդության ելքի տեսակետից ամենաանբարենպաստ չափանիշը կոագուլոպաթիայի զարգացումն է: Կարևոր է այն փաստը, որ հոսպիտալացում պահանջող բոլոր հիվանդների արյան շիճուկում միշտ բարձր է լինում *D* դիմերի մակարդակը *(D* դիմերը ֆիբրինոլիզի ընթացքում ֆիբրինի քայքայման արգասիք է, որը կոչվում է դիմեր, քանի որ պարունակում է ֆիբրինածին սպիտակուցի միմյանց միացած երկու *D* հատվածներ):

Արդեն հաստատվել է, որ առավել հաճախ մահվան ելք են ունենում ծեր մարդկանց և զուգակցվող հիվանդություններ ունեցող բուժառուների հիվանդացման դեպքերը:

Կարևոր է այն փաստը, որ ՉԺՀ-ում *COVID-19*-ով 1099 հիվանդներից 46,4 %-ի *D* դիմերի մակարդակը եղել է 500 *ng/mL*-ից բարձր (< 198 *ng/mL*), այսինքն՝ նորմայից զգալիորեն բարձր, ընդ որում, 60 դեպքերում հիվանդությունն ընթա-

ցել է ծանր: Ներկայումս համարվում է, որ *D* դիմերի էապես բարձր մակարդակը մահվան կանխատեսման ցուցիչներից է, և վերակենդանացման բաժանմունքում բուժման կարիք ունեցողների շրջանում այն միշտ նկատելիորեն բարձր է:

Հաստատված է նաև, որ *SARS-CoV-2* վիրուսով ծանր ախտահարումների ժամանակ թրոմբոցիտոպենիան հիվանդության ելքի տեսակետից անբարենպաստ ցուցանիշ է: Օրինակ՝ նշվում է, որ թրոմբոցիտների փոքր թիվը հնգապատիկ զուգորդվում է *COVID-19-ի* ծանր ընթացքի զարգացման ռիսկի հետ:

Սկզբնական շրջանում հրատարակված աշխատություններում նշվում էր, որ *COVID-19-ի* ձևաբանական հենքը ալվեոլների տարածուն վնասումն է: Այս տվյալները շարունակում են պահպանել իրենց արդիականությունը: Թոքերում վիրուսը կտրուկ մեծացնում է մազանոթների թափանցելիությունը՝ ուժեղացնելով արյան հունից ալբումինով հարուստ հեղուկի արտահոսքը թոքերի ինտերստիցիալ հյուսվածք և ալվեոլների խոռոչ, ինչի հետևանքով զարգանում է ինտերստիցիալ և ալվեոլային այտուց: Ընդ որում, սուրֆակտանտը քայքայվում է, ալվեոլները ենթարկվում են կոլապսի, թոքերը սմքում են, օդափոխանակման կտրուկ վատացման հետևանքով զարգանում է շնչառական դիստրես համախտանիշ:

Ներկայումս սրանցով սահմանափակվում են նոր կորոնավիրուսային վարակի ախտածագմանը վերաբերող հավաստի գիտական տվյալները:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *A. H. Jan Danser, M. Epstein, D. Batlle.* Renin-Angiotensin System Blockers and the COVID-19 Pandemic: At Present There Is No Evidence to Abandon Renin-Angiotensin System Blockers. “Hypertension”, June 2020, Vol. 75, Issue 6.
2. *Dominic Wichmann, Jan-Peter Sperhake, Marc Lütgehetmann, Stefan Steurer et al.* Autopsy Findings and Venous Thromboembolism in Patients With COVID-19: A Prospective Cohort Study. “Annals of Internal Medicine”, 18 August 2020, Vol. 173, N 4.
3. *S. Lukassen, R. L. Chua, T. Trefzer, N. C. Kahn et al.* SARS-CoV-2 receptor ACE2 and TMPRSS2 are primarily expressed in bronchial transient secretory cells. “The EMBO Journal”, May 2020, Vol. 39, Issue 10.
4. *Mart M. Lamers, Joep Beumer, Jelte van der Vaart, Kèvin Knoops et al.* SARS-CoV-2 productively infects human gut enterocytes. “Science”, July 2020, Vol. 369, Issue 6499.
5. *J. T. Ortega, M. L. Serrano, F. H. Pujol, H. R. Rangel.* Role of changes in SARS-CoV-2 spike protein in the interaction with the human ACE2 receptor: An *in silico* analysis. “EXCLI Journal, 2020, N 19.
6. *Renhong Yan, Yuanyuan Zhang, Yaning Li, Lu Xia et al.* Structural basis for the recognition of SARS-CoV-2 by full-length human ACE2. “Science”, March 2020, Vol. 367, Issue 6485.
7. *W. Sungnak, N. Huang, C. Bécavin, M. Berg et al.* SARS-CoV-2 entry factors are highly expressed in nasal epithelial cells together with innate immune genes. “Nature medicine”, May 2020, Vol. 26, N 5.

8. *F. L. van de Veerdonk, M. G. Netea, M. van Deuren, J. W. van der Meer et al.* Kallikrein-kinin blockade in patients with COVID-19 to prevent acute respiratory distress syndrome. “eLife”, 2020, Vol. 9 (https://elifesciences.org/articles/57555).

9. *Zsuzsanna Varga, Andreas J Flammer, Peter Steiger, Martina Haberecker et al.* Endothelial Cell Infection and Endotheliitis in COVID-19. “The Lancet”, May 2020, Vol. 395, Issue 10234.

**ВОЕННАЯ МЕДИЦИНА**

# НЕКОТОРЫЕ СУЖДЕНИЯ О НОВОЙ КОРОНАВИРУСНОЙ ИНФЕКЦИИ

*С. Г. ГАЛСТЯН, доктор медицинских наук, профессор, начальник Военно-медицинского учебно-научного центра ЕГМУ; А. С. КОЧАРЯН, кандидат медицинских наук, преподаватель кафедры военно-полевой терапии Военно-медицинского факультета ЕГМУ; А. А. АКОПЯН, преподаватель кафедры медицины чрезвычайных ситуаций Военно-медицинского факультета ЕГМУ; А. А. ТЕРТЕРЯН, преподаватель кафедры медицины чрезвычайных ситуаций Военно-медицинского факультета ЕГМУ; С. Л. ЗОРЬЯН, преподаватель кафедры военно-медицинской терапии Военно-медицинского факультета ЕГМУ*

РЕЗЮМЕ

В настоящее время мир переживает самую тяжелую пандемию за последние сто лет. Именно поэтому актуальнейшей задачей является изучение вируса *SARS-CoV-2* для четкого понимания этиологии COVID-19, механизма воздействия вируса *SARS-CoV-2* на организм человека и патогенеза его развития с целью разработки тактики профилактики и лечения.

Подробный анализ морфологии и биохимической структуры вируса *SARS-CoV-2*, его взаимодействия с организмом позволяет раскрыть тонкие механизмы и их морфофункциональные составляющие, которые дают возможность выработать правильную схему лечения.

**MILITARY MEDICINE**

# SOME JUDGMENTS ON THE NOVEL CORONAVIRUS INFECTION

*S. G. GALSTYAN, Doctor of Medical Sciences, Professor, Head, Military Medicine Scientific-Educational Center, YSMU; A. S. KOCHARYAN, PhD in Medicine, Lecturer, Chair of Military Field Therapy, Department of Military Medicine, YSMU; H. A. HAKOBYAN, Lecturer, Chair of Emergency Medicine, Department of Military Medicine, YSMU; A. A. TERTERYAN, Lecturer, Chair of Emergency Medicine, Department of Military Medicine,YSMU, S. L. ZORYAN, Lecturer, Chair of Military Field Therapy, Department of Military Medicine, YSMU*

SUMMARY

The world is currently experiencing the heaviest pandemic for the last century. That is why one of the most actual issues is the examination of the SARS-CoV-2 virus in order to better understand the etiology of the COVID-19, the scheme of the SARS-CoV-2 virus impact on the body and its pathogenesis with a view to develop the strategy for its prevention and treatment.

Such analysis of the morphology and biochemical structure of the SARS-CoV-2 virus, its interaction with the body allows to reveal the delicate mechanisms and their morphofunctional components, which make it possible to design a proper treatment regimen.

# ՊԵԼՈՊՈՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*Ն. Բ. ԵՆԻԿՈԼՈՊՈՎԱ, պահեստազորի մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան*



Անցյալի պատերազմներում կիրառված ռազմավարությունների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու ռազմարվեստի կատարելագործման օրինաչափությունները և դրա շնորհիվ ավելի լավ ըմբռնելու ժամանակակից պատերազմավարության զարգացման միտումները: Նման պատերազմներից է Պելոպոնեսյան պատերազմը (մ. թ. ա. 431–մ. թ. ա. 404 թթ.), որի մասին հայտնի անգլիացի ռազմական պատմաբան ու տեսաբան սեր Բ. Լիդել Հարտը գրել է, որ «Այդ քսանյոթամյա պատերազմի չափազանց տևականությունը և ոչ միայն հիմնական հակառակորդների, այլև ծախորդ, ձևականորեն չեզոք պետությունների սարսափելի հյուծումը կարող են բացատրված լինել անհետևողական և հաճախ անպտուղ ռազմավարությամբ, որին շատ անգամ երկու կողմն էլ հետևում էին»[1]:

Կարծում ենք, Պելոպոնեսյան պատերազմի ուսումնասիրությունը արդիական է նաև ինչպես միջազգային հարաբերությունների պատմության, այնպես էլ նեղ իմաստով «մեծ ռազմավարությունների»[*] ակունքների հետազոտման առումով:

Նշանավոր գերմանացի ռազմական տեսաբան Հանս Դելբրյուկը[2] առաջ է քաշել՝ հյուծման *(Ermattungsstrategie)* և ջախջախման (*Niederwerfungsstrategie*) մոդելները՝ մեծապես հենվելով հենց Պելոպոնեսյան պատերազմում Աթենքի և Սպարտայի որդեգրած ռազմավարությունների վրա:

---

[1] *Б. Г. Лиддел Гарт.* Стратегия непрямых действий. М., 2018, сс. 30–32:

[*] «Մեծ ռազմավարություն» («большая стратегия», “grand strategy”) հասկացությունը արևմտյան մասնագիտական գրականության և պաշտոնական փաստաթղթերում գործածվում է տարբեր իմաստներով: Այստեղ մենք այն գործածում ենք այն նեղ իմաստով, որով տվյալ տերմինն օգտագործում էր Լիդել Հարտը, այն է. «... մեծ ռազմավարության՝ ավելի բարձր ռազմավարության դերը պետության կամ պետությունների խմբի բոլոր ռեսուրսների համադասումը և ուղղորդումն է պատերազմի քաղաքական նպատակներին հասնելու համար, այն նպատակներին, որոնք սահմանում է հիմնարար քաղաքականությունը» (*B. Liddel Hart.* Strategy: the indirect approach. London, 1967, PP. 335–336):

[2] Տես *Г. Дельбрюк.* История военного искусства в рамках политической истории. В 7-и томах. СПб., 2015–2016:

Այդ մոդելների պատմական արժեւորումը ցայտուն կերպով ցուցադրում է, թե որքան կարևոր են ինչպես պատերազմի ռազմավարական ծրագրերի մշակումը, այնպես էլ հասարակության մեջ համախմբվածությունն ու կազմակերպվածությունը, որոնց անբավարարությունը Աթենքի համար դարձավ ճակատագրական:

Թեև ռազմավարության մոդել իր պետության համար ընտրում է տվյալ պետության քաղաքական ղեկավարությունը, այդուհանդերձ, երբ պատերազմում մի կողմն ընտրում է հարձակողական ռազմավարություն, մյուսը՝ պաշտպանողական և դրանք իրագործվում են միաժամանակ (մի կողմի հարձակում, մյուսի՝ պաշտպանություն), ապա մի կողմի նախընտրած ջախջախումը մյուս կողմին պարտադրում է դիմադրել ըստ ջախջախման տրամաբանության[3]:

Պելոպոնեսյան պատերազմի մասին ծավալուն պատմություն է մեզ ավանդել դրա մասնակից Թուկիդիդեսն իր նշանավոր «Պատմություն» աշխատության մեջ, որում նա ուսումնասիրում է պատերազմին դիմելու քաղաքական ու տնտեսական շարժառիթները, նկարագրում դրան անմիջականորեն առնչվող հասարակական-քաղաքական գործընթացները[4]:

Համաշխարհային պատմությունը վկայում է, որ ուժի ամենահզոր կենտրոնների միջև անխուսափելիորեն առաջանում են հակասությունների հանգույցներ, որոնց վերացումը հաճախ կատարվում է ռազմական ուժի կիրառմամբ[5], ինչը տեղի ունեցավ նաև Պելոպոնեսյան պատերազմի դեպքում Հունա-պարսկական պատերազմից հետո երկու հունական պետությունների երկու ամենախոշոր քաղաքական խմբավորումների՝ արիստոկրատական Սպարտայի գլխավորած Պելոպոնեսյան դաշինքի և ժողովրդավարական Աթենքի գլխավորած Դելոսյան դաշինքի միջև ծագած անհաշտ մրցակցություն Հունաստանում քաղաքական, տնտեսական և ռազմական գերիշխության համար:

**Պատերազմի պատճառները:** Այդ ժամանակներում Հունաստանում գոյություն ունեին երկու քաղաք-պետությունների ռազմաքաղաքական միություններ, որոնք իրարից տարբերվում էին իրենց դասակարգային կազմակերպվածքով, և դրանց միջև աճող քաղաքական, տնտեսական ու գաղափարական հակասությունները անխուսափելիորեն հանգեցնելու էին պատերազմի: Այդպիսով՝ պատերազմն ուներ լուրջ տնտեսական ու քաղաքական-գաղափարախոսական պատճառներ:

Տնտեսության բնագավառում Աթենքը և նրա դաշնակիցների մեծ մասը ձգտում էին ինտենսիվ ձևով զարգացնելու տնտեսությունը՝ շեշտը դնելով

[3] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Գ. Չ. Տավարածյան,* Մարտական գործողությունների տեղափոխում հակառակորդի տարածք. ռազմավարական դիտարկում: «ՀԲ», 2019, հմ. 1:

[4] Տես *И. В. Бочарников, С. В. Лемешев, Г. В. Люткене.* Современные концепции войн и практика военного строительства. М., 2013, с. 9:

[5] Տես *Д. В. Гордиенко.* Взаимосвязь войны, политики и экономики. Основы военной экономики. М., 2008, с. 5:

լայն ընդգրկմամբ արհեստագործական արտադրանքի, ապրանքային տնտեսության և առևտրի վրա: Սպարտան և նրա դաշնակիցները, ընդհակառակը, հիմնականում կենտրոնացած էին գյուղատնտեսության և կենսապահովման արտադրանքի վրա, իսկ արհեստներից շատ բարձր մակարդակի վրա էր զինագործությունը: Արևմտյան շուկան նվաճելու Աթենքի ցանկությունն սպառնում էր Պելոպոնեսյան միության մասնակից Կորնթոսի շահերին: Ապրանքային արտադրության աճումը հանգեցնում էր նաև առևտրային մրցակցության, ինչն ավելի էր սրում լարվածությունը:

Քաղաքական ոլորտում Աթենքի և Սպարտայի միջև հակասություններն էլ ավելի սուր էին: Այն ժամանակ, երբ Աթենքը հունական քաղաք-պետություններում (պոլիսներ) ակտիվորեն աջակցում էր ժողովրդավարական կողմնորոշում ունեցող խմբավորումներին, Սպարտան աջակցում էր արիստոկրատական և խմբիշխանական կողմնորոշմամբ ուժերին, այդ թվում և Աթենքի դաշնակից քաղաքներում: Մեծ նշանակություն ուներ նաև դաշնակիցների համար մղվող պայքարը: Օրինակ՝ Պերիկլեսի օրոք Աթենքի արտաքին քաղաքականությունը, որն արտահայտում էր ստրկատիրական ժողովրդավարության շահերը, զավթողական էր: Բայց դա արվում էր ի հաշիվ դաշնակիցների, ինչը խորացնում էր նրանց հետ հակասությունները[6]: Թուկիդիդեսի նոր ռուսերեն թարգմանության հեղինակ, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վլադիմիր Ստրոգեցկին շեշտում է, որ՝ «Հունաստանում գերազանցության, գերիշխանության համար լակեդեմոնացիների և աթենացիների միջև թշնամության ու առճակատման պատճառ էր այն արմատական տարբերությունը, որը գոյություն ուներ տվյալ (հասարակական-քաղաքական,– *Ն. Ե.*) հոսանքների ու դրանց հիմքում եղած այն քաղաքական ձևերի միջև, որոնք հենվում էին Պելոպոնեսյան և Աթենական ծովային միությունների նյութական հզորության վրա»[7]:

Թուկիդիդեսը գրում է. «Քանզի զստուգագոյն պատճառս՝ թէպէտ և բանիւ անյայտ, զԱթենացիս գիտեմ, որոնց մեծացեալ յոյժ և ահարկու Լակեդեմոնացւոց լեալ ստիպէին զնոսա 'ի պատերազմ»[8]:

Այս անհաշտելիությունը կապված էր նաև սուր տնտեսական մրցակցության հետ. Կորնթոսը Բալկանյան Հունաստանի հզոր առևտրական և արհեստագործական կենտրոն էր և կենսական շահեր ուներ հիմնականում հունական աշխարհի արևմուտքում՝ հարավային Իտալիայում և Սիկիլիա-

[6] Տես *Е. Разин.* История военного искусства. Гл. 2: «Военное искусство рабовладельческой Греции» (http://militera.lib.ru/science/razin_ea/1/02.html):

[7] *В. М. Строгецкий.* Полис и империя в классической Греции. Учебное пособие. Н. Новгород. М., 1991, с. 64.

[8] «Թուկիդիդեայ պատմութիւն Պելոպոնեսական մարտին»: Յեղեալ ի հայ Հ. Աբրահամու Ճարեան յուխտէն Մխիթարայ: Վենետիկ, ի տպարանի Ս. Ղազարու, 1887, գիրք Ա, էջ 17, ԻԳ («Քանի որ ստույգ պատճառը (թեպետ և տակավին ծածուկ), իմ կարծիքով, աթենացիների աճող ուժն էր, որը ահ էր ներշնչում լակեդեմոնացիներին, ինչն էլ նրանց ստիպեց դիմել պատերազմի»):

յում: Պելոպոնեսյան դաշինքի համար սպառնալիք էին Աթենքի նկրտումները վերահսկելու Կորնթոսի շուկաները և՛ արևմուտքում, և՛ արևելքում:

Վերը հիշատակված Հանս Դելբրյուկը Պելոպոնեսյան պատերազմի մասին գրում է. «Պելոպոնեսյան պատերազմն ունի բոլորովին այլ բնույթ, քան այդ (պարսկական– *Ն. Ե.*) պատերազմները: Պարսկական պատերազմներում գլխավոր հատկանիշը երկու հակառակորդների միջև զենքի և մարտավարության անհավասարությունն էր: Պելոպոնեսյան պատերազմում հույները մարտնչում են հույների դեմ. նրանց զենքերն ու մարտավարությունը համասեռ են, բայց առանձնահատուկ է այն, որ մի կողմը ծովում ունի նույնպիսի գերազանցություն, ինչպիսին մյուսը՝ ցամաքում: Սա սահմանում է ռազմավարական բնույթի բոլորովին նոր խնդիրներ»[9]:

Պատերազմի վարման մեթոդները պայմանավորվում էին Աթենքի և Սպարտայի ներքաղաքական վիճակով, պատերազմի նպատակներով ու բնույթով, զորքի կազմակերպվածքի առանձնահատկություններով և ծովում ու ցամաքում ուժերի հարաբերակցությամբ[10]: Պատերազմի կարևորագույն խնդիրներից մեկը, որն էլ վճռեց նրա ելքը, պայքարն էր դաշնակիցների և ծովում գերիշխանության համար:

**Սպարտայի ռազմավարական պլանը:** Սպարտայի ռազմավարական պլանը ձևակերպված է Արքիդամոսի խոսքում, որով նա դիմել է պելոպոնեսցիներին և դաշնակիցներին: Նա նշել է, որ իր հրամանատարության տակ գտնվող զորքերը հզորագույն բանակն են՝ «բազմամբոխ և ընտիր զորու»: Աթենացիները չեն կարող իրենց հակադրել նույնիսկ իրենց հոպլիտների թվի կեսից ավելին, և խելագարություն կլիներ, եթե նրանք փորձեին թշնամու դեմ պայքարել բաց դաշտում[11]: Այդուհանդերձ Սպարտան ձգտում էր հակառակորդին պարտադրելու վճռական ճակատամարտ ցամաքում: Լակեդեմոնացիները համարում էին, որ եթե ձեռնարկվեն ավերիչ արշավանքներ դեպի Ատտիկա, ապա աթենացիները կա՛մ կկատարեն սպարտացիների պահանջները, կա՛մ էլ ստիպված կլինեն մտնելու բաց ցամաքային ճակատամարտի մեջ:

**Աթենքի ռազմավարական պլանը:** Պերիկլեսի վարած քաղաքականությունը և մշակած ռազմավարությունը ճիշտ հասկանալու համար պետք է ամենից առաջ հաշվի առնել աթենական պետության առանձնահատկությունները, մի պետության, որի տնտեսության հիմքը առևտուրն ու այն հարկերն էին, որոնք Աթենքը գանձում էր իր դաշնակիցներից նրանց պաշտպանելու համար[12]: Հենց դրա վրա էլ կառուցվում էր Պերիկլեսի ռազմավարությունը. Ատտիկայի հողերը թողնել թշնամուն կեղեքման, և պատերազմի

---

[9] *Հ. Դելբրյուկ,* Նշ. աշխ, հ. 1, էջ 110:

[10] Տես *Ե. Ռազին,* Նշ. աշխ. (http://militera.lib.ru/science/razin_ea/1/02.html):

[11] Տես «Թուկիդիդեայ պատմութիւն Պելոպոնեսական մարտին», գիրք Բ, էջ 114–115, ԺԱ («ամենամեծ և համարձակ բանակը»):

[12] Տես *Ե. Ռազին,* Նշ. աշխ. (http://militera.lib.ru/science/razin_ea/1/02.html):

բարեհաջող ելքը ապահովել ծովում[13]: Այսպիսով՝ աթենացիները ջանում էին խուսափել ցամաքային ճակատամարտից՝ թշնամու տարածքում ձեռնարկելով արագընթաց ծովային ասպատակություններ:

Ըստ այդմ Պերիկլեսը խորհուրդ էր տալիս «...զամենայն ինչ զիւրեանս 'ի յագարակաց անտի 'ի ներքս 'ի քաղաքն ժողովել. ...: Զնաւական զօրութիւն՝ որով հզօրքն են, ամրապնդել, և յամենայնի հովանի պաշտպան կալ դաշնաւորաց, ...»[14]: Դա եղել է պլանի պաշտպանական մասը: Ըստ պլանի՝ պետք էր, օգտվելով ծովում ունեցած գերազանցությունից, ամայացնել Պելոպոնեսի ափերը և դրանով իսկ ստիպել Պելոպոնեսյան դաշինքին անձնատուր լինել[15]:

Պլանի իրականացման առավել խոցելի կողմն այն էր, որ զոհաբերվում էին գյուղացիների շահերը, նրանց ունեցվածքը ոչնչացվելու էր, ինչը առաջացնելու էր մեծ դժգոհություն: Արքիդամոսն այն պատճառով էր ամայացնում Ատտիկայի հողերը, որ Պերիկլեսի խմբավորմանը զրկեր մեծաթիվ գյուղացիության աջակցությունից, ինչը կնպաստեր Աթենքում իր կողմնակիցների հաջողությանը: Պլանի երկրորդ լուրջ թերությունն այն էր, որ նավատորմը պետք է առանց թշնամու տարածքում զորք ափհանելու և հենադաշտ գրավելու ձեռնարկեր Պելոպոնեսի պասիվ շրջափակում[16]:

Այսպիսով՝ «ռազմավարության առջև դրվեց նոր յուրահատուկ խնդիր՝ պատերազմը վարել առանց վճռական բախման, միայն հյուծման միջոցով»[17]: Սակայն պատերազմի ընթացքում փոխվեցին նաև պատերազմող կողմերի ռազմավարությունները, ինչը պայմանավորված էր նրանց ներքաղաքական և արտաքին քաղաքական վիճակի փոփոխություններով:

Ըստ էության, Պերիկլեսը ծրագրել էր ցամաքում գերիշխող պետության ձևական ծովային շրջափակում[18]: Այսպիսով՝ Պերիկլեսի նպատակն էր աստիճանաբար հյուծել հակառակորդին և նրան ներշնչել այն կարծիքը, թե նա երբևէ չի կարող հասնել հաղթանակի[19]:

Օբյեկտիվորեն, հաղթանակ տանելու աթենացիների հնարավորությունները շատ մեծ էին: Լիիրավ քաղաքացիների, այսինքն՝ զորակոչային տարիքի տղամարդկանց թիվը տատանվում էր 45-ից 60 հազարի սահ-

---

[13] Տես «Թուկիդիդեայ պատմութիւն Պելոպոնեսական մարտին», գիրք Ա, էջ 100–101, ՃԽԳ:

[14] Նույն տեղում, գիրք Բ, էջ 117, ԺԳ («...իրենց ամբողջ ունեցվածքը ագարակներից հավաքել քաղաքի ներսում. ...: Ամրապնդել նավատորմի ուժը, որով իրենք հզոր են, և ամեն կերպ հովանավորել դաշնակիցների պաշտպանվածությունը, ...»):

[15] Տես նույն տեղում, գիրք Ա, էջ 100–101, ՃԽԳ:

[16] Տես նույն տեղում, գիրք Բ, էջ 123–125, ԻԱ–ԻԲ:

[17] Տես *Հ. Դելբրյուկ,* Նշ. աշխ, h. 1, էջ 110:

[18] Տես *Б. Г. Лиддел Гарт.* Стратегия непрямых действий:

[19] Տես *Николас Хаммонд.* История Древней Греции (https://history.wikireading.ru/97291): Նաև՝ *Лоуренс Фридман.* Стратегия (война, революция, бизнес). М., 2019, сс. 47–48:

մաններում[20]: Բացի այդ, կային նաև մետեկներ* և դաշնակիցներ[21]: Այնուամենայնիվ, Պերիկլեսը մտադրություն չուներ թշնամու դեմ պայքարելու համար օգտագործելու դաշնակիցների ուժերը: Դրա պատճառը, թերևս, այն էր, որ Պերիկլեսն իսպառ բացառում էր պելոպոնեսցիների հետ մարտի բռնվելու հավանականությունը, իսկ դաշնակիցներին չներգրավելու հարցը, ինչպես երևում է նրա ելույթներից, նրա համար սկզբունքային հարց էր[22]:

Պերիկլեսի նման դիրքորոշումը, ամենայն հավանականությամբ, կարելի է բացատրել նրա ինքնավստահությամբ: Բայց մյուս կողմից՝ Պերիկլեսի դիրքորոշման մեջ արտահայտվում է նաև դաշնակիցների նկատմամբ նրա ունեցած անվստահությունը: Այդ անվստահությունը հիմնականում պայմանավորված էր այն բանով, որ դաշնակիցների նկատմամբ տիրապետությունն արդեն վերածվել էր բռնատիրության[23], և նրանք, Պերիկլեսի համոզմամբ, աթենացիների ցանկացած, անգամ փոքրագույն ռազմական ձախողում կարող էին օգտագործել իրենց անկախությունը վերականգնելու համար, ինչը կհանգեցներ Դելոսյան դաշինքի թուլացման[24]:

Դելբրյուկը Պերիկլեսի ռազմավարության մասին գրում է. «Ի՞նչը կլիներ պատերազմի այդպիսի վարման (կամ ավելի ճիշտ՝ «չվարման») արդյունքը: Իհարկե, արդյունքը չէր կարող լինել ջախջախիչ հարվածը: Խոսքը միայն այն մասին էր, թե ով ինչից կիրաժարվի ավելի շուտ, ով չի կարողանա դիմակայել տառապանքներին և կսպառվի զրկանքների ծանրության տակ»[25]: «Աթենքը շատ թույլ էր, որպեսզի կարողանար հաղթել մեծ ցամաքային ճակատամարտում: Սակայն հյուծման ռազմավարությունը հանգեցրեց նրան, որ աթենական զորավարները դարձան ավելի զգուշավոր և անվճռական»[26]: Աթենքում սկսում են բոլոր ռազմական անհաջողությունների և աղետների մեջ մեղադրել Պերիկլեսին: Այդ ամենի հետ մեկտեղ քաղաքում բռնկվում է ժանտախտի համաճարակ[27], և հենց Պերիկլեսը դառնում է դրա զոհը[28]:

---

[20] Տես *С. Г. Карпюк.* История Древней Греции (http://www.sno.pro1.ru/lib/karpyk_ lekzii_ po_istorii_grezii/10.htm):

* Մետեկներ (հուն. *Metoikos* - վերաբնակիչ) Հին Աթենքում՝ հիմնականում արհեստագործությամբ և առևտրով զբաղվող, հատուկ հարկ վճարող, քաղաքական և քաղաքացիական իրավունքներից զուրկ օտարերկրյա վերաբնակիչներ (Տես «Словарь иностранных слов». М., 1964, с. 402):

[21] Տես «Թուկիդիդեայ պատմութիւն Պելոպոնեսական մարտին», գիրք Բ, էջ 115–116, ԺԲ:

[22] Տես նույն տեղում, էջ 133–134, ԼԹ:

[23] Տես նույն տեղում, էջ 149–150, ԿԲ–ԿԳ:

[24] Տես նույն տեղում, գիրք Ա, էջ 100–101, ՃԽԳ:

[25] *Հ. Դելբրյուկ,* Նշ. աշխ, հ. 1, էջ 110–111:

[26] *Фукидид.* История. Пер. Г. А. Стратановского. СПб., 2018, сс. 649–650.

[27] Տես «Թուկիդիդեայ պատմութիւն Պելոպոնեսական մարտին», գիրք Բ, էջ 146–147, ԾԸ–ԾԹ:

[28] Տես նույն տեղում, էջ 152–153, ԿԵ:

Պերիկլեսի մահից հետո պառակտվեց ժողովրդավարական կուսակցությունը, որի վրա նա հենվում էր: Մի մասը՝ առավելապես հողատերերը, միացավ արիստոկրատիային, իսկ մյուս մասը ձևավորեց նոր, ավելի արմատական ժողովրդավարական խումբ, որը ղեկավարում էր արմատական ստրկատիրական ժողովրդավարության ներկայացուցիչ Կլեոնը[29]: Կլեոնի գլխավորած խումբը աթենական բանակից և նավատորմից պահանջում էր վճռական գործողությունների ձեռնարկում, ինչը նշանակում էր հրաժարում Պերիկլեսի ռազմավարական ծրագրից:

Աթենացիների վճռական գործողությունները պայքար էին ռազմավարական նախաձեռնության համար, որը պատերազմի առաջին փուլում սպարտացիների ձեռքում էր[30]: Լրամշակելով Պերիկլեսի ռազմավարական ծրագիրը՝ ռազմավարներ Դեմոսթենեսն ու Կլեոնը մ. թ. ա. 425 թ. Կարողացան նվաճել Սֆակտերիա կղզին և գերեվարել 420 սպարտացիների: Եվ միայն դրանից հետո լակեդեմոնացիները, խուսափելով նոր կորուստներից, դադարեցրին ավերիչ արշավանքները դեպի Ատտիկա[31]:

Այստեղ ակնհայտ է Աթենքի ռազմավարության բնույթի փոփոխությունը: Ճիշտ է, Պերիկլեսը հյուծման կողմնակից էր, սակայն, մյուս կողմից, մենք տեսնում ենք, որ միայն Պերիկլեսի որդեգրած ծրագիրը փոփոխելուց հետո Կլեոնը կարողացավ հաղթել Սֆակտերիա կղզում:

Ռազմավարական նախաձեռնության կորստով անհանգստացած՝ սպարտացիներն առաջ քաշեցին նոր ռազմավարական նպատակ՝ ռազմական գործողությունները տեղափոխել Թրակիայի ծովափ[32]: Դրա արդյունքը եղան մեծ ռազմավարական նշանակություն ունեցող աթենական Ամֆիպոլ քաղաքի գրավումը և երկու կողմերի ռազմավարների՝ Կլեոնի ու Բրասիդասի մահերը[33]: Սակայն սպարտացիների այս հաղթանակն ընդամենը մարտավարական հաջողություն էր, որը չէր կարող փոխել պատերազմի ընթացքը: Պատերազմի առաջին փուլն ավարտվեց, և երկու պատերազմող կողմերի հյուծման պատճառով կնքվեց այսպես կոչված Նիկիասյան հաշտությունը[34]:

Պատերազմի երկրորդ փուլի սկզբին Աթենքում սրվել էր արիստոկրատիայի և ժողովրդավարների միջև պայքարը, որը ցայտուն կերպով արտահայտվում էր Նիկիասի և Ալկիբիադեսի միջև ուժգնացող մրցակցությամբ: Պատերազմի այդ փուլում աթենացիների հիմնական ռազմավարական նպատակը ծովում իրենց ունեցած տիրապետության նյութականացումն էր: Աթենական նավատորմը պետք է ապահովեր նոր առաջադրված ռազմավարական նպատակի իրագործումը, այսինքն՝ աթենական ծովային դաշինքին ենթարկեր և միացներ սիկիլիական քաղաքները: Այս խնդիրը պետք է

[29] Տես նույն տեղում, գիրք Գ, էջ 212–213, ԼԶ:

[30] Տես *Ե. Ռազին,* Նշ. աշխ. (http://militera.lib.ru/science/razin_ea/1/02.html):

[31] Տես «Թուկիդիդեայ պատմութիւն Պելոպոնեսական մարտին», գիրք Դ, էջ 303–304, ԽԱ:

[32] Տես նույն տեղում, էջ 330–331, ՁԱ:

[33] Տես նույն տեղում, գիրք Ե, էջ 382–383, ԺԴ:

[34] Տես նույն տեղում, էջ 385–388, ԺԷ–ԺԸ:

կատարեր նոր ընտրված ռազմավար Ալկիբիադեսը, որը որպես գործիչ տարբերվում էր Պերիկլեսից ու Կլեոնից: Ըստ Թուկիդիդեսի՝ նա հաճախ էր փոխում իր քաղաքական դիրքորոշումը՝ իր անձնական շահերը վեր դասելով ընդհանուր շահերից[35]:

Լինելով Սպարտայի դեմ պատերազմի վերսկսման և դեպի Սիկիլիա մեծ արշավանքի կազմակերպման կողմնակից՝ նա հայտարարում է, որ եթե իրենք չիշխեն ուրիշների վրա, ապա ստիպված կլինեն ենթարկվել ուրիշներին, իսկ սպարտացիների ամբարտավանությունը կոտրելու համար պետք է ամրապնդեն իրենց դիրքերը Սիկիլիայում[36]: Ալկիբիադեսի այս որոշմանը դեմ էին շատերը, սակայն նա հասնում է հաջողության:

Արշավախմբի ծով դուրս գալուց առաջ Աթենքում տարածվեց մի լուր, թե գիշերը քաղաքի փողոցներում այլանդակել են Հերմես աստծո պատկերները: Այդ լուրն էական ազդեցություն գործեց պատերազմի հետագա ընթացքի վրա: Ալկիբիադեսի հակառակորդները, օգտվելով այդ առիթից, նրան մեղադրեցին սրբապղծության մեջ[37]: Ալկիբիադեսը պահանջեց հարցի հանգուցալուծում ժողովրդական ժողովում: Քանի դեռ նավախումբը չէր մեկնել, մեծամասնությունը նրան կողմ էր, և, հետևաբար, Ալկիբիադեսը կարող էր վստահ լինել, որ ժողովրդական ժողովը հարցը կլուծի իր օգտին: Դա հասկանում էին նաև նրա հակառակորդները, որոնք ժամանակավորապես հրաժարվեցին իրենց մեղադրանքից:

Աթենացիները բարեհաջող կերպով հասան Սիկիլիա, բայց կղզում քաղաքական իրադրությունը դասավորվեց ի վնաս նրանց. պարզվեց, որ նրանք այստեղ չունեն դաշնակիցներ: Սկզբնական հաջողություններից հետո Ալկիբիադեսին շուտով հետ կանչեցին Աթենք՝ կրոնական սրբապղծության մեջ մեղադրանքով: Ճանապարհին նա անցավ սպարտացիների կողմը և նրանց հայտնեց աթենացիների ռազմական ծրագրերը[38], ինչն էլ էապես նպաստեց Սիկիլիայում Աթենքի ջախջախիչ պարտությանը: Այդ պարտությունն անվանվեց «Սիկիլիական աղետ»: Ընդհանուր առմամբ, պատմության մեջ այս արշավանքի մասին ընդունված կարծիք է, թե Սիկիլիական արշավանքը եղել է մի անհիմն և անխոհեմ քայլ:

Սակայն այս արշավանքը կարելի է դիտել մեկ այլ տեսանկյունից ևս: Սրբապղծությանը վերաբերող այդ միջադեպը ճակատագրական ազդեցություն ունեցավ պատերազմի հետագա զարգացման և ելքի վրա: Մեր կարծիքով՝ հենց աթենական հասարակության պառակտվածությունը դարձավ Սիկիլիայում ջախջախիչ պարտության պատճառներից մեկը:

Կորցնելով գրեթե ամբողջ նավատորմը և քաղաքացիական աշխարհազորի առավել մարտունակ մասը՝ աթենացիները զրկվեցին դաշնակիցների նկատմամբ իրենց գերիշխանությունից: Սկսվեց Աթենական միության փլու-

[35] Տես նույն տեղում, գիրք Զ, էջ 460, ԺԵ:

[36] Տես նույն տեղում, էջ 463–465, ԺԸ:

[37] Տես նույն տեղում, էջ 469–470, ԻԷ–ԻԸ, նաև՝ *Плутарх.* Сравнительные жизнеописания. В 3-х томах, т. 1. М., 1961, сс. 283–285, XVIII-XIX:

[38] Տես «Թուկիդիդեայ պատմութիւն Պելոպոնեսական մարտին», էջ 516–517, Դ–ԴԱ:

զումը: Շատ կղզիներ և քաղաքներ, որոնք ժամանակին գտնվում էին աթենական գերիշխանության տակ, օգտվեցին հարմար առիթից և առանձնացան Աթենքից:

Սիկիլիական պարտությունն արմատապես փոխեց ուժերի հարաբերակցությունը: Պարսկական կայսրությունը, որը ջանք չէր խնայում, որպեսզի ձախողի հունական աշխարհի գերիշխանության հաստատումը, և շահագրգռված էր հունական պետությունները թուլացնող պատերազմի շարունակման մեջ, սպարտացիների խնդրանքով ֆինանսավորեց մեծ նավատորմի շինարարությունը: Դրան ի պատասխան՝ Սպարտան ճանաչեց փոքրասիական հունական քաղաքների նկատմամբ Պարսկաստանի իրավունքները և նրան անուղղակիորեն դարձրեց պատերազմի երրորդ կողմ: Այսպիսին էին աթենացիների համար սիկիլիական աղետի հետևանքները:

Պատերազմի վերջին փուլում սպարտացիները դիմեցին ջախջախիչ գործողությունների: Էգոսպոտամոսի ճակատամարտում հզորացած պելոպոնեսյան նավատորմը կարողացավ վերջնականապես պարտության մատնել աթենական նավատորմը: Դա նշանավորեց ոչ միայն աթենական նավատորմի, այլև աթենական ժողովրդավարության պարտությունը, մի ժողովրդավարություն, որի ստեղծման համար այդքան ուժ և հոգի էր ներդրել Պերիկլեսը: Աթենական աշխարհը ոչնչացավ, և Հունաստանում միակ առաջավար ուժը դարձավ Սպարտան:

Ուսումնասիրելով պատերազմը՝ հանգում ենք այն եզրակացության, որ Պերիկլեսը չի ունեցել որպես այդպիսին պատերազմում հաղթելու պլան: Չէ՞ որ հնարավոր չէր ձեռնարկել լայնածավալ ծովային արշավանքներ այնպիսի պայմաններում, երբ սպարտացիները անմիջականորեն սպառնում էին Աթենքին: Ընդսմին Պերիկլեսը, ի տարբերություն Արքիդամոսից, որն ուներ պատերազմ վարելու և ջախջախման, և հյուծման ծրագիր, չէր ծրագրում երկարատև պատերազմ[39]: Առավել ևս, որ այդ մեծ ծովային արշավանքները չէին կասեցնում սպարտացիների արշավանքները դեպի Ատտիկա: Սպարտացիներին կանգնեցնել հաջողվեց միայն ռազմավարական պլանը փոխելուց հետո:

Այնուամենայնիվ, որո՞նք էին Աթենքի անկման պատճառները: Ամենայն հավանականությամբ, դրանք բխում էին աթենական ժողովրդավարության անհետևողականությունից, ուժերի գերագնահատումից և դաշնակիցների նկատմամբ գերիշխանությունից, որը վերածվել էր բռնատիրության, ինչն էլ հանգեցրեց Դելոսյան միության թուլացմանը և դրա հետագա փլուզմանը: Ճիշտ է, Աթենքի պարտության հարցում մեծ դեր խաղաց Սպարտային Պարսկաստանի տրամադրած ֆինանսական օգնությունը, բայց հարկ է շեշտել նաև այն ազդեցությունը, որը պատերազմի ելքի վրա ունեցան սպարտացիների համախմբվածությունը, կազմակերպվածությունը և կարգապահությունը:

[39] Տես նույն տեղում, գիրք Ա, էջ 56, ՁԱ:

**ВОЕННАЯ ИСТОРИЯ**

# СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СТРАТЕГИЙ СТОРОН В ПЕЛОПОННЕССКОЙ ВОЙНЕ

*Н. Б. ЕНИКОЛОПОВА, майор запаса, ученый-аналитик Центра исследований истории военного искусства НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Существование в Греции двух разных по своему устройству и социально-политической ориентации военно-политических блоков греческих полисов и нарастание экономических противоречий между ними в 431 г. до н.э. привело к войне.

Каждая воюющая сторона разрабатывала планы ведения войны, исходя из структуры своих вооруженных сил: спартанцы стремились дать решительное сражение на суше, афиняне стремились этого избежать, избрав тактику быстрых морских набегов на неприятельскую территорию. В то же время стратегия воюющих сторон в различные периоды войны менялась в зависимости от соотношения классовых сил.

Принятые Афинами и Спартой методы ведения войны (стратегии измора и сокрушения) явились своеобразной моделью для исследования некоторых современных войн. Как историческая модель, она ясно демонстрирует важность как разработки стратегических планов войны, так и консолидированности и организованности общества, отсутствие которых стало фатальным для Афин.

**MILITARY HISTORY**

# COMPARATIVE ANALYSIS OF STRATEGIES OF THE PARTIES TO THE PELOPONNESIAN WAR

*N. B. YENIKOLOPOVA, Major (Ret.), Research Fellow, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA*

SUMMARY

In Greece the existence of two military-political blocs of the Greek city-states, different in their structure and social-political orientation, and the escalation of economic contradictions between them led to war in 431 B.C.

Each of the belligerent parties developed its own war scenario in accordance with the structure of its armed forces: the Spartans thrived to fight a pitched battle on land, while the Athenians would avoid it, having chosen the tactics of rapid sea invasions on the enemy's territory.

Conversely, at different stages of warfare the strategy of both parties in the war changed depending on the class-force balance.

The warfare methods (strategies of exhaustion and annihilation) adopted by Athens and Sparta have become a unique research model for certain contemporary wars. As a historical model, it vividly manifests the importance of both the strategic planning of warfare, and the consolidarity and good organization of the community, the lack of those being fatal for Athens.

# ՀԱՄԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ

*Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, լեյտենանտ,
Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր, Թ. Դ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, լեյտենանտ,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

## ՀԱՅԵՐԵՆ–ՌՈՒՍԵՐԵՆ–ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազատական գերիշխանություն – либеральная гегемония – liberal hegemony

ախտածագում – патогенез – pathogenesis

աղիքաբորբ – энтерит – enteritis

անհատապաշտական վարչակարգ – авторитарный режим – authoritarian regime

անորոշություն – неопределенность – uncertainty

– արտաքին անորոշություն – внешняя неопределенность – 1. external uncertainty, 2. foreign uncertainty

– ռազմավարական անորոշություն – стратегическая неопределенность – strategic uncertainty

անջատողականություն – сепаратизм – separatism

աշխարհակարգ – миропорядок – world order

– բազմաբևեռ աշխարհակարգ – многополярный миропорядок – multipolar world order

– բազմակենտրոն աշխարհակարգ – полицентричный миропорядок – policentric world order

ապագործառում – дисфункция – dysfunction

գերիշխանություն ծովում – տես *տիրապետություն ծովում*

գծային մարտակարգ – линейный боевой порядок – linear formation

գործողությունների արժեքաբանություն – аксиология действий – axiology of actions

«դարչնագույն ժանտախտ» – տես *ֆաշիզմ*

դիմաբախություն – տես *ընդհարում*

եզրահանում – маргинализация – marginalization

էթնիկական զտում – этническая чистка – ethnic cleansing

էտիոլոգիա – տես *պատճառագիտություն*

ընդդիմամարտություն – противоборство – counterfight

ընդհարում – стычка – skirmish

թաղանթային տեղափոխում – мембранный транспорт – membrane transport

ժողովրդագրական ծավալապաշտություն – демографическая экспансия – demographic expansion

ինտեգրային գործընթաց – 1. интегральный процесс, 2. интеграционный процесс – 1. integral process, 2. integration process

ինքնորոշումային հակամարտություն – самоопределительный конфликт – self-determination conflict

խորագնա ճեղքում – глубокий прорыв – long-range penetration, deep breakthrough

կրոնադավանական ընդհանրություն

– конфессиональная общность – religious commonality

կուտակիչ – аккумулятор, накопитель – accumulator

հակամարտաբանություն – конфликтология – conflictology

համակենտրոնացման ճամբար – концентрационный лагерь, концлагерь – concentration camp

համավարակ – пандемия – pandemic

համատեղայնացում – глокализация – glocalization

համընդհանրացում – глобализация – globalization

հայատեցություն – арменофобия – Armenophobia

հայեցակարգայնացում – концептуализация – conceptualization

հետադարձ մակածություն – обратная индукция – backward induction

«մահվան ֆաբրիկա» – «фабрика смерти» – “death factory”

մարտի մեջ պահուստի զորամուտ – ввод в сражение резерва – introducing reserve into battle

միահեծան տիրապետություն – единовластное господство – 1. monocratic rule, 2. monocratic supremacy

պաթոգենեզ – տես *ախտածագում*

պանդեմիա – տես *համավարակ*

պաշարիչ – տես *կուտակիչ*

պատերազմավարություն – տես *պատերազմի վարում*

պատերազմի վարում – ведение войны – warfare, conduct of war

պատճառագիտություն – этиология – etiology

ռազմավարություն – стратегия – strategy

– հյուծման ռազմավարություն – стратегия измора, стратегия изнурения – strategy of attrition, attrition strategy, strategy of exhaustion, exhaustion strategy

– մոլորեցման ռազմավարություն – стратегия введения в заблуждение – strategy of deception, deception strategy

– ջախջախման ռազմավարություն – стратегия сокрушения –strategy of annihilation, annihilation strategy

վերադիրքավորում – передислокация – relocation

տարածական համաչափություն – пространственная симметрия – space symmetry

տեղեկույթի հավաստիություն – достоверность информации – credibility of information, reliability of information

տիրապետություն ծովում – господство на море – command of the sea, sea control

փառավորության գագաթնակետ – апогей величия – apogee of greatness

քաղաքակրթությունների բախում – столкновение цивилизаций – clash of civilizations

քարտեզագրական պատերազմ – картографическая война – cartographic war

օտարատեցություն – ксенофобия – xenophobia

ֆաշիզմ – фашизм, «коричневая чума» – fascism, “the brown plague”

## ՌՈՒՍԵՐԵՆ–ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

авторитарный режим – անհատապաշտական վարչակարգ

аккумулятор – կուտակիչ, պաշարիչ

аксиология действий – գործողությունների արժեքաբանություն

апогей величия – փառավորության գագաթնակետ

арменофобия – հայատեցություն

ввод в сражение резерва – մարտի մեջ պահուստի զորամուտ

ведение войны – պատերազմի վարում, պատերազմավարություն

глобализация – համընդհանրացում

глокализация – համատեղայնացում

глубокий прорыв – խորագնա ճեղքում

господство на море – տիրապետություն ծովում, գերիշխանություն ծովում

демографическая экспансия – ժողովրդագրական ծավալապաշտություն

дисфункция – ապագործառում

достоверность информации – տեղեկույթի հավաստիություն

единовластное господство – միահեծան տիրապետություն

интегральный процесс – ինտեգրային գործընթաց

интеграционный процесс – ինտեգրային գործընթաց

картографическая война – քարտեզագրական պատերազմ

конфессиональная общность – կրոնադավանական ընդհանրություն

конфликтология – հակամարտաբանություն

концентрационный лагерь – համակենտրոնացման ճամբար

концептуализация – հայեցակարգայնացում

концлагерь – см. *концентрационный лагерь*

«коричневая чума» – см. *фашизм*

ксенофобия – օտարատեցություն

либеральная гегемония – ազատական գերիշխանություն

линейный боевой порядок – գծային մարտակարգ

маргинализация – եզրահանում

мембранный транспорт – թաղանթային տեղափոխում

миропорядок – աշխարհակարգ

– многополярный миропорядок – բազմաբևեռ աշխարհակարգ

– полицентричный миропорядок – բազմակենտրոն աշխարհակարգ

накопитель – см. *аккумулятор*

неопределенность – անորոշություն

– внешняя неопределенность – արտաքին անորոշություն

– стратегическая неопределенность – ռազմավարական անորոշություն

обратная индукция – հետադարձ մակածություն

пандемия – համավարակ, պանդեմիա

патогенез – ախտածագում, պաթոգենեզ

передислокация – վերադիրքավորում

пространственная симметрия – տարածական համաչափություն

противоборство – ընդդիմամարտություն

самоопределительный конфликт – ինքնորոշումային հակամարտություն

сепаратизм – անջատողականություն

столкновение цивилизаций – քաղաքակրթությունների բախում
стратегия – ռազմավարություն
– стратегия введения в заблуждение – մոլորեցման ռազմավարություն
– стратегия измора – հյուծման ռազմավարություն
– стратегия изнурения – см. *стратегия измора*
– стратегия сокрушения – ջախջախման ռազմավարություն
стычка–ընդհարում, դիմաբախություն
«фабрика смерти» – «մահվան ֆաբրիկա»
фашизм – ֆաշիզմ, «դարչնագույն ժանտախտ»
энтерит– աղիքաբորբ
этиология – պատճառագիտություն, էտիոլոգիա
этническая чистка – էթնիկական զտում

## ԱՆԳԼԵՐԵՆ–ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

accumulator – կուտակիչ, պաշարիչ
apogee of greatness – փառավորության գագաթնակետ
Armenophobia – հայատեցություն
authoritarian regime – անհատապաշտական վարչակարգ
axiology of actions – գործողությունների արժեքաբանություն
backward induction – հետադարձ մակածություն
cartographic war – քարտեզագրական պատերազմ
clash of civilizations – քաղաքակրթությունների բախում
command of the sea – տիրապետություն ծովում, գերիշխանություն ծովում
concentration camp – համակենտրոնացման ճամբար
conceptualization – հայեցակարգայնացում
conduct of war – see *warfare*
conflictology – հակամարտաբանություն
counterfight – ընդդիմամարտություն
credibility of information – տեղեկույթի հավաստիություն
"death factory" – «մահվան ֆաբրիկա»
deep breakthrough – see *long-range penetration*
demographic expansion – ժողովրդագրական ծավալապաշտություն
dysfunction – ապագործառում
enteritis – աղիքաբորբ
ethnic cleansing – էթնիկական զտում
etiology – պատճառագիտություն, էտիոլոգիա
fascism – ֆաշիզմ, «դարչնագույն ժանտախտ»
globalization – համընդհանրացում
glocalization – համատեղայնացում
integral process – ինտեգրային գործընթաց
integration process – ինտեգրային գործընթաց
introducing reserve into battle – մարտի մեջ պահուստի զորամուտ
liberal hegemony – ազատական գերիշխանություն
linear formation – գծային մարտակարգ
long-range penetration – խորագնա ճեղքում
marginalization – եզրահանում
membrane transport – թաղանթային

տեղափոխում
monocratic rule – միահեծան տիրապետություն
monocratic supremacy – միահեծան տիրապետություն
pandemic – համավարակ, պանդեմիա
pathogenesis – ախտածագում, պաթոգենեզ
reliability of information – see *credibility of information*
religious commonality – կրոնադավանական ընդհանրություն
relocation – վերադիրքավորում
sea control – see *command of the sea*
self-determination conflict – ինքնորոշումային հակամարտություն
separatism – անջատողականություն
skirmish – ընդհարում, դիմաբախություն
space symmetry – տարածական համաչափություն
strategy – ռազմավարություն
– annihilation strategy – see *strategy of annihilation*
– attrition strategy – see *strategy of attrition*
– deception strategy – see *strategy of deception*
– exhaustion strategy – see *strategy of attrition*
– strategy of annihilation – ջախջախման ռազմավարություն
– strategy of attrition – հյուծման ռազմավարություն
– strategy of deception – մոլորեցման ռազմավարություն
– strategy of exhaustion – see *strategy of attrition*
“the brown plague” – see *fascism*
uncertainty – անորոշություն
– external uncertainty – արտաքին անորոշություն
– foreign uncertainty – արտաքին անորոշություն
– strategic uncertainty – ռազմավարական անորոշություն
warfare – պատերազմի վարում, պատերազմավարություն
world order – աշխարհակարգ
– multipolar world order – բազմաբևեռ աշխարհակարգ
– policentric world order – բազմակենտրոն աշխարհակարգ
xenophobia – օտարատեցություն

## Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ – գլխավոր խմբագրի տեղակալ՝
*Ջ. Դ. Ասատրյան*

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*

Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի,*
*Դ. Ս. Չիլինգարյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի,*
*Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի,* ՀՀ ՊՆ Տեղեկատվության
և հասարակայնության հետ կապերի վարչության և համացանցային

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայքը՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2020 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում



Խորհրդակցություն Արցախի Հանրապետության դեմ
ադրբեջանական ագրեսիայի հետմղման հարցով

ձախից աջ. Արցախի Հանրապետության Նախագահ *Արայիկ Հարությունյան,*
ՀՀ Պաշտպանության Նախարարության Ռազմական վերահսկողության
ծառայության պետ, գեներալ-գնդապետ *Մովսես Հակոբյան,*
Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղար
*Սամվել Բաբայան,* ՀՀ Պաշտպանության նախարար *Դավիթ Տոնոյան*
և այդ ժամանակ Արցախի Հանրապետության Պաշտպանության նախարար–
Պաշտպանության բանակի հրամանատար գեներալ-մայոր
*Ջալալ Հարությունյան* (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս)

Արցախ, 2020 թ. սեպտեմբերի 28



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 3 (105). 2020